

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



ՔՐԵԱԿԱՆ («ԳՈՂԱԿԱՆ») ԽՈՍՎԱԾՔԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ
ԲԱՌԱՐԱՆ

Ադասի Թադևոսյան

Նիկոլ Մարգարյան

Անժելա Ավագյան

ԵՐԵՎԱՆ 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս բառարանը նվիրված է առաջին հայացքից մի փոքր անսովոր խնդրի լուծման: Խոսքը վերաբերում է քրեական միջավայրում հայտնի «գողական» լեզուն կազմող բառերի ու հասկացությունների բացատրությանը: Բառարանի ստեղծման գաղափարը պայմանավորված է այն իրողությամբ, որ «գողական» լեզուն ընկած է ոչ միայն բուն քրեական աշխարհի մասը կազմող գողական ենթամշակույթի հիմքում, այլ՝ ներթափանցել է հասարակական կյանք և էական դեր է խաղում հատկապես դեռահաս ու երիտասարդ տղաների փոխհարաբերություններում: Այն նաև շոշափելի ազդեցություն ունի թաղային ու բակային տարածքներում հանրային միջավայրերի ձևավորման ու տղաների սոցիալիզացման գործում: Գաղտնիք չէ, որ Հայաստանում երեխաների սոցիալիզացիան, հատկապես տղա երեխաներինը, տեղի է ունենում բակային ու թաղային միջավայրերում: Այդ առումով շատ կարևոր է հասկանալ, թե ինչ լեզվով են հաղորդակցվում բակում ու թաղում, ում է այդ լեզուն վերապահում լիդերության դերը և ինչ է այդ լիդերությունը սերմանում իր միջավայրում, ինչ պրակտիկաներ են ծնվում այդ լեզվից:

Խնդիրն այն է, որ «գողական» լեզուն արդեն տասնամյակներ շարունակ թելադրող դեր ունի թաղային միջավայրում: Իհարկե ներթափանցելով թաղային փոխհարաբերությունների ոլորտ, այն որոշակի փոփոխությունների է ենթարկվել և ենթարկվում: Շատ հասկացություններ՝ «պանյատներ», որոնք կազմում են «գողական» լեզվի ողնաշարը, թաղային միջավայրերում որոշակի իմաստափոխումների են ենթարկվում: Մեղմանում է դրանց խստապահանջության աստիճանը, քանի որ թաղային միջավայրում «գողական» լեզուն հայտնվում է ոչ բանտային պայմաններում, սոցիալական բոլորովին այլ կառուցվածքում, որտեղ կարգավիճակները շատ տարբեր են, տարբեր են նաև մարդկանց կյանքի նպատակները, ռազմավարություններն ու դրանց հասնելուն ուղղված մարտավարությունները: Չնայած նշված հանգամանքին, «գողական» լեզուն լուրջ ազդեցություն ունի տղա երեխաների, հատկապես դեռահասության ու վաղ երիտասարդության տարիքային խմբերի միջավայրում «տղամարդկության» պատկերացումների, պատժի ու արժանապատվության ընկալումների, ընօրինակման օբյեկտների, հասարակական վարքի, քաղաքացիական կեցվածքի ու դիրքավորման, վարքագծային բարոյությունների, աշխարհընկալման ու արժեքների ձևավորման գործընթացի վրա: Նույնիսկ այն տղաները, ում համար միանշանակ ընդունելի չեն «գողական» հասկացությունները, ստիպված են եղել ընդօրինակել արտահայտություններ ու պրակտիկաներ, որոնք անհրաժեշտ են թաղային միջավայրում ընդունելի դիրք ունենալու համար:

Միջավայրի փոփոխության հետևանքում «գողական» լեզվում գործածվող շատ բառերին բնորոշ իմաստները ոչ միայն ձևափոխվում են և համեմատաբար ձեռք բերում մեղմ ու կոմպրոմիսային իմաստներ, այլ երբեմն ընդհանրապես իմաստափոխվում են ու ձեռք բերում աշխարհիկ իմաստներ: Հաճախ, այդ փոխակերպումների արդյունքում «գողական աշխարհում» բառի հետ նույնականացվող իմաստները ոչ միշտ են համընկնում առօրյա աշխարհի իմաստներին: Ավելին, առօրեական աշխարհում նույն հասկացությունը տարբեր

սերնդի բանասացների շրջանում տարբեր մեկնաբանություններ կարող է ունենալ: Այդ բազմանշանակությունների մեջ ընթերցողին չիսճճելու նպատակով, բառերի բացատրությունները հավելվել են ծանոթագրություններով, դրանց ծագմանը, պատմությանն ու կիրառությանը վերաբերող որոշակի տեղեկություններով: Այսինքն, այս բառարանը, զուտ բառերի բացատրությանը, ծագումնաբանությանը ու ստուգաբանությանը նվիրված բառարան չէ: Կարելի է ասել, այն պարզապես զուտ բառարան չէ, այլ նաև հետազոտություն, որը մեզ կօգնի հասկանալ, թե ինչպես է ազդում թաղային միջավայրերում «գողական» լեզվի տարածվածությունը հասարակական հարաբերությունների բնույթի վրա, ինչ խնդիրներ ու մարտահրավերներ է այն ստեղծում մեր հասարակական ու պետական կյանքում:

Ինչպես արդեն նշվեց, բառարանում տեղ գտած բառերը զուտ քրեական կամ նեղ առումով «գողական» միջավայրում օգտագործվող հասկացություններ ու արտահայտություններ չեն: Դրանք մեծ մասամբ բառեր են, որոնք ծանոթ են ազատության մեջ գտնվող և երբևէ չազատագրված մարդկանց: Այդ բառերը շատերը հաճախ գործածել ու ներկայում էլ գործածում են ամենօրյա միջանձնային, ընկերական, հարևանական, նույնիսկ գործնական ու աշխատանքային տարաբնույթ հարաբերություններում: Արտառոց կարող է հնչել, բայց մեր պետության ձևավորման առաջին տարիներից, 1990-ականներից ընդհուպ մինչև վերջին ժամանակները, մենք բազմիցս առիթներ ենք ունեցել նույնիսկ պետության դեմքը հանդիսացող օրենսդիր բարձրագույն պետական մարմնում, ԱԺ-ում լսել ու ականատեսը լինել այդ ենթամշակույթին բնորոշ բազմաթիվ արտահայտությունների ու վարքագծի դրսևորումների: Ավելին, հատկապես 1998-2018 թթ. միջակայքում թաղային հեղինակությունները որոշիչ դերակատարություն էին իրականացնում քաղաքական ընտրությունների արդյունքների վրա ազդելու գործում: Նրանցից որոշները նույնիսկ հայտնվեցին երկրի խորհրդարանում, դարձան թաղապետներ ու քաղաքապետներ: Գրանցված հետազոտական որակական տվյալները թույլ են տալիս ասել, որ բազմիցս են եղել դեպքեր, երբ նրանց, նրանց հարազատների ու բարեկամների մասնակցությամբ վեճեր ու բախումներ լուծվել են հենց ուսումնասիրված ենթամշակույթին բնորոշ լեզվի, հասկացությունների ու պրակտիկաների գործադրմամբ: Այսինքն, «գողական» լեզվին նվիրված այս բացատրական բառարանի նշանակությունը դուրս է զուտ քրեական միջավայրում դրա դերակատարման խնդրի շրջանակներից ու ունի լայն սոցիոմշակութային համատեքստ:

Կարևոր հանգամանք է նաև այն, որ դիտարկվող երևույթը վերաբերում է ոչ թե կարճատև ժամանակամիջոցի, այլ մի ամբողջ պատմական հասարակարգի (խորհրդային սոցիալիզմի), որը վերապրել են մի քանի սերունդներ և որի ազդեցությունը ակնհայտ է նաև այն չվերապրած ներկայիս սերունդի մեջ:

Նկատի առնելով վերն ասվածը, կցանկանայինք ընդգծել, որ սույն բառարանի ստեղծումը հետապնդել է ոչ միայն բացառապես լեզվաբանական, բառարանագիտական կամ բառաբանագիտական խնդիրներ, այլև սոցիոմշակութային, մարդաբանական և լայն առումով հասարակագիտական նպատակ: Նշված մոտեցումը նկատելի է ինչպես բառահոդվածների բովանդակության, այլև բուն բառարանին ուղեկցող վերլուծական հոդվածներում, որոնցում

քննարկվում են «գողական» լեզվի ծագման, առօրյա կյանք դրա ներթափանցվածության և հասարակական պրակտիկաների վրա ազդեցության հանգամանքները:

Մեր բանասացներից ու փորձագետներից շատերի վկայությամբ, վերջին 5-6 տարիներին մեր հանրային տարածքներում զգալի չափով նվազել է «գողական» լեզվի ու պրակտիկաների ազդեցությունը: Առօրյա հարաբերություններում նշված ենթամշակույթին բնորոշ լեզվական ու վարքագծային պրակտիկաների գործադրմամբ որոշակի խնդիրների լուծումը գնալով դառնում է ավելի ու ավելի հազվադեպ հանդիպող երևույթ: Հետազոտությունը թույլ են տալիս նկատել, որ ՀՀ անկախության շրջանում քաղաքացիական կյանքում և առօրյա հարաբերություններում այդ ենթամշակույթի տարածվածությունը ունեցել է պասիվության և ակտիվության ժամանակահատվածներ՝ պայմանավորված առաջին հերթին քաղաքական որոշակի կոնյուկտուրային ու իրավիճակային փոփոխություններով:

«Գողական» ժարգոնին քիչ թե շատ ծանոթ ընթերցողին հավանաբար տարօրինակ չի թվա, որ բառարանում ներկայացվող բառերի մեծ մասը ռուսերենից կամ ռուսականացված փոխառություններ են: Իվերջո քննարկվող քրեական երևույթը ԽՍՀՄ օրոք և առավելապես ռուսաստանյան կալանավայրերում ձևավորված ֆենոմեն է և դրանց ազդեցությամբ տարածում է գտել առանձին խորհրդային հանրապետություններում և ինքնավար մարզերում: Հայերենում ռուսերենից փոխառված ժարգոնային բառերի մի մասը փոխառվել և օգտագործվում է հենց բնօրինակ տարբերակով, ինչպես՝ *արիժնիկ, արշագ, բես, բոռզի, գապաղո, շեստյորկա, ռազբորկա և այլն*: Բառերի ու արտահայտությունների մի մասն էլ ձևավորվել են փոխառված ռուսերեն բառերի հայերենացումը հայերեն բայերի ավելացման միջոցով, ինչպես ասենք՝ *արառոտկա ֆոսայ, արուշատ լինել, ասյոտ տալ, գոհմիտ անել, դակագատ անել, գռուզիտ անել, սպոտս անել* և այլն: Որոշ դեպքերում, երբ խոսքը հոգնակի թվով երևույթ նկարագրելու մասին է, փոխառված բառին ավելացվում է հայերեն հոգնակիի՝ *եք* վերջածանցը՝ *ժոռկեք, դումկեք, վնուշկեք* և այլն: Հայերենի հնչյունային համակարգի առանձնահատկություններով, ինչպես նաև արտաբերման որոշակի դժվարություններով պայմանավորված, փոխառված մի շարք բառերը ենթարկվել են տառադարձման, ինչպես օրինակ *обязаловка - արիզալովկա, зачухарить - զաչումարիտ, магдавошка - մանդալոշկա*: Բառանարում ներկայացված բառերի մի մասը ռուսերեն ժառգոնային տարբերակների թարգմանություններ են. *բեննալ - грузить, գործ կարել - шить дело, կեղտ բռնել - поймать пятно, ջոկոդ - пугебый*: Կան նաև զուտ հայաստանյան քրեական լեզվում ծնունդ առած բառեր և արտահայտություններ. *գործ տվող, դնել վզին, թավան, քյոլել, դումար, կտել, կուտ տալ, կաթացնել, կպնել, կթել, կզցնել, քույրիկ, փուռը տալ, բերդի պուծյովկա, զոն նայող, կիշկի մենած* և այլն: Վերջին խումբ բառերը կարելի է ասել, սույն բառարանի արժանիքներից մեկն է, քրեական ենթամշակույթի բառարանների հրատարակման պատմության մեջ, առաջին անգամ են հանվում շրջանառության ասպարեզ:

Չնայած այն հանգամանքին, որ գողական ժարգոնը և դրա հասկացությունները լայնորեն ներառվել և կիրառվել են ամենատարբեր բնույթ ունեցող հասարակական հարաբերություններում և ներկայում նույնպես, շարունակում են գործառնվել, այս երևույթը չի կարևորվել ու դարձել հետազոտության առարկա: Այս բառարանի ծնունդը

պայմանավորած հետազոտությունը նման առաջին փորձն է, որը թույլ կտա ոչ միայն ունենալ մեր կյանքում լայն տարածում ունեցող մի երևույթի վերաբերյալ բացատրական բառարան, այլ նաև փրկել ու արխիվավորել այդ ենթամշակույթը ներկայացնող լեզվի արդեն մոռացության մատնվող շատ բառեր ու արտահայտություններ: Խնդիրն այն է, որ անկախությունից հետո ռուսական բանտային միջավայրից հայկականի առանձնացումը բերել է նրան, որ աստիճանաբար կիրառությունից դուրս են գալիս ու մոռացվում շատ բառեր ու արտահայտություններ, որոնք բանագիտական ու մարդաբանական կարևորություն ունեն:

Բառարանը կազմվել է ազգագրական մեթոդով գրանցված դաշտային հետազոտական նյութերի հիման վրա: Իրականացվել է 45 խորացված և 10 փորձագիտական հարցազրույց: Խորացված հարցազրույցներից յուրաքանչյուրը տևել է միջինը 2.5 ժամ: Խորացված հարցազրույցներից առաջին տասը նվիրվել են բառերի նախնական ցանկը դուրս բերելու նպատակով, որից հետո արդեն առանձնացված շուրջ 350 բառից կազմված բառացանկի յուրաքանչյուր բառի բացատրությունը ճշգրտվել և քննարկվել է ամեն առանձին վերցրած բանասացի հետ հարցազրույցի միջոցով: Բացի բառերի բացատրությունները, բանասացներից գրանցվել են նաև որակական տվյալներ բառերի ու հասկացությունների կիրառման առանձնահատկությունների և «գողական» լեզվի ձևավորած վարքագծային պրակտիկաների վերաբերյալ: Խորացված հարցազրույցներից քսանը իրականացվել են ՔՀԿ-ներում ազատազրկման ենթարկված բանտարկյալների հետ, իսկ 15-ը Երևան և Գյումրի քաղաքների թաղամասերում՝ «գողական» ենթամշակույթի հետ առնչված անձանց միջավայրում: Ընտրանքի մյուս կարևոր չափանիշը եղել է սերնդային գործոնը: Ընտրվել են 18–30, 31–50, 51-ից բարձր տարիքային խմբերի ներկայացուցիչներ: Բանասացների ընտրության մեկ այլ չափանիշ էլ եղել է նրանց սոցիալմասնագիտական պատկանելության գործոնը:

Փորձագիտական հարցազրույցների համար ընտրվել է երկու խումբ փորձագետներ: Առաջին խումբը կազմել են նրանք, ովքեր ունեն ազատազրկման վայրերում դատապարտվածների հետ աշխատելու պրակտիկ փորձ: Երկրորդ խումբը ներկայացրել են այն փորձագետները, ովքեր ունեն հիմնախնդրին վերաբերող հետազոտական փորձ: Փորձագետների հետ հարցազրույցների միջոցով գրանցվել են նյութեր կապված «գողական» լեզվի ձևավորած վարքաբանական առանձնահատկությունների և թաղային միջավայրում դրանց ազդեցության վերաբերյալ:

Դաշտային աշխատանքների հիման վրա առանձնացվել է 350 բառից կազմված նախնական բառացանկ, որից աշխատանքների երկրորդ փուլում դուրս են բերվել 200-ը, բառարանի հիմնական բառացանկը կազմելու համար: Հարցումների երկրորդ փուլում իրականացվել է այդ 200 բառերի բացատրությունների խորացումն ու ճշգրտումը:

Գրանցված հետազոտական նյութերի ընդհանրացումն ու բառացանկի ձևավորումն իրականացվել է մի շարք սկզբունքների հաշվառման հիման վրա: Նախ, կարևորվել է, որ բառացանկում ընդգրվեն այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք ներկայացնում են ենթամշակույթի ձևավորման ու զարգացման տարբեր ժամանակաշրջաններ: Դրա նպատակը եղել է այն, որ բառացանկում արտացոլված լինեն հին, միջին և նոր սերնդի բառերն ու

արտահայտությունները և ժամանակագրական տեսանկյունից ենթամշակույթի լեզուն հնարավորինս ներկայացուցչական և ընդգրկուն լինի: Երկրորդը, կարևորություն է տրվել նաև այն բառերին, որոնք մոռացվող են ու շրջանառությունից կա՛մ դուրս են եկել ընդհանրապես, կա՛մ գործածվում են միայն ավագ սերնդի կողմից ու դատապարտված են լեզվի ակտիվ կիրառումից դուրս մղման: Նման բառերը ունեն պատմական ու արխիվային նշանակություն ենթամշակույթի լեզվի ուսումնասիրման տեսանկյունից: Բառացանկի ընտրության մեջ հաշվի են առնվել նաև նորամուծությունները, որոնք լեզվի մեջ են մտել Հայաստանի անկախության ձեռք բերումից հետո: Կարևոր սկզբունքներից է եղել նաև օտար, հիմնականում ռուսական քրեական լեզվից փոխառությունները, մաքուր հայկական ծագման բառերը ու հայկականացված փոխառությունները: Մեկ այլ սկզբունք էլ եղել է այն, որ ընտրվել են ինչպես զուտ քրեական միջավայրում, այնպես էլ թաղային միջավայր ու առօրյա խոսակցություն ներթափանցած բառեր ու արտահայտություններ:

Բառարանի վրա իրականացվող աշխատանքներին ու նաև վերլուծության իրականացմանը մեծապես նպաստել են նաև գրավոր աղբյուրների ուսումնասիրությունը՝ տարբեր բառարանների, այլ, հատկապես, հետխորհրդային տարածքի հասարակություններում քրեական լեզվի ու ենթամշակույթի վերաբերյալ իրականացված հետազոտությունները: Կարևոր հետազոտական աղբյուր է եղել նաև տեսանյութերի ու քրեական աշխարհին վերաբերող ֆիլմերի ու դրանցում կիրառվող բառապաշարի հետազոտումը:

Իրականացված աշխատանքի արդյունքում ձևավորվել և ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում շուրջ 200 բառանոց մի բառարան, որտեղ ներառված են քրեական («գողական») լեզվից ընտրված բառերի մի մասը միայն: Այն չի ընդգրկում այդ լեզվի ողջ բառապաշարը և, ըստ էության, սկիզբն է այս ոլորտում հնարավոր նոր հետազոտությունների, որոնց միջոցով այս բառարանը հետագայում կարող է լրացվել ու հարստացվել նոր բառերով ու արտահայտություններով:

Բառարանի վերնագիրը, որտեղ *քրեական* բառի կողքին փակագծերում ավելացված է «գողական» արտահայտությունը, հատուկ նշանակություն ունի: Այն խոսում է այն մասին, որ քրեական աշխարհը շատ ավելի լայն է, իսկ այս բառարանը վերաբերում է դրա առանցքը կազմող «գողական» կոչվող հատվածի լեզվին: Իրականում բանտերում ազատազրկված քրեականներից ոչ բոլորն են որ պատկանում են բուն «գողական» կոչվող աշխարհին: Դրանց մեջ կան տարբեր ենթախմբեր, որոնք չեն ընտրել «գողական» կյանքով ապրելու ուղին և բանտում են հայտնվել պատահականորեն, կանխամտածված կամ չմտածված որևէ հանցագործության հետևանքում, կան քրեականներ, որոնք մերժված են «գողական» ենթամշակույթի կողմից ու չունեն հարգանք այդ աշխարհում և այլն: Սակայն, այս տարբերություններով հանդերձ հենց «գողական» լեզուն ու հասկացություններն են ընկած հանցագործ աշխարհի կարգ ու կանոնի, փոխհարաբերությունների հիմքում: Ավելին, այդ լեզուն ու հասկացություններն են նաև, որ կարևոր դեր ունեն թաղային միջավայրերում սողաների աշխարհում հիեարխիաներ ձևավորելու և ընդհանրապես, հարաբերություններ կառուցելու գործում: Ուստի, վերնագրի նման կառուցվածքը հենց այս իմաստն ունի իր մեջ:

Բառահողվածների կառուցվածքը և այն ներկայացնող օգտագործված պայմանական նշանները հնարավորինս պարզեցնում ու մատչելի են դարձնում բառարանից օգտվելու գործը: Առաջին՝ *Նշ.* հապավումը ներկայացնում է բառի նշանակությունը, որը հնարավոր է եղել դուրս բերել դաշտային ազգագրական հետազոտության միջոցով և այլ բառարանների ուսումնասիրության արդյունքում: Այս տողում ներկայացված են ինչպես բուն «գողական» միջավայրում կիրառվող նեղ իմաստները, այնպես էլ՝ թաղային միջավայրում ու առօրյա խոսակցություններում: Երկրորդ՝ *Ծգլ.* հապավումի ներքո ներկայացված է տվյալ բառի ծագումը՝ «գողական» լեզվի համատեքստում: Այստեղ կարևորություն է տրված ոչ թե բառի լեզվաբանական ծագմանը, այլ՝ «գողական» լեզվում դրա ծագմանը: Չնայած, երբեմն, ներկայացված է նաև բառի ծագումնաբանությունը գուտ լեզվաբանական տեսանկյունից, եթե դա անհրաժեշտ է եղել դրված խնդրի լուսաբանմանը: Երրորդ՝ *Պտմ.* հապավումը ներկայացնում է տվյալ բառի պատմությունը՝ առաջացման թվականը, հայկական կամ օտար միջավայրերում, օտար միջավայրից հայկական ներթափանցումը և այլն: Չորրորդ՝ *Բղղ.* հապավումը ներկայացնում է տվյալ բառով կազմված բաղադրությունները, այսինքն այլ բառերի հետ համադրությամբ, կամ վերջավորությունների ձևափոխմամբ կառուցված լեզվական արտահայտությունները: Եվ վերջապես, հինգերորդ՝ *Լրց.* հապավման տակ ներկայացված են տվյալ բառի կիրառման առանձնահատկությունները, թե բառի ո՞ր նշանակությունը ի՞նչ միջավայրում է գործածական՝ «գողական» ժարգոնում, թաղային միջավայրում, թե՞ առօրյա խոսակցություններում: Այստեղ ներկայացված է նաև տեղեկություն, թե տվյալ բառը որ սերնդի միջավայրում է գործածական: Նաև տրվում է լրացուցիչ տեղեկություններ բառի ձևավորած վարքագծային պրակտիկաների ու կիրառության այլ մանրամասների վերաբերյալ:

Բառարանի վերջում ներկայացված են նաև Նիկոլ Մարգարյանի ու Աղասի Թադևոսյանի հեղինակած վերլուծական հոդվածները: Նիկոլ Մարգարյանի «Գողական» կոչվող եզրը, խոսվածքը և ենթամշակույթը. հիմնական դիտարկումներ» հոդվածում հիմնական գծերով ներկայացված է «գողական» ժարգոնի ձևավորման և Հայաստանում դրա հիմնավորման պատմությունը, ենթամշակութային առանձնահատկությունները: Աղասի Թադևոսյանի «Գողական ժարգոնը քրեական ու թաղային միջավայրերում. փոխակերպումներն ու ընդհանրությունները» հոդվածում անդրադարձ է կատարված թաղային միջավայր լեզվի մուտք գործելու և այդ գործընթացում կրած փոխակերպումների խնդրին: Ցույց են տրված ժարգոնի և թաղային միջավայրերում դրա ազդեցությամբ ձևավորված պրակտիկաների առանձնահատկություններն ու տարբերությունները բուն քրեական միջավայրի համեմատությամբ: Հոդվածներն օգնում են ընթերցողին համատեքստային գիտելիք ստանալուն, որն ավելի լիարժեք կարող է դարձնել բառարանին ծանոթացումը:

Բառարանի կազմման հետազոտական աշխատանքները իրականացրել են մշակութային մարդաբան, ազգագրագետներ, պատմական գիտությունների թեկնածուներ, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատողներ Աղասի Թադևոսյանը և Նիկոլ Մարգարյանը:

Բառարանի կազմմանը մեծապես նպաստել է լեզվաբան Անժելա Ավագյանը: Շնորհիվ նրա մանրակրիտ աշխատանքի հնարավոր է եղել կազմել բառահոդվածների մեծ մասի ստուգաբանությունը:

Հետազոտական աշխատանքներին հատուկ մասնակցության և ներդրման համար կցանկանայինք շնորհակալություն հայտնել հետազոտող Միշա Թադևոսյանին:

Շնորհակալություն ենք հայտնում նաև մեր բոլոր բանասացներին ու փորձագետներին հարցազրույցներին մասնակցելու համաձայնության համար:

Ա

ԱԲԱՌՈՏԿԱ

Նշ. պատասխան, պատասխան տալ:

Ծգմ. ռուս. քր. оборотка՝ պատասխան հարված (ռուս. оборотка թղթի, մեղալի, մետաղադրամի հակառակ կողմը: Առաջացել է ռուս. оборачивать շրջել, ուղղորդել, հակադարձել բայից:

Բղղ. արառոտկա տալ, արառոտկա ֆոռալ, արառոտկի գել:

Պտմ. Ռուս. քր. ենթամշակույթում բառն օգտագործվում է նախախորհրդային (մինչև 1917 թ.) ժամանակներից (СПМ (33)): Հայկ. միջավայր է ներթափանցել 1960-ականներին:

Օգտագործվում է նաև ժամանակակից խոսակցական հայերենում:

Լրց. գողական ենթամշակույթի հիմնական հասկացություններից մեկը: Անհիմն մեղադրանքին, հայհոյանքին, ֆիզիկական հարվածին պարտադիր էր արձագանքել: Չարձագանքելը վատ վերաբերմունքի էր արժանանում «գողական» ու թաղային միջավայրերում՝ անգամ մինչև չարձագանքողի հետ կապերի խզումը: *Աբարոտկա* արգելվում էր տալ միայն օրենքով գողերին: Առհասարակ *աբարոտկա տալը* պարտադիր պայման էր հավասար կարգավիճակ ունեցողների միջև:

ԱԲԻԺՆԻԿ

Նշ. նեղված ու թշնամություն պահող մարդ, 2. մարդ, ում հարցը լավ ձևով չի լուծվել:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. обиженный՝ հեղինակությունը կորցրած հանցագործ, որին հետապնդում են այլ դատապարտյալները (չշփոթել обиженный բառի հետ, որն այլ իմաստ ունի): Ռուս. обида՝ վիրավորանք բառից:

Բղղ. աբիժնիկավարի, աբիժնիկություն:

Պտմ. օգտագործվում էր 1930-ական թվականների սկզբից, հիմնականում ազատագրկման վայրերում, նախկին ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում(СПМ (33)): Օգտագործվում է նաև ժամանակակից խոսակցական հայերենում:

Լր. գողական ենթամշակույթում նկատի ունեն նրան, ում «ապուսկատ» են արել: Այդ միջավայրում բառի օգտագործումը կարող էր վեճի թեմա լինել: Այն խիստ վիրավորական էր: Թաղային միջավայրում այդ բառին ավելի թեթև էին վերաբերում և բառը ավելի հաճախ օգտագործվում էր *ղիլխոր* (նեղացած, տխուր) բառի նշանակությամբ: Օգտագործվում է բոլոր սերունդներում:

ԱԲԻԶԱԼՈՎԿԱ

Նշ. պարտադիր պայման, կատարման ենթակա պարտավորություն:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. խսկց. обязателька՝ պարտադրանք բառից: Կատարման համար պարտադիր հանձնարարություն, պահանջ: Սովորաբար՝ կամքի, ցանկության դեմ:

Պտմ. բառը կիրառվում էր *ցարական Ռուսաստանում*: 19-րդ դարի երկրորդ կեսին, Սախալինի և Սիբիրի կալանավայրերում հայտնվեց «թերց» թղթախաղը, որի կանոնների համաձայն՝ որոշ քայլերի կատարումը պարտադիր է: Նման պարտադրվող քայլեր կան նաև

«դերերց» և «պրեֆերանս» թղթախաղերում: Այդ պարտադիր քայլերը ստացան *обязаловка* անվանումը:

Լրց. ընդհանուր օգտագործման բառ է: Բայց գողական և թաղային միջավայրերում կան նկատելի տարբերություններ: Գողական միջավայրում դա ընկալվում է որպես պարզապես մի բան որը պարտադիր կանոն է, ինչին պետք է հետևել և դրանում որևէ վատ բան չկա: Սակայն թաղային միջավայրում ավելի հաճախ օգտագործվում է բացասական նշանակությամբ: Երևի այն պատճառով, որ ազատության մեջ պարտադիր կանոնները դիտվում են որպես բացասական երևույթ:

Աբիզալովկան ունի երկու տեսակ՝ *աբիզալովկով գող* կամ *աբիզալովկով օրենքով ապրող մարդ*: Այսինքն կօգտագործես որևէ օրենք՝ կամ ասենք պետական օրենքը կընդունես ու էդ օրենքով կշարժվես, կամ գողական օրենքը:

ԱԲԽԱԴԻՏ

Նշ. խուսափել հարցին պատասխանելուց:

Ծզմ. ոռու. *обходить* բառից:

Պտմ. օգտագործվում է 1950-ականներից:

Բղղ. աբխադիս լինել:

Լրց. Օգտագործվում է գող. և թաղ. ժարգոններում: Տարածված է ավագ և միջին սերունդների մեջ: Որպես հոմանիշ գործածվում է նաև *հարցից թոնել* արտահայտությունը: Գողական ենթամշակույթում ընունված չէ հարցի պատասխանից խուսափելը, հատկապես, երբ գողական հեղինակությունն է հարց տվողը: Դա կարող էր պատժի արժանանալ:

ԱԲՇԱԳ

Նշ. 1. գողական գանձարկղ, որ ստեղծվում է քրեական մեծ կամ փոքր խմբերում՝ դատապարտյալների տարբեր կարիքների համար գումար հավաքելու նպատակով, 2. ընդհանուր ռեժիմի գաղութ: 3. ընդհանուր ռեժիմի գաղութում պատիժը կրած անձ: 4. հետաքրքրության համար թղթախաղ կամ դոմինո խաղացող կոլեկտիվ, 5. բազմամարդ (տասը դատապարտյալ և ավելի) բանտախուց, 6. «հեղինակավոր» հանցագործների խումբ, 7. հարազատների հետ դատապարտյալների կարճաժամկետ /3 ժամ/ տեսակցություն:

Ծզմ. փոխառություն՝ ոռու. քր. *обшак, обшак*՝ *ընդհանուր*

Պտմ. *Աբշագ* հասկացությունը «ընդհանուր գողական դրամարկղ» իմաստով գոյություն ունի հանցավոր աշխարհում 1917 թ. Ռուս. սոցիալիստական հեղափոխության և քաղաքացիական պատերազմի հետևանքով առաջացած առաջին անապաստան երեխաների ժամանակներից: Նրանք ապրում էին համայնքներով և ամբողջ գողոնը՝ թալանված ու հափշտակված իրերը, մի կույտ էին անում:

Լրց. *աբշագին* գումար տալը կամավոր է: Նվիրաբերվող գումարի չափը նույնպես կամավոր է: Գումարը չի ընդունվում միայն ոստիկաններից և աբիժնիկներից: Ով գումար չի տալիս աբշակին, չի էլ կարող վերցնել: Աբշակի գումարի մի մասը գալիս է թղթախաղից: Կրողները պարտավոր են կեսը փոխանցել աբշակին: Աբշակում կուտակված գումարները անհրաժեշտության դեպքում կարող է փոխանցվել նաև ազատության մեջ գտնվող

ընկերներին: Աբշակը կարող է պահվել *գողի* (տես՝ ՕԲԵՆՔՈՎ ԳՈՂ բառահոդվածը) կամ *պալաժենեցի* (տես՝ ՊԱԼԱԺԵՆԵՑ բառահոդվածը) մոտ: Կա 2 տեսակ արշագ՝ գողական և սովորական: Երկուսի համար էլ ցուցակ են պահում: Գողական արշագը հավաքվում է ինչպես ՔԿՀ-ներում, այնպես էլ ազատության մեջ ու ծախսվում է գլխավորապես օրենքով գողերի կարիքների համար: Անհրաժեշտության դեպքում դրանցից կարող են օգտվել *ուռկաները* (փորձառու ու հեղինակավոր քրեականները): Աբշակից գողացողներին կարող են սպանել կամ եթե գողական աշխարհին մատուցած ծառայությունները ծանրակշիռ են պարզապես զրկել *օրենքով գողի* տիտղոսից:

Սովորական արշակը հավաքվում է ՔԿՀ-ների բանտախցերում, իսկ ազատության մեջ կարող է լինել քաղաքային, մարզային, թաղամասային և այլն: Գողական արշակում հավաքվում են միայն փող և թմրանյութեր: Սովորական արշակը սահմանափակումներ չունի:

Աբշակ բառի 4 իմաստներից տարածում ունեն հիմնականում առաջին և չորրորդ իմաստները: Հիմնականում տարածված է ավագ և միջին սերունդների շրջանում: Բառը գործածվում է հիմնականում ՔԿՀ-ներում:

ԱԲՈՍՇՉՍ

Նշ. գողական միջավայրից որևէ ազդեցիկ կամ հեղինակություն ունեցող մարդուն՝ դիմելը որևէ խնդիր լուծելու նպատակով:

Ծզմ. փոխառություն՝ ռուս. обратиться բառից: Բազմիմաստ բառ է. 1) դիմել 2) ուղղվել 3) շրջվել դեպի... 4) կերպափոխվել 5) պտույտ գործել և այլն: Դիտարկվող դեպքում իմաստը *դիմելն* է՝ խնդրանքով դիմել, օգնություն ստանալու համար դիմել և այլն:

Բղղ. արքաշչատ (արքաշչատսա) լինել:

Լրց. թե՛ գող., թե՛ թաղ. միջավայրերում օգտագործվող բառ է: Ավելի շատ տարածված էր ավագ և միջին սերունդներում: Ցանկացած մարդ կարող է *արքաշչատ* լինել՝ գողին կամ գողական հեղինակությանը դիմել, բացառությամբ «փչացածները» կամ «ցոթերը» (տես՝ ԳՅՈԹ բառահոդվածը): *Արքաշչատի* համար շնորհակալություն հայտնելու գինը հուշում են կողքի մարդիկ: Գողերն ուղղակի դրա մասին չեն ասում: Էդ փողը պարտադիր կանոն է, որ պիտի գնա արշագին:

ԱԳԱՐԿԱ

Նշ. անբարոյական, պոռնիկ:

Ծզմ. *ագում է* ռուս. агарка բառից, որը նշանակում է հագարացի կին, հագարուհի, որն էթնոնիմ է և օգտագործվում է Հին կտակարանում: Աբրահամի հարձը՝ Սառան ծագումով հագարացի է, որից Աբրահամը երեխա ունեցավ:

Լրց. Ընդհանուր օգտագործման բառ է և տարբեր միջավայրերում և տարբեր սերունդներում: Որպես հոմանիշ օգտագործվում է նաև *ակարդեռն* տարբերակը: Գործածում են ստորագույն արարքներ թույլ տված տղամարդկանց հասցեին: Այս պիտակավորումը հնչեցվում է նաև մարմնավաճառ կանանց հասցեին, ովքեր ըստ փողոցային ընկալումների, չեն պահպանում բարոյականության ընդունված նվազագույն սահմանները:

ԱԹԱՆԴԱ/ԱԹԱՆԴԻ

Նշ. 1. նախագգուշացում վտանգի մասին՝ նախորոք պայմանավորված ձայնային կամ այլ նշանով, 2. գողության ժամանակ կամ բանտախցում որևէ անթույլատրելի բանով զբաղվելու ժամանակ պահակություն անող անձ:

Ծգ. Հավանական է փոխառվել է ֆր. [attendez](#) – սպասեք կամ attendre -ձգվել, զգաստանալ բառից:

Պտմ. Հայերենում իսկց. օգտագործվում է նախախորհրդային ժամանակներից: Գող. ժարգոն մուտք է գործել խոսակցական հայերենից:

Բղղ. աթանդա կանգնել, աթանդա դնել:

Լրց. գող. և թաղ. խոսվածքում ավագ ու միջին սերունդների խոսքում տարածված արտահայտություն է: Թաղ. իսկց. սովորաբար գործածվում է երկրորդ իմաստը:

ԱՆՊԵՐՈՒԹՅՈՒՆ

Նշ. 1. գողերի կամ գողականների ընկերակցություն, 2. թաղային միջավայրում կամ դրանից դուրս «լավ տղաների» խմբավորում, 3. ընկերություն:

Ծգմ. Հավանաբար ռուս. քր. իսկց. *братва՝ եղբայրություն* բառի փոխառություն:

Պտմ. Հայաստանում օգտագործվում է 1960-ական թվականներից:

Լրց. առաջին իմաստը բնորոշ է գող. և թաղ. ժարգոնին: Երկրորդ իմաստը հիմնականում վերաբերում է թաղ. ժարգոնին, իսկ երրորդը՝ առօրյա իսկց.: Շատ տարածված է և գործածական է բոլոր սերունդների մեջ: Մինչև 2018 թվականի *թավշյա հեղափոխությունը* գործածական էր նաև քրեամերձ և հանցագործ բնույթի քաղաքական էլիտայի ներկայացուցիչների միջև, որով նշվում էր քրեաօլիգարխիկ համակարգում հանցագործ և սովետային գործարքներով փոխկապակցված անձանց ընկերակցությունը: 1998-2018 թվականներին այդ իմաստով գործածական էր հատկապես ԱԺ քրեաօլիգարխիկ ծագմամբ պատգամավորների բառապաշարում:

ԱՏՄԱՍԿԱ

Նշ. 1. արդարացում, 2. պատասխանատվությունից խուսափում:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. *отмазка՝ կեղծ պատճառանք*, պատրվակում: Ունի նաև «կեղտից» մաքրել իմաստը՝ *отмазать՝ պաշտպանել*, արդարացնել, նեղ տեղից:

Պտմ. բառը քր. ժարգոնում օգտագործվում է 20-րդ դարի կեսերից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. ատմասկա լինել, ատմասկա բերել:

Լրց. բառը գործածվում է նույն նշանակությամբ ինչպես գող., այնպես էլ թաղ. միջավայրերում:

ԱՏՉՈՏ

Նշ. ասված խոսքի կամ կատարած արարքի համար հաշվետու լինել կամ պատասխան տալ:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. խոսակցական отчѐт «հաշվետվություն» բառից:
Պտմ. ռուս. այս բառը կիրառություն է գտնում 18-րդ դարում՝ պետական փաստաթղթերի առնչությամբ: Ռուս. քր. խոսույթի բառարաններում եզրույթը չի հանդիպում: Տարածված է ժամանակակից իսկց. հայերենի գողական և թաղային խոսվածքի մեջ:
Բղղ. ատչոտ տալ, ատչոտ պահանջել, պաղատչոտ:
Լրց. ատչոտ կարող է պահանջել հավասարը հավասարից: Գողից կարող է ատչոտ պահանջել գողերի սխոդկեն: Առանձին գող չի կարող պահանջել: Գողը կարող է ատչոտ պահանջել հարիֆից կամ բրադյագաններից: Ընդհանուր օգտագործման բառ ինչպես գողական, այնպես էլ թաղային միջավայրերում: Երկու տեղում էլ ունի նույն իմաստը:

ԱՊԵԼՍԻՆ

Նշ. գողի կոչումը փողով գնած անձ, *օրենքով գողեր*, որոնք իրենց կարգավիճակը ստացել են գոյություն ունեցող գողական կանոնները շրջանցելով:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. апельсин՝ նարինջ բառից:
Պտմ. 20-րդ դարի 80-ականների սկզբին քրեական աշխարհում սկսեցին հայտնվել հեղինակություններ, որոնք այդ կարգավիճակը գնել են փողով, ինչը հակասում էր գողական աշխարհում սահմանված կարգին: Հենց այդ մարդկանց նկատմամբ սկսեց կիրառվել *ասպելսին* անվանումը:
Լրց. *ասպելսին* անվանման առաջին կրողներն էին վրացի և ադրբեջանցի *օրենքով գողերը*, քանի որ նրանց մեջ ամենամեծ թիվն էին կազմում կարգավիճակը առնողները: Հետագայում եզրույթը տարածվեց բոլոր վաղահաս «թագադրված» հեղինակությունների վրա: Ըստ մեկ այլ մեկնաբանության՝ *ասպելսին* անունը այդ գողերը ստացել են, որովհետև Ռուսաստանում նարինջ վաճառելով են հարստացել և *գողի* կոչում գնել:

Բ

ԲԱԶԱՐ

Նշ. վեճ, վիճաբանություն, վիճելի հարցերի շուրջ խոսակցություն: ՔԿՀ-ում բանտարկյալների միջև խոսակցություն, այս կամ այն հարցի պարզաբանման նպատակով:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. Базар՝ ուշադրություն շեղելու նպատակով կազմակերպված աղմուկ: 2) Базар держать խոսել, քննարկել: 3) Базарить զրույցը երկարացնել, դատարկախոսել: Ծագել է պրսկ. بازار (bâzâr) «բազար», հն. պրսկ abâ + zâr -ից: Ռուսերենում «շուկա, տոնավաճառ» իմաստով օգտագործվում է 1499 թվականից, փոխառված է թյուրքական լեզուներից: «Բարեգործական միջոցառում, բարեգործական նպատակներով վաճառք» իմաստով արևմտյան փոխառություն է ֆրնս. bazar կամ գերմ. bazar-ից:
Պտմ. «Աղմկոտ խոսակցություն իմաստով» օգտագործվում է ռուս. քր. բառապաշարում նախահեղափոխական ժամանակներից: Մնացած իմաստներով օգտագործվում է 1960-ականներից՝ ԽՍՀՄ ամբողջ տարածքում (СІІМ):
Բղղ. բազարիտ, բազար-վակզալ (դատարկ խոսակցություն), բազարը ֆիլտրել (զրույցը պարզաբանել, ասելիքը հստակեցնել):

Լրց. Գողական ժարգոնում *բազար* բառի տակ կարող է հասկացվել նաև պարզաբանման նպատակով իրականացվող գրույցը: Օտագործվում է ինչպես ՔՀԿ-ներում, այնպես էլ առօրեա խոսակցության մեջ: Կա կարծիք, որ *բազար* բառը գողական ժարգոն է մտել հենց շուկայից: Շուկայում վաճառողն էլ ունի իր մոտեցումը, գնորդն էլ: Ինչպես շուկայում կողմերից յուրաքանչյուրը կարող է ապրանքի գնի սակարկման ընթացքում խոսել իր շահերից և պաշտպանել դրանք, նույն կերպ ըստ գողական ենթամշակույթի, ամեն մեկը կարող է պաշտպանվել իր դիրքը մինչև այն պահ, երբ կողմերը համաձայնության են գալիս:

ԲԱԳԱԺ

Նշ. 1. գողական հասկացությունների համաձայն բանավեճ վարելու փորձառություն, հմտությունների կուտակում, 2. նախորդ դատվածությունները և ողջ հանցագործ գործունեությունը կամ անցած ուղին:

Ծզմ. Փոխառություն՝ ռուս. քր. *бараж* *պաշար*, *բեռ* բառից

Պտմ. Բառն օգտագործվում է 20-րդ դարի կեսերից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. բազաժ տալ, բազաժի բուն (դատապարտվելու վտանգ առաջացնող անձ կամ գործողություն):

Լրց. օգտագործվում է ավելի հաճախ գողական ժարգոնում, ավելի հազվադեպ առօրեա խոսակցություններում և թաղային միջավայրում: Առավել տարածված էր ավագ ու միջին սերնդի շրջանում: Կա կարծիք, ըստ որի պարտադիր չէ «նստած հելլաժ» լինել, բազաժ կարելի է ունանալ փողոցի կյանքից :

ԲԱԼԱՄՈՒՏ

Նշ. վեճ, իրարանցում:

Ծզմ. Ռուս. *баламут* *վիճաբանություն*, *հրահրող*, *խառնակիչ* բառից:

Բղղ. Բալամուտ անել:

Պտմ. ռուս. միջավայրում օգտագործվում է նախահեղափոխական ժամանակներից:

Լրց. տարածված է բոլոր սերունդների մեջ: Բառը քրեական միջավայրում չի ձևավորվել, չնայած կարող է օգտագործվել նաև նրանց կողմից:

ԲԱԼԱՆԴՅՈՒ

Նշ. բանտում կերակուր բաշխող:

Ծզմ. փոխառություն՝ ռուս. քր. խսկց. *баландёр*՝ *կերակուր բաշխող* բառից: Բառի ծագման վարկածի համաձայն, մինչ 1917 թ. հեղափոխությունը Տազանկայի բանտում եղել է Բալանդին ազգանունով ավագ խոհարար, ով սարսափելի վատ կերակուրներ էր պատրաստում բանտարկյալների համար, ինչը հանգեցրել է բանտարկյալների ապստամբության, որի ժամանակ, ըստ պահպանված բանավոր պատմությունների, Բալանդինին, որպես պատիժ կենդանի եփել են բանտարկյալների կերակուրի հսկայական կաթսայում: Այստեղից էլ՝ առաջացել է *բալանդա*, *բալանդոտ* արտահայտությունը բանտային ժարգոնում:

Պտմ. Բառն օգտագործվում է ամենուր՝ նախահեղափոխական (1917 թ.) ժամանակներից:

Լրց. բառը հայտնի է գող. ժառգոնում՝ ավագ սերնդի միջավայրում: Որպես հոմանիշ է օգտագործվել է *նտեր* արտահայտությանը:

ԲԱՆՂԱ

Նշ. հանցավոր խմբավորում:

Ծգմ. ռուս. քր. банда բառի փոխառությունը, որն իր հերթին ստացվել է անգլ. band՝ խումբ բառից:

Բղղ. բանդիտ:

ԲԱՐԻԳ

Նշ. թմբակյութ վաճառող, 2. ՔԿՀ-ում պահանջարկ ունեցող ապրանք վաճառող (թեյ, ծխախոտ և այլն):

Ծգմ. թուրք. բարիշ բառից, որն ունի *նվեր, օգուտ* իմաստները:

Պտմ. օգտագործվում է 20-րդ դարի կեսերից ողջ ԽՍՀՄ տարածքում:

Լրց. քր. և թաղ. միջավայրերում ընդհանուր օգտագործման բառ է: Տարածված է հիմնականում ավագ և միջին սերնդի մեջ: Գող. աշխարհում *բարիզները* հարգանք չվայելող մարդիկ էին, որովհետև հաճույք վաճառելը համարվում էր մեղք: Առավել մեծ մեղք էր համարվում անչափահասներին թմբակյութ վաճառելը: *Բարիզներից* թմբակյութ առգրավելը գողականների կողմից չէր քննադատվում:

ԲԱՐՁԵԼ

Նշ. գողական հասկացություններով սխալ արարքի վերաբերյալ տարբեր մեղադրանքներ մեկ մեկու հետևից բերելով, ծանրաբեռնել: Վեճը այնպես վարել, որ սխալը հակառակ կողմի վրա ընկնի:

Ծգմ. ռուս. քր. грузить՝ բարձել բառի թարգմանությունն է (տե՛ս գրուզիտ անել): Հայերեն բառնալ (բարձ-) բառից:

Պտմ. հայերեն տարբերակն օգտագործվում է 1970-ականներից:

Լրց. բնորոշ է քրեական բառապաշարին: Օգտագործվում է նաև առօրյա կյանքում և թաղային միջավայրերում, քրեականին շատ մոտ իմաստով: Տարածված է տարբեր սերունդների շրջանում: Համագոր է գողական ժառգոնում օգտագործվող *գրուզիտ անել, կուզովը ելնել* արտահայտություններին:

Լրց. Հայերենում տարածված բառ է: Որպես հոմանիշ թաղ. խսկց. գործածվում է *թայֆա, շայկա* ձևերը:

ԲԱՐՇԻՏ ԱՆԵԼ

Նշ. խախտել ընդունված սահմանները, 2. չափն անցնել:

Ծգ. Ռուս. քր. борщить, ռուս խսկց. переборщить, перебощить՝ *չափն անցնել, սահմանն անցնել* բառի փոխառությունն է:

Պում. Բառն օգտագործվում է 1960-ականներից:

Լրց. արտահայտության *բարշխտ անել* ձևը տարածված է ավելի ավագ սերնդի մեջ: Միջին և երիտասարդ սերնդում գործածական է *պերեբարշխտ անել* ձևը:

ԲԵՍ

Նշ.1. գողական բարքերին հակասող վարքագիծ ունեցող հանցագործ, 2. անպետք, անվստահելի մարդ:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. бек բառից:

Պում. քր. իսկց. բառն օգտագործվում է 20-րդ դարի կեսերից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Լրց. գողական ժառգնում օգտագործվում է առաջին իմաստով: Երկրորդ իմաստն ավելի գործածական է առօրյա խոսակցության մեջ կամ թաղային միջավայրում: Գողական ժառգնում հաճախ նկատի են ունեցել նաև այն մարդկանց ու վրեր չեն կողմնորոշվել թե որ գողի կամ հեղինակության ճամբարից են իրանք և հաճախ փոխել են իրենց դիրքորոշումը: Կա կարծիք, որ այդ բառով են նշել նաև արտադրությունում լավ աշխատող դատապարտյալներին

ԲԵՍՊՐԻԴԵԼՇՉԻԿ

Նշ. 1. գողական աշխարհի կանոններին չենթարկվող մարդ, որը հեղինակություն է կալանավայրում: *2.* քաղաքացիական կյանքում առհասարակ որևէ կանոնի, նորմի, օրենքի չենթարկվող անձ: *3.* խուլիգան:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. беспредел բառից՝ *չափ կամ սահման չունեցող, ծայրահեղ անարդարություն. բոլոր իրավունքների ոտնահարում:*

Պում. օգտագործվում է 1960-ականների սկզբից, հիմնականում ազատագրկման վայրերում՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Լրց. գող. իսկց. կիրառվում է առաջին նշանակությամբ: Առօրեա կյանքում ավելի հազվադեպ կիրառվում է առաջին նշանակությամբ և առավել լայնորեն՝ երկրորդ ու երրորդ:

Օգտագործվում է բոլոր սերունդների կողմից: Նախկինում հանցագործ միջավայրում սա ուներ դատապարտելի իմաստ: Ներկայումս մի փոքր իմաստափոխություն է ստացել և ձեռք է բերել նաև ամենակարողության իմաստ:

ԲԵՐԴԻ ՊՈՒՄՅՈՎԿԱ

Նշ. մարդ, ով մատնությամբ կամ ոչ դիտավորյալ նպաստում է ինչ որ մեկի դատապարտվելուն:

Ծգմ. կազմված է հայ. *բերդ* և ռուս. пугѣвка՝ *ուղեգիր* բառերից: *Բերդը*

ժողովրդախոսակցական հայերենում ունի նաև բանտ իմաստը: Пугѣвка բառն առանձին վերցված ռուս. քր. խոսությամբ նշանակում է դատապարտյալի մահվան մասին բժշկական տեղեկանք:

Պում. տարածում է ստացել 1970-ականներից:

Լրց. Տարածված է ավելի շատ միջին ու ցածր հանցագործ խմբերում և փողոցային խոսակցական ժարգոնում: Համազոր է գող. ժարգոնում գործածվող *բոզի շառ, բազածի բուն* արտահայտություններին:

ԲԼԱՏՆՈՅ

Նշ. 1. գողական կյանքով ապրող անձ: 2. գողական հասկացություններ օգտագործող, գողական վարքագծով ներկայացող անձ:

Ծզվ. բառի ծագման վերաբերյալ տարբեր կարծիքներ: Առավել հայտնի տարբերակներն են. 1. Հուլանդ. *blatt* – թուղթ բառից, որի վրա Պյոտր 1-ինի ժամանակներում գրանցում էին մոբուսները մաքրելուց հրաժարվող բոյարների անունները: 2. Գերմ. *blatt* - թուղթ, որը Եկատերինայի ժամանակ արտոնություններ էր տրամադրում Ռուսաստան տեղափոխված գերմանացիներին: 3. Իդիշ. *blatt* -օծյալ, յուրային:

Պում. բառն ինտենսիվորեն օգտագործվել է 1930-ական թթ.-ից մինչև 1960-ական թթ.՝ ԽՍՀՄ ողջ տարածքում: Ըստ մի վարկածի՝ 20-րդ դարի սկզբին սկսել է օգտագործվել Օդեսայում՝ գողական խմբերի (շայկաների) անդամներին նշելու համար:

Լրց. Առաջին իմաստով գործածական է քր. խսկց., երկրորդ իմաստը ավելի բնորոշ է թաղ. ժարգոնին: Գող. իմաստով *բլատնոյը* չպիտք է լինել կոմերիտական, ծառայած լինել բանակում կամ իշխանության հետ համագործակցել: Ազատության մեջ միայն գողությամբ պետք է զբաղվել, իսկ գաղութում ազարտ խաղեր խաղար, բայց ոչ երբեք ապառիկով (գումարը ստանալու կամ վերադարձնելու անորոշ ժամկետով):

ԲՈԶ (կամ բոզ)

Նշ. 1. ոստիկանությանը կամ դատախարավական համակարգին տեղեկություններ հաղորդող անձ, մատնիչ, 2. բարոյական որակներից զուրկ մարդ, 3. անբարոյական կին, պոռնիկ:

Ծզվ. ժամանակակից հայերենի բառ: Փոխաբերական իմաստով՝ մատնիչ: Կրում է *անբարոյական, պոռնիկ* իմաստը: Փոխառություն՝ վրց. ծո՞ծո (բոզի): Հավանաբար, ծագում է լազ. ծո՞ծո (բոզո) բառից, որը նշանակում է *աղջիկ, կույս, դուստր*, որից էլ ծագում ծո՞ծոծա (բոզոբա՝ *բոզություն*, այսինքն՝ պոռնկություն): Հայ. տարածված է նաև բառի յուրօրինակ գրելաձևն ու ստուգաբանությունը, համաձայն որի ճիշտ տարբերակն է՝ բոզ, որը հապավում է «բարոյական օրենքներից զուրկ» արտահայտությունից, սակայն այս վարկածը հորինվածքի է նման:

Բղղ. բոզական, բոզավարի, բոզի ծնունդ, բոզի վաստակ, բոզի տղա, ծննդականով բոզ, բոզի բազար, բոզի շառ, բերնից բոզ և այլն:

Լրց. գողական ժարգոնում գլխավորապես օգտագործվում է առաջին իմաստով: Առօրյա խոսակցությունում կամ թաղային միջավայրում օգտագործվում է բոլոր իմաստները: Օգտագործվում է բոլոր սերունդներում:

ԲՈՈԶԻ

Նշ. 1) կովարար, անհնազանդ, նենգ, 2) անչափահաս դատապարտյալներ, որոնք չեն ցանկանում ենթարկվել ՔԿՀ կանոններին, 3) դատապարտյալների բացասական մասի աջակցությունը վայելող լկտի մարդ:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. борзый, *անհնազանդ, աշխույժ* բառից: (Չփոթել борзой բառի հետ, որը նույն ծագումն ունի, բայց քր. խոսույթում նշանակում է *քրեական հետախուզության աշխատակից*):

Պտմ. օգտագործվում է 1960-ականների սկզբից, հիմնականում ազատագրկման վայրերում՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. բողբիանալ, բողբիություն, բողբի դառնալ:

Լրց. *ՔԿՀ-ներում բողբիներ* հիմնականում անվանում են այն անչափահաս դատապարտյալներին, որոնք նվիրված են «գողական կյանքին»: Նրան ընթուստանում են բանտային ադմինիստրացիայի դեմ: Բնչպես և գողական աշխարհի հեղինակությունները, նրանք անպատվաբեր են համարում ազատվել համաներամբ և առհասարակ դատվածության ժամկետը լրանալուց առաջ (Զուգումով): Առօրյա իրավիճակներում մի փոքր իմաստափոխվում է և օգտագործվում է ոչ միայն անչափահասների, այլև ընդհանրապես անհնազանդ և կռվարար մարդկանց համար:

ԲՈՍՅԱԿ

Նշ. 1. պրոֆեսիոնալ հանցագործ, որը հետևում է գողական օրենքներին, 2. կնամուլ (ժառգնային արտահայտությամբ՝ բողբարած), 3. ծուլ, անբան, 4. փնթի:

Ծգմ. ըստ մի վարկածի ծագում է ռուս. босый բառից, ըստ մեկ այլ վարկածի՝ босие խմբանունից: Մեկ այլ վարկածի համաձայն բառի ծագում կապվում է հրեերենի հետ և կազմված է бос+як բաղադրիչներից, որը թարգմանվում է՝ *կոխկրտել, ոչնչացնել, կոխկրճված, ոտնակոխ արված*:

Պտմ. բառի ծագումը կապվում է Ռուսաստանում ճորտատիրության վերացման հետ, երբ ձևավորեց մի սոցիական խավ, որը վաստակում էր օրվա հացը պատահական աշխատանքների միջոցով: Շուտով այս խավի ներկայացուցիչները, որպես անտեսված և հասարակության կողմից մերժվածներ արտացոլվեցին գրական ստեղծագործություններում և այդ միջոցով հայտնվեցին առօրյա խոսքում: Գողական ժարգոն այն անցել է ռուսերեն առօրյա խոսքից:

Բղղ. բոսյակ գյադա, բոսյակություն:

Լրց. քր. միջավայրում, հատկապես ավագ սերնդի գողականների շրջանում օգտագործվում էր առաջին նշանակությամբ: Թաղ. միջավայրում և առօրյա խոսակցություններում միջին սերնդի մեջ բառը մեծամասամբ օգտագործվում է *կնամուլ* նշանակությամբ: Այս նշանակությունը բառը ձեռք է բերել ավելի ուշ: Նոր սերունդի միջավայրում գործածվում է հիմնականում երրորդ և չորրորդ նշանակությամբ:

ԲՐԱԴՅԱԳԱ

Նշ. 1) թափառող գող, ով Խորհրդային շրջանում մի քաղաքից մյուսը գնացքով թափառելու միջոցով զբաղվում էին գողությամբ:

Ծգմ. փոխառություն է ռուս. бродяга՝ *թափառաշրջիկ* բառից:

Լրց. կա կարծիք, որ *բրադյագա* էին անվանում նաև բազում անգամներ դատապարտված և բազում կալանավայրերում եղած մարդկանց, ովքեր սակայն գողական աշխարհին չէին

պատկանում: Գործածվել է ավագ սերնդի միջավայրում: Բրադյագաները չնայած գողական աշխարհից չէին, սակայն ունեցել են որոշակի հարգանք գողերի միջավայրում, քանի որ նրանք գողացել են ոչ թե իրենց համար, այլ՝ գաղութում գտնվող ընկերների: Դրանով նրանց տարաբերել են *գաստրոյորներից*, ովքեր նույն ձև գողությամբ են զբաղվել քաղաքից քաղաք թափառելու միջոցով, սակայն գողոնը օգտագործել են սեփական հաճույքների համար:

Գ

ԳԱՆՂՈՆ

Նշ. 1. վիրավորանք մարդու հասցեին, որի դավաճանությունը կամ ինտրիգները բացահայտվել են, 2. կալանավոր, որը նախկինում եղել է քրեակատարողական հիմնարկի ներքին կարգապահական բաժնի անդամ և հետո դուրս է եկել:

Ծզվ. աղավաղված ռուս. *кондон* բառն է, որն իր հերթին անգլ. Condom-ի աղավաղումն է: Տարածված վարկած կա, որ դա Անգլիայի թագավոր Կարլոս II-ի ժամանակ ապրած բժշկի անունով է, այն բժշկի, որը շրջանառության մեջ է դրել պահպանակները: Ըստ այլ վարկածի՝ իտ. *guantone*, *guanto* «ձեռնոց» բառից (OED):

Պտմ. Բառը գործածության մեջ է մտել 1960-ականների կեսերից՝ նախկին Խորհրդային Միության ամբողջ տարածքում:

Բղղ. գանդոնավարի, գանդոնություն, կարկատած գանդոն, գանդոն լակոտ:

Լրց. գործածման մեջ սերնդային տարբերություններ չկան: Տարածված է ինչպես բանտային, այնպես էլ փողոցային խոսքում:

ԳԱՌԼԱՆ

Նշ. 1. կեղտոտ գործ անող, կեղտի դիպչած 2. կալանավայրերում այդպես կոչում են նրանց, որոնք անփորձ դատապարտյալներին ներքաշում են թղթախաղի մեջ՝ գառլախվում են:

Պտմ. կա կարծիք, որ բառը գործածության մեջ է մտել բանակում Հայաստանի անկախության շրջանում և հետո բանակից անցել է բանտային միջավայր: Այդ բառով նշում են զուգարան մաքրող, գետնից աղբ հավաքող կամ այլ կեղտոտ գործ անողներին: Գառլախվածներին արգելված էր դիպչելը կամ նրանց հետ ընկերություն անելը, քանի որ այդ ճանապարհով կարելի է *գառլախվել*:

Լրց. գողական ենթամշակույթում օգտագործում են սովորաբար երկրորդ իմաստով: Առօրյա խոսակցության մեջ գործածվում է առաջին նշանակությամբ: Բառը տարածված է հիմնականում նոր սերնդի միջավայրում:

ԳԱՍՏՐՈՒ

Նշ. 1. գողության կամ այլ հանցագործության նպատակով այս կամ այն բնակավայր այցելություն, 2. ուշադրություն գրավելու, ինքն իրեն ցուցադրելու, *կուրածիտ լինելու* նպատակով իրականացվող գործողություն:

Ծգմ. փոխառվել է ռուս. гастроль՝ շրջագայություն բառից:

Պտմ. տարածված էր նախահեղափոխական ժամանակների Ռուսաստանում՝ մինչև 1960-ականները:

Բղղ. գաստրոլ տալ, գաստրոլյոր:

Լրց. գաստրոլյորներին հաճախ համեմատում են *բռադյագաների հետ*: Սակայն նշվում է նաև, որ *գաստրոլյորները* գողանում էին սեփական շահերի համար, իսկ *բռադյագաները* գողոնը որպես օգնություն բաժանում էին ընկերներին, այդ թվում և բանտային ընկերությանը: Առավել օգտագործելի էր ավագ սերնդի միջավայրում: Քր. միջավայրում գործածվել է առաջին նշանակությամբ: Երկրորդ նշանակությունը ավելի բնորոշ է առօրյա խսկց. և թաղ. միջավայրերին:

ԳՅՈԹ

Նշ. 1. մարդ, ով բանտում ըստ կրիմինալ նորմերի անթույլատրելի սխալ արարք է կատարած լինում ընդդեմ կրիմինալի և նրան զրկում են որևէ կարգավիճակից և ստորացնում, 2. պիղծ, կարգավիճակ չունեցող ստորագույն արարած: 3. պիղծ անձ, որը որոշակի գումարի դիմաց սեռական ծառայություն է մատուցում բոլոր ցանկացողներին:

Ծգմ. ժամանակակից հայերենի բառ, ծագում է թուրքերեն göt՝ *հետույք* բառից (ԹՀԲ): Հայերենում նեղ իմաստով կրում է «պասիվ դերակատարությամբ սրբանային սեքսով զբաղվող տղամարդ», լայն իմաստով՝ «նույնասեռական տղամարդ» նշանակությունը: Հայերենում հոմանիշ է *գյոթվերան* բառին, որը թուրքերեն göt veren՝ *հետույք տվող* բառի փոխառությունն է:

Բղղ. գյոթական, գյոթավարի, գյոթություն, գյոթցնել, գյոթնոց:

Լրց. գաղութներում նման կարգավիճակի մարդկանց տարածականորեն մեկուսացրել են: Նրանց տարածքը կոչվել է *գյոթնոց կամ կուրյաստնիկ*, որը համարվում էր պիղծ տարածք և որտեղ մնացած բանտարկյալները մուտք չեն գործում, որպեսզի չպղծվեն:

Բացի բանտային ժարգոնային նշանակությունը, բառն ունի նաև առօրյա գործածում և նշում է ստոր վարքագիծ ցուցաբերող մարդուն:

ԳՈՂԱԿԱՆ ՊԱՆՅԱՏ

Նշ. գողական աշխարհի բոլոր ներկայացուցիչների համար անբեկանելի ճշմարիտ հասկացություն, որով առաջնորդվում են այդ աշխարհի հետևորդները:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. пр. воровские понятия *գողական հասկացություններ* արտահայտությունից: Բաղկացած է հայ. «գողական» և ռուս. «понятие» (հասկացություն) բառերից:

Պտմ. գող. հասկացությունների համակարգը նախնական տեսքով ձևավորվել է 1930-ականներին, իսկ ներկայիս ըմբռնմամբ՝ 1960-ականներին՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. պանյատով տղա, պանյատից զուրկ, պանյատով մուժիկ:

Լրց. թե գող. և թե թաղ. ժարգոնում ունի նույն նշանակությունը: Գործածվում է բոլոր սերունդների կողմից: *Գող. պանյատները* ներկայացնում են գողական աշխարհի

հարաբերություններին, վարքագծային պրակտիկաներին վերաբերող ճիշտ ու սխալի մասին հասկացությունները: Դրանք այսօր էլ պահպանում են իրենց դերակատարումը ոչ միայն «գողական աշխարհում», այլև՝ դրան հարող թաղ. միջավայրերում: Մակայն, համարվում է, որ «պանյատները ապրվում են զոնում» (տես. ԶՈՆ բառահոդվածը):

ԳՈՂԱԿԱՆ ՌԱԶԲՐԿԱՍ

Նշ. որևէ արարքի խմբային քննարկում, վերլուծություն «գող. պանյատների» հիման վրա:

Ծզվ. փոխառություն՝ ռուս. քր. воровская разборка արտահայտությունից: Բաղկացած է հայ. «գողական» և ռուս. «разборка», разбирать բառերից: Հայ. «գող» բառի ծագումը տես ԳՈՂԱԿԱՆ ՊԱՆՅԱՏ ԲԱՐՈՒՄՎԱԾՈՒՄ: Разборка բառը ծագում է разбирать «կարգի բերել, գլուխ հանել» բայից:

Պտմ. *ռազբրկա* բառն օգտագործվում է 1930-ականների կեսերից նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում: Նմանատիպ իմաստ ունեն ռուս. правилка և толковище հասկացությունները: Մինչև 1990-ականները разборка բառը դիտվում էր իր անմիջական բառային իմաստով: 1990-ականներից հետո բառը սկսեց ասոցիացվել ֆիզիկական ուժի և զինված բռնության բացահայտ կիրառման հետ՝ հանցավոր խմբավորումների միջև կոնֆլիկտային իրավիճակների լուծման ժամանակ:

Բղղ. գողական ռազբրկա:

Լրց. *ռազբիրատը* պիտի վարեր հավաքվածների մեջ հեղինակություն ունեցող մեկը: Դա կարող էր լինել նաև *պալածենեցը* կամ գողական աստիճանակարգում կարգավիճակ ունեցող մեկ այլ ոք: *Ռազբիրատը* գողական կյանքով ապրողներին է վերաբերում, բայց գողերի միջև խոսակցության համար չեն կիրառում: Ուշխորհրդային շրջանում *ռազբիրատը* կիրառվում է նաև թաղային կամ փողոցային վեճերի պարզաբանման նպատակով: Այդ պարագայում ռազբիրատը կարող էին անել վիճող կողմերը, սակայն նորից կարևոր էր համարվում գողական հասկացությունների իմացությունը:

ԳՈՂԱԿԱՆ ՄԽՈՂԿԱ

Նշ. օրենքով գողերի ներկայացուցչական հավաք՝ գողական աշխարհի կարևոր հարցերը և գողերի տարակարծությունները լուծելու նպատակով:

Ծզվ. փոխառություն՝ ռուս. քր. воровской сходняк՝ *գողական հավաք*: Բաղկացած է հայ. «գողական» և ռուս. «сходняк» բառերից: Сходняк բառը ծագում է հն. սլավ. ходъ:

Պտմ. Բառակապակցությունն օգտագործվում է 1930-ականների սկզբից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. գողական սխաղնյակ:

ԳՈՂՑ ԿԱՐԵԼ

Նշ. դատախրավական մարմինների կողմից շինծու մեղադրանք ներկայացնել, շինծու մեղադրանքով մարդուն դատապարել:

Ծզվ. փոխառություն՝ ռուս. քր. шить делюгу «անհիմն, կեղծ մեղադրանք»: Իրավական մարմինները մեղադրյալների վերաբերյալ վկայությունները և տվյալները պարունակող թղթերը նախկինում կարում էին միմյանց հետ և տեղադրում համարակալված *Գործ* կոչվող

թղթապանակներում: Այդտեղից՝ գործ կարել անվանումը: Մեկ այլ տարբերակի համաձայն էլ ուշ միջնադարում եվրոպական երկրներում և Ռուսաստանում ընդունված էր որևէ բնագավառին վերաբերող փաստաթղթերը հերթականությամբ ստանձել միմյանց՝ կազմելով թղթագլաններ: 17-18-րդ դարերում սկսեցին փաստաթղթերի էջերը կարել միմյանց: Կարում էին նաև քրեական գործերին վերաբերող թղթերը, ինչից էլ ծագել է արտահայտությունը: *Պսմ.* քր. խոսույթում բառակապակցությունն օգտագործվում է նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում՝ սկսած 1930-ական թվականներից:

Բղղ. գործ թխել

Լրց. գործածվում է բոլոր սերունդների կողմից: Տարածված է ինչպես բանտային միջավայրում, այնպես էլ առօրյա խոսակցության մեջ:

ԳՈՐԾ ՏՎՈՂ

Նշ. դատախիրավական մարմիններին դիմող կամ հատուկ այդ մարմիններին ծառայող անձ, որը տեղեկություններ է հաղորդում հանցագործությունների և հանցագործ աշխարհի ներկայացուցիչների վերաբերյալ:

Ծզվ. տարածվել է 1955-60 թվականներին, երբ բացահայտվեցին ստալինյան ռեպրեսիաների մանրամասները, և պարզվեց, որ քրեական գործերի զգալի մասը հարուցվել էր գաղտնի ամբաստանությունների (донос) հիման վրա: Քանի որ նույն մարդը կարող էր իր հարևանների, բարեկամների, ծանոթների մասին բազմաթիվ գաղտնի ամբաստանություններ անել, որոնց հիման վրա գործեր էին հարուցվում, այդ մարդկանց սկսեցին կոչել «գործ տվող» Կա վարկած, որ արտահայտությունը ծագել է դատապարտյալի քրեական գործը պարունակող համարակալած թղթապանակի վրայի «Գործ» գրությունից:

Պսմ. համեմատելի է ռուս. доносчик բառի հետ: Стукач բառը կիրառվել է նախահեղափոխական ժամանակներից (դեռևս 1917 թ. առաջ):

Լրց. Չշփոթել *ստուկաչի* և *բոզի* հետ, որոնք հանցագործ աշխարհի ստորին խավի ներկայացուցիչներ են:

ԳՐՈՒՋԻՏ ԱՆԵԼ

Նշ. 1. իրավապահ մարմինների կողմից սպառնալիքի, շանտաժի տարբեր միջոցներով և բռնության գործադրմամբ որևէ մեկին ստիպելն է, որ որևէ հանցագործություն կամ մի քանի հանցագործությունների կատարումը վերցնի իր վրա, 2. վեճի ժամանակ աստիճանաբար նոր հարցադրումներ անելու միջոցով փորձել սխալը բարդել դիմացինի վրա:

Ծզվ. փոխառություն՝ ռուս. քր. пружить բառից:

Պսմ. բառն օգտագործվում է 1930-ի սկզբից նախկին ԽՍՀՄ տարածքում:

Լրց. բառը վերը նշված առաջին նշանակությամբ կիրառվել է ավելի վաղ շրջանում: Դա եղել է գող. ժարգոնում բառի սկզբնական նշանակությունը: Սակայն հետագայում բառը ձեռք է բերում նոր իմաստ և կիրառվում երկրորդ նշանակությամբ: Թաղ. միջավայրում և առօրյա խոսակց. նույնպես ավելի հաճախ օգտագործվում է բառի այդ իմաստով:

ԳՈՒՆՑ

Նշ. օժանդակություն, աջակցություն, օգնություն բանտում գտնվող գողական աշխարհի ներկայացուցչին:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. րեւ, подогрев՝ տաքացում բառից:

Պտմ. տարածվել է 1930-ականներից ԽՍՀՄ ամբողջ տարածքում: Ունեցել է vorovской րեւ՝ գողական գրեֆ բառակապակցությամբ գործածումը, որը նշանակել է գողերի հավաքած աջակցությունը: Հայտնի է եղել նաև րեւ в бункер՝ ճամբարից դեպի կարգեր կամ ճամբարային մեկուսարան ուղղված աջակցություն: Դրեւ со свободы՝ ազատությունից եկած գրեֆ՝ 1930-ականների սկզբից օգտագործվող բառակապակցություն է, որը նշանակում է բանտարկվածի մտերիմների կամ հարազատների հավաքած աջակցություն:

Բղղ. գրեֆ անել, գրեֆի ցուցակ:

Լրց. օգտագործվում է ավագ և միջին սերնդի կողմից: Թաղ. միջավայրում բառը որոշ իմաստափոխություն է կրում և գործածվում է պարզապես *ցանկացած մոտիկ մեկին ցուցաբերված օգնություն, օժանդակություն* իմաստով:

ԳՈՒՄԻՏ

Նշ. 1. կալանավորվել, 2. լինել տարբեր կալանավայրերում, 3. խոսել և վարվել կալանավայրերին բնորոշ ձևով, 4. ցանկացած գործ հաջողությամբ ավարտել:

Ծգմ. փոխառություն է ռուս. քր. загреметь՝ *հայտնվել ազատագրկման վայրում* բառից:

Պարզապես րեմеть տարբերակը ռուս. քր. չի հաղիպում:

Պտմ. բառն օգտագործվում է 1930-ականների սկզբից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. գոբիմիտ անել:

Լրց. բառը ավելի գործածական է եղել ավագ սերնդի միջավայրում: Ներկայումս գործածությունից դուրս եկող բառ է: Բնորոշ է եղել գող. ժարգոնին և ունեցել է վերը բերված երկրորդ նշանակությունը: Թաղ. միջավայրում գործածվել է չորրորդ նշանակությամբ:

Դ

ԴԻԼԽՈՐ

Նշ. 1. որևէ պատճառով հիասթափվածություն, դառնության զգացում, տխրություն, 2. որևէ հարցի լուծումից հիասթափված, նեղացած մարդ:

Ծգմ. հայ. իսկց. ծագում է պարսկերեն دلخور (delkhor/dilkhor «սրտին դիպչել, սիրտը ընկնել») բառից:

Պտմ. օգտագործվում է 1960-ականներից:

Բղղ. Կյանքից դիլխոր, դիլխոր ընկնել, դիլխոր մնալ:

Լրց. քր. աշխարհում օգտագործվում է հիմնականում առաջին նշանակությամբ: Առօրյա խոսակցություններում և թաղ. միջավայրում օգտագործվում է երկրորդ նշանակությամբ և որոշ դեպքերում նույնականացվում է *աբիժնիկ* բառի խոսակցական իմաստի հետ:

ՂԵԲՈՇ

Նշ. աղմկոտ, հայեցողականություն ուղեկցվող վեճ, կռիվ:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. дебош «խելահեղություն, սկանդալ, աղմուկով ուղեկցվող ծեծկոտոց»: Ռուսերենում այս բառը ծագում է ֆրնս. débauche «անառակություն, սանձարձակություն, խրախճանք» բառից:

Պտմ. լայն տարածում է գտել 1980-ականներից:

Բղղ. դեբոշ անել, դեբոշ սարքել, դեբոշի մեջ ընկնել:

Լրց. ընդհանուր օգտագործման բառ է: Տարածված է միջին ու նոր սերունդների միջավայրերում: Բառը գողական ժարգոնից և հասկացություններից դուրս է:

ՂՆԵԼ ՎՋԻՆ

Նշ. 1. պարտավորեցնել, պարտադրել, 2. գողական հասկացողությունների օգտագործմամբ մեկին խեղճացնելը:

Ծգմ. հայկական միջավայրում ձևավորված հասկացություն է, կազմված է «ղնել» և «վիզ» բառերից:

Բղղ. վզին բարդել, վզին գցել, վզին թողնել, վիզ առնել:

Լրց. քր. միջավայրում օգտագործվում էր առաջին իմաստով: Գողական ժարգոնում այս արտահայտությունը կարող էր վերաբերել տարբեր պարտադրանքների: Դա կարող էր լինել գումար, որևէ իր կամ նույնիսկ ծառայություն: Սովորաբար «վզին դնելը» հետևում էր «սխալ բռնելուն»: Բայց կարող էր նաև համոզելու ճանապարհով տեղի ունենալ: Թաղային միջավայրում օգտագործվում էր երկու իմաստներով էլ: Տարածված է տարբեր սերունդների մեջ: Ներկայումս գործածվող արտահայտություն է:

ՂԱԿԱԶՍ ԱՆԵԼ

Նշ. հիմնավորել որևէ արարք կամ արտահայտություն՝ գողական հասկացությունների միջոցով:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. доказать «ապացուցել»: Ռուս. քր. доказать «կասկածյալի մեղքի ապացույց»:

Պտմ. բառն օգտագործվում է 1930-ականների սկզբից, հիմնականում ազատագրկման վայրերում՝ նախկին ԽՍՀՄ տարածքում:

Լրց. *ղակազատի* ժամանակ *գյոթի*, *մենթի*, *պաշտոնյայի*, *բոզի*, *աղջկա* ասածը հիմք (ասնավանի) չէր: *Ղակազատը* պահանջում էր հիմնավորված խոսք կամ գողական աշխարհում վստահություն վայելող ականատեսներ: Հիմնավորում չունենալը կարող էր ստորացման և կարգավիճակի անկման պատճառ դառնալ: Բնորոշ է ինչպես քրեական աշխարհին, այնպես էլ թաղային միջավայրերին և ընդհանրապես առօրյա վեճերին: Առօրյա և թաղային միջավայրեր է անցել քրեական աշխարհից:

ՂՈՒՄԿԵՔ

Նշ. 1. ծայրահեղ և ծանր ապրումներ, մտածմունքներ, 2. թմրանյութի ազդեցության տակ առաջացող ապրումներ ու մտքեր:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. думки «անչափ, ծանր ապրումներ»: Ռուս. думка բառի հոգնակին է: Ռուս. քր. думка-ն (եզակի ձևը) այլ իմաստ ունի և նշանակում է՝ 1. պայուսակ, 2. բարձ: *Պտմ.* բառի երկու ձևն էլ (думки, думка) օգտագործվում են 20-րդ դարի կեսերից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. դումկեքի մեջ ընկնել, դումկեքի մեջ լինել:

Լրց. առաջին իմաստով ավելի տարածված է եղել ավագ և միջին սերնդի գողական աշխարհում, երկրորդը ավելի բնորոշ է նոր սերնդին: Առօրյա կյանքում և թաղային միջավայրեր ներթափանցել է քրեական աշխարհից և հիմնականում օգտագործվում է նույն իմաստներով: Առավել գործածական է ավագ և միջին սերնդի միջավայրում: Նոր սերնդի մեջ արտահայտությունը ավելի հազվադեպ է հանդիպում:

Ե

ԵՂՈ

Նշ. եղբայր, ախպեր, 2. որոշ գաղութներում գողերի՝ իրար դիմելու ընդունված ձև:

Ծգմ. եղբայր բառի կրճատ տարբերակ է: Նման կերպ բռատ (брат) բառի փոխարեն երբեմն օգտագործվում է բռռ ձևը, որն իրականում առաջացել է անգլերեն brother՝ եղբայր բառի bro կրճատ ձևի հայկականացումից: Ենթադրվում է, որ այն հայաստանյան միջավայր է մուտք գործել գլենդելահայության միջոցով և դարձել մինչ այդ տարածված բռատ-ին փոխարինող կրճատ ձևը:

Բղղ. եղոներ:

Լրց. երբեմն որպես հոմանիշ է հանդես գալիս թաղ. խսկց ախպեր և գող. խսկց. մեծ ախպեր արտահայտություններին: Համեմատաբար նոր դիմելիս է, առաջացել է 1990-ականների վերջերին և տարածում ստացել 2000-ականներին: Բառի եղոներ ձևը ներկայումս գործածվում է որոշակի ենթամշակույթի ներկայացուցիչներին՝ թաղային միջավայրում «գողական գնացող» անձանց բնութագրելու համար: Թաղ. ժարգոնում այն գործածվում է նաև ախպերության (տես՝ ԱԽՊԵՐՈՒԹՅՈՒՆ բառահոդվածը) անդամների նշելու համար:

ԵՐԳԵԼ

Նշ. 1. մատնել, տեղեկություն կամ ցուցմունք տալ դատախրավական մարմիններին, 2. բղավել, 3. տազնապի ազդանշան տալ:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. спеть բառից, որը քր. խոսույթում ունի մի քանի նշանակություն:

Պտմ. ռուս քր. միջավայրում բառը «մատնել» իմաստով օգտագործվում է նախահեղափոխական (1917 թ.) ժամանակներից:

Լրց. Օգտագործվում է ավագ սերնդի կողմից: Երիտասարդների մեջ հազվադեպ է գործածվում: Հիմնականում տարածված է քր. միջավայրերում: Թաղ. միջավայրերում ավելի հազվադեպ է կիրառվում, հիմնականում նրանց կողմից, ովքեր ծանոթ են գողական ժարգոնի նրբություններին:

Զ

ԶԱԿՈՆՆԻԿ

Նշ. օրենքով գող: Հոմանիշ է *քերոք* արտահայտությանը:

Ծգվ. փոխառություն՝ ռուս. քր. законник «օրենքով գող, հեղինակություն»: Բաղկացած է закон արմատից և -ник վերջածանցից, որը ծագում է հն. ռուս. законъ, նախ. սլավ. *zakonъ-ից: Կապ ունի кон, искони, բառերի հետ, որոնց նախնական նշանակությունն է «սկիզբ» (ЭСФ):

Պտմ. խոսքը քր. միջավայրում օգտագործվում է 1930-ականների սկզբից՝ հիմնականում ազատագրկման վայրերում, նախկին ԽՍՀՄ տարածքում:

Լրց. արտահայտությունը տարածված էր ինչպես բանտային միջավայրերում, այնպես էլ թաղային: Թաղային միջավայր ներթափանցել է բանտայինից, առանց իմաստափոխության: Հատկանշական է, որ առերես հաղորդակցման դեպքում գողին այս բառով չէին դիմում, հիմնականում դիմում էին «քերոք ջան» արտահայտությամբ:

ԶԱՉՈՒՄԱՐԻՏ

Նշ.1. ստորացնել, պատվազրկել, կարգավիճակից զրկել:

Ծգվ. ռուս. խսկց. зачухарить, зачушить բառերի սխալ արտասանության հետևանքով առաջացած բառ:

Պտմ. օգտագործվում է ողջ ԽՍՀՄ տարածքում սկսած 1930-ականներից:

Բղղ. զաչումարիտ անել, չումարիտ անել:

Լրց. չնայած բանտային միջավայրերում գործածվող արտահայտություն է, որով նշվում է համապատասխան գործողությունը, սակայն կա կարծիք, որ գողական աշխարհին բնորոշ երևույթ չէ: Զաչումարիտ անելը պատվազրկման գործընթաց էր, բայց ոչ սեռական ճանապարհով: Զաչումարիտ կարող էին անել թղթախաղի պարտքը չվճարելու, մատնիչության, գործ տալու և մի շարք անընդունելի արարքների համար: Հիմնականում նման պատժի ենթարկվում էին գողական հիերարխիայի մեջ չմտնող բանտարկյալներին:

ԶԱՊԱԴԼՈ

Նշ. գողական հասկացություններին ու կարգավիճակին հակասող արարքներ գործելը, ինչը համարվում էր պատվից ցածր:

Ծգվ. փոխառություն՝ ռուս. քր. запахло՝ *քրեական սովորույթների, բանտային նորմերի կոպիտ խախտում*: Առաջացել է ռուս. քր. пахла՝ ստոր, սրիկա, անարգ բառից, որը հավանաբար ծագում է ռուս. падалъ լեռ բառից:

Պտմ. բառը քր. խսկց. օգտագործվում է 20-րդ դարի կեսերից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Լրց. գողի համար *զապաղլո* է վաղաժամկետ ազատվելը, ՔԿՀ-ում ստորացված ու մարզինալացված խմբերի ներկայացուցիչների հետ սեղան նստելը, *պետուխի* համար զապաղլո է նաև *սուկա* լինելը, գողերի ու հարձիների համար զապաղլո է նույն սեղանի շուրջ *պետուխների* և *սուկաների* հետ հաց ուտելը: Բացի գողական ժարգոնից, ներթափանցել ու

տարածվել է նաև թաղային միջավայրում: Այստեղ բառն հիմնականում ունի *պատվից ցածր, անպատվաբեր արարք* իմաստները:

ԶՈՆ

Նշ. 1. քրեակատարողական հիմնարկի տարածք, 2. տարածք

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. зона *գաղութ, բանտի տարածք, ՔԿՀ-ի տարածք, կալանավորների բնակության տարածք:*

Պտմ. բառն օգտագործվում է 1920-1930-ական թվականներից նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. գողերի գոն, սոչի գոն, բոգերի գոն, պիտուխների գոն, կրասնաչների գոն, մախավիկների գոն

Լրց. լայն առումով նշանակել է քեակատարողական հիմնարկի տարածքը: Սակայն ունեցել է նաև ՔԿՀ տարածքում տարբեր խմբավորումների տարածքը նշելու իմաստ: Այդ առումով գործածվել են նաև *գողերի գոն, սոչի գոն կամ բոգերի գոն, պիտուխների գոն, կրասնաչների գոն, մախավիկների գոն:* Բնորոշ է գողական ժարգոնին, ՔԿՀ ներսի առանձին տարածքներին վերաբերող բառակակցությունները կիրառվել են միայն քրեական միջավայրում: Թաղային միջավայր ներթափանցել է *գոն* արտահայտությունը առանց էական իմաստափոխության: Գործածվում է բոլոր սերնունդների մեջ:

ԶՈՆ ՆԱՅՈՂ

Նշ. կալանավայրում գողական կարգ ու կանոնի և հասկացությունների համաձայն դատապարտյալների հարաբերությունները կարգավորող ու հետևող գողական աշխարհի ներկայացուցիչ:

Ծգմ. կազմված է ռուս. քր. зона փոխառված բառից և смотрящий բառի հայերեն *նայող* թարգմանությունից:

Պտմ. բառն օգտագործվում է 1970-ականների կեսերից, հիմնականում ազատագրկման վայրերում՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Լրց. իրականում *սմատրյաշչին* գողի դրածոն է, բայց գլխավորապես ազատության մեջ:

Օրինակ՝ «նայում է», այսինքն քրեական իմաստով տնօրինում է քաղաքը կամ որևէ տարածք: Գաղութի կամ բանտի տարածքը «նայողը» կոչվում է *պալաժենեց*:

Կա կարծիք, որ չնայած հաճախ *գոն նայողը* գողական հիերարխիայի անդամ էր, սակայն կարող էր լինել դեպք, որ նա չլիներ այդպիսին:

Բառն ունի ընդհանուր օգտագործում և տարածված է բոլոր միջավայրերում:

Թ

ԹԱՅՏԱ ԲԱԶԱՐ

Նշ. 1. գողերի հավաք, զրույց, 2. որևէ խմբի աղմկոտ հավաք:

Ծզմ. արաբ. طائفة էմիրաթ, որ հետո անցել է իտալ.՝ taifa փոխառությունը + պրսկ. بازار — bâzâr, որը թարգմանվում է՝ շուկա:

Լրց. հիմնականում գործածվում էր թաղ. իսկց. : Բնորոշ է ավելի շատ ավագ ու միջին սերունդներին:

ԹԱՎԱՆ

Նշ. փող կամ թանկարժեք իրեր, որոնցով թաղթախաղում պարտվածը մարում է իր պարտքը:

Ծզմ. հավանաբար փոխառություն է՝ թրք. tavan «առաստաղ» բառից: Հայ. բարբառային՝ տախտակապատ առաստաղ, տույժ, հատուցում (ՀԼԲԲ):

Պտմ. օգտագործվում է կովկասյան գողականների շրջանում 1930-ականների սկզբից սկսած:

Բղղ. թավանի տակ մնալ, թավան թափել:

Լրց. ընդհանուր օգտագործման բառ: Թաղային միջավայրում հիմնականում տարածված էր ավագ ու միջին սերունդների շրջանում: Կրտսեր սերնդից գործածում են նրանք, ովքեր սերտ առնչություն ունեն «գողականի» հետ:

ԹՈՍԾ

Նշ. 1. գողի կոչումից զրկված, 2. ստորացված, փչացրած:

Պտմ. Հայաստանում հատկապես գործածական էր 1960-1980-ական թթ.:

Բղղ. թռցնել:

Լրց. բառի առաջին նշանակությունը բնորոշ է գող. իսկց., երկրորդը՝ թաղ.: Գործածվում է ավագ և միջին սերնդի կողմից: Որպես հոմանիշ կարող են կիրառվել *պռաշլյագ, թոցրած, զծից ընկած, գյոթ* բառերը:

Ժ

ԺԵՆ

Նշ. անհասկացող, անարժեք մարդ կամ մարդկանց խումբ, 2. կեղտ, աղբ, մարդկային կղկղանք:

Ծզմ. հայ. ժախ/ժահ՝ կեղտ, գարշահոտություն, զազրելի արարք բառն է, որը ստացել է ժելի՝ ժարգոնային արտահայտչաձևը:

Լրց. բառն առօրյա խոսակցության մեջ գործածվում է հաճախ ստորին սոցիալական խավերին նշելու համար, ովքեր չունեն արժեքային կողմնորոշիչներ և գտնվում են հասարակության հատակում:

ԺՈՒԼԻԿ

Նշ. 1. օրենքով գող, 2. մանր գող, 3. խորամանկ, փոքր խորամանկությունների, խարդախությունների դիմող մարդ:

Ծգմ. ռուս. жулик բառի փոխառություն:

Պտմ. հայկ. միջավայր է ներթափանցել ռուս քր. խսկց. և լայնորեն օգտագործվում է 1960-ական թթ. սկզբներից:

Լրց. բառն առաջին իմաստով գործածվել է քր. խսկց. շատ վաղուց: Ներկայումս այդ իմաստով չի գործածվում: Թաղ. և առօրյա խսկց. տարածված է երկրորդ և երրորդ նշանակությունը:

ԺՈՒԿ

Նշ. խորամանկ, ճարպիկ մարդ:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. жук, жучок, жуковатый խորամանկ, ճարպիկ արտահայտությունից: Առաջացել է ձայնանմանական հիմքով՝ жу-ж-жать «բզզալ» բառից: Պտմ. բառն օգտագործվում է նախահեղափոխական (1917 թ.) ժամանակներից: Բառի ժուլչոկ ձևը ունի նաև «գաղտնալսող սարք» նշանակությունը և այս իմաստով օգտագործվում է 20-րդ դարի վերջին քառորդից:

Լրց. օգտագործվում է ինչպես քր. , այնպես էլ առօրյա խսկց. : Գործածական է հատկապես ավագ ու միջին սերունդների մեջ: Կրտսեր սերունդը ավելի հազվադեպ է կիրառում:

Ի

ԻՏՈԳ ՏԱԼ

Նշ. քր.նշ. վերջնական որոշում կայացնել, լուծում տալ:

Ծգմ. ռուս. итог՝ արդյունք, ընդհանուր գումար բառից:

Պտմ. Հայկ. միջավայրում օգտագործվում է 1960-ականներից:

Բղղ. իտոգ տվող

Լրց. գող. աշխարհում որևէ հարցի կամ վեճի առիթով ամփոփիչ կամ վերջնական վճիռը կարող էր կայացնել հեղինակություն ունեցող անձը:

Ընդհանուր օգտագործման բառ է: Տարածված է հատկապես ավագ ու միջին սերնդի ներկայացուցիչների մեջ: Թաղ. միջավայրում հիմնականում կիրառվում էր երիտասարդների մեջ կամ գողականին առնչվող անձանց բառապաշարում: Ներկայումս առօրյա խսկց. հազվադեպ է կիրառվում:

Լ

ԼԱՎ ՏՂԱ

Նշ.1. գողական կյանքին տրված և աստիճանակարգում հարգալից տեղ ունեցող մարդ, 2. թաղում գողական հասկացություններով ապրող տղա /տղերք/:

Ծզմ. թարգմանվել է ռուս. хороший՝ լավ բառից:

Պտմ. հայերեն ձևը տարածում է գտել 1970-ականներից:

Բղղ. լավեր, լավ տղերք:

Լրց. ընդհանուր օգտագործման բառ է: Թաղային միջավայրերում այս բառով նշում էին գողական կյանքով ապրողներին: Տարածված և նույնական բառերից էր նաև *խառնշի* կամ *խառնշի տղա* անվանումը: Նման տղաներին ընդունված էր նաև անվանել *հարզված տղա* բառակապակցությամբ: Տարածված է նաև *լավեր* արտահայտությունը, որը նույնական է *լավ տղերք*, *հարզված տղերք* արտահայտությանը: Բանակային միջավայրում այս բառի նմանակումն է *յախշի* արտահայտությունը, որով նշվում է բանակում *չաստ նայողները*, գորամասում ազդեցիկ և հարցեր լուծող զինվորները:

ԼԻՄՈՆ

Նշ. միլիոն

Ծզմ. փոխառություն՝ ռուս. քր. лимон «միլիոն»: Բառը կազմվել է миллион բառի հնչյունների տեղափոխությամբ: Հանդիպում է նաև «լյամ» ձևը:

Պտմ. օգտագործվում է 1920-ականներից՝ ՆԷՊ-ի (նոր տնտեսական քաղաքականություն) ժամանակներից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Լրց. բառն օգտագործվել է փողի քանակը, միլիոն ռուբլի նշելու համար: Տարածվել է հատկապես ՆԷՊ-ի շրջանում, քանի որ փողի արժեզրկման հետևանքում գումարը հաշվվում էր միլիոններով: Խորհրդային տարիներին դրամական ռեֆորմների ու տնտեսության կայունացման հետևանքում, երբ մարդկանց ձեռքում միլիոն ռուբլի այլևս անհնար էր հայտնվել, արտահայտությունը մոռացության էր մատնվել: Վերակենդանացում ստացավ ԽՍՀՄ փլուզումից հետո ռուսական քր. միջավայրում, երբ նորից ռուբլու արժեզրկման հետևանքում մարդկանց ձեռքում սկսվեց հայտնվել միլիոնավոր ռուբլիներ և միլիոնը նորից դարձավ փողի հաշվման մեջ բավականին գործածական: Հայկական միջավայր թափանցել է ռուսականից: Ներկայումս, Հայաստանում համարյա թե չի գործածվում:

ԼԻՎԵՐԻՏ

Նշ.1. ցանկանալ խոսքով խույս տալ, դիմացինին շփոթմունքի մեջ զցելու միջոցով, 2. աչքի ընկնել, թփրտալ, առանց դրա իրավունքն ունենալու:

Ծզմ. փոխառություն՝ ռուս. քր. ливерить «դիտել, նայել, հետևել»: Կա նաև ливерья ձևը, որը նշանակում է ինքնավստահ, տարուբերվող քայլվածքով հեռանալ հանցանքի վայրից կամ հետապնդումից:

Պտմ. օգտագործվում է նախահեղափոխական (մինչև 1917 թ.) ժամանակներից:

Բղղ. լիվիրիտ անել:

Լրց. բառն օգտագործվում է հիմնականում թաղ. միջավայրում ու առօրյա խոսակցություններում: Հանդիսանում է նույն վերջավորություն ունեցող բառերի շարքի մաս՝ տինդիրիտ, վինիվիտ, լիվիրիտ: Երրորդ իմաստը հիշատակվում է խիստ հազվադեպ:

Որոշ մեկնաբանությունների համաձայն «լիվիրիտը» «վինիվիտի» ու «վազնիկատ»-ի միջանկյալ տարբերական է: «Վինիվիտը» դա դիմացինին մեղադրանք ներկայացնելուն ուղղված խոսակցությունն է, որը պահանջում է ներկայացնողից հիմնավորումներ: Եթե ներկայացնողը չի կարողանում հիմնավորումներ բերել, նա սկսում է մանևրել, ինչն էլ հենց «լիվիրիտն է և վինիվիտին հաջորդող խոսքային փուլ է:

Բառն օգտագործվում էր հիմնականում միջին սերնդի ներկայացուցչների շրջանում:

ԼՈՒՆ

Նշ. 1. գող. հասկացություններից անտեղյակ մարդ, 2. միամիտ, վստահող, պարզունակ մարդ: Գյուղից քաղաք տեղափոխված անձ, 3. հիմար

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. пѣха բառից, որն ունի հետևյալ իմաստները. 1) տուժած, 2) շուկերի գոհ, 3) շժմած մարդ, 4) մարդ, որը ֆիզիկապես և բարոյապես չի կարող պաշտպանվել: Ծագում է Ալեքսեյ կամ Լեոնիդ անուններից՝ կրճատ, փաղաքշական Меса, Меша ձևերից:

Պում. օգտագործվում է 20-րդ դարի կեսերից՝ նախկին ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում:

Լրց. գող. ժարգոնին բնորոշ է առաջին և երկրորդ իմաստները: Թաղ. միջավայրում նույնպես այդ երկու իմաստներն են տարածված, իսկ ավելի լայն առօրյա խոսակցության մեջ՝ երկրորդ և երրորդ:

ԼՈՄԿԱ

Նշ. 1. թմրանյութի բացակայության պատճառով առաջացած ամենատանջահար պահը, որն ուղեկցվում է մկանների և գլխի ցավերով, 2. տրամադրություն զգող լուր կամ արարք, 3. խաղաթղթերի կապուկի կիսումը խաղից առաջ, 4. խարդախության ձև:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. ломка բառից: Ծագում է ломать բայից,

Պում. առաջին նշանակությամբ բառն օգտագործվում է 1974 թվականի՝ ցանկացած տեսակի թմրամիջոցներին առնչվող գործունեության համար պատասխանատվության խստացման մասին հրամանագրի ընդունումից հետո՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում: Երրորդ նշանակությամբ՝ նախահեղափոխական (1917 թ.) ժամանակներից, իսկ չորրորդ նշանակությամբ՝ ՆԷՊ-ի (նոր տնտեսական քաղաքականության) ժամանակներից:

Բող. լումկել, լումկի մեջ լինել:

Լրց. առաջինը օգտագործվում է գողական ժառգոնում և անցել է թաղային ու առօրյա միջավայր ադտեղից, երկրորդը առավելապես առօրյա խոսակցության մեջ է գործածական, իսկ երրորդն ու չորրորդը՝ հին սերնդի գողականներին է բնորոշ եղել:

Օգտագործվում երկու նշանակությամբ և բոլոր սերունդների միջավայրում:

ԼՈՔՇ

Նշ. 1. աննպատակ, ձանձրալի վիճակ, 2. հետաքրքրության կամ զբաղմունքի պակաս, 3. անհույս վիճակ, 4. անհաջողություն:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. локш բառից, որն ունի հետևյալ իմաստները. 1. սուտ, 2. անհաջողություն, 3. անհույս գործ, 4. հոգու դատարկություն :

Պում. բառն օգտագործվում է նախահեղափոխական (մինչև 1917 թ.) ժամանակներից:

Լրց. քր. միջավայրում օգտագործվում է 3-րդ և 4-րդ իմաստներով: Քաղ. միջավայրում օգտագործվում է 1-ին և 2-րդ իմաստներով: Ընդհանուր օգտագործման բառ է:

Խ

ԽԱՌՈՇԻ

Նշ. 1. գողական կյանքին տրված և աստիճանակարգում հարգալից տեղ ունեցող մարդ, 2. թաղում հարգված տղա /տղերք/:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. хороший (լավ) ձևից: Ռուս. քր. խոսույթում նման բառ չի օգտագործվում: Հավանաբար, ԽՍՀՄ այլ ժողովուրդների մոտ հանդիպող «լավ տղա» հասկացությունը թարգմանվել է ռուսերեն և հետո փոխառվել:

Պտմ. հայկ. միջավայրում տարածվել է 1970-ականներին:

Բղղ. խառոշի տղա:

Լրց. համարժեք է լավ տղա, լավեր, հարգված տղա արտահայտությանը: Տարածված է քրեական ու թաղային միջավայրերում: Ավելի շատ օգտագործվում է ավագ և միջին սերնդի կողմից: Կրտսեր սերունդը ավելի շատ գործածում է լավեր, լավ տղա, հարգված տղա ձևերը: Այս բառը մեծարանքի նշան էր թաղային միջավայրում և պարտադիր չէր քրեական կյանք ունենալ: Հաճախ, թաղային միջավայրում նման կերպ էին կոչում գողական հասկացություններին տուրք տվող և այդ պրակտիկաները գործածող տղաներին: Այս արտահայտությունը չէր վերաբերում օրենքով գողերին:

ԽԱՐԵԲ

Նշ. 1. հարգանքի արժանի ընկեր

Ծգմ. ախպեր բառի հնչյունափոխված տարբերակն է:

Պտմ. Հայաստանում լայն գործածություն է ստացել հատկապես հետխորհրդային շրջանում:

Բղղ. խարբերներ:

Լրց. այս բառով լավ տղաները նշում են իրենց ընկերներին: Բառը նույնական է ախպեր, ախպերություն բառերի իմաստաբանությանը: Այսինքն, նշում է ընկերոջը, ով պատկանում է տղաների նույն խմբին, ովքեր միավորված են հիմնականում թաղային պատկանելության ու թաղային հասկացություններով առաջնորդվելու սկզբունքով:

ԽԻՄԻՉԻՏ

Նշ. 1. պատրաստել թմրանյութի լուծույթ, 2. համեմատաբար փափուկ գաղութային պայմաններում կալանքն անցկացնելը: Այդպիսի գաղութներ էին բնակավայր գաղութները, 3. խառնակչություն, 4. դեսից դենից ճարել, դգել-փչել, գլխառադ անել:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. Химичить բառից, որն ունի վերը նշված նշանակությունները:

Պտմ. կա կարծիք, որ բառի առաջին իմաստով տարածում գտավ 1974 թվականից ցանկացած տեսակի թմրամիջոցներին առնչվող գործունեության համար պատասխանատվության խստացման մասին հրամանագրի ընդունումից հետո՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում: 2-

րդ իմաստով բառն օգտագործվում 1960-ականների կեսերից, երբ աշխատանքային ուղղիչ գաղութների աշխատանքների ցուցակում ընդգրկվեցին շինարարական աշխատանքների իրականացում, այդ թվում՝ մեծ քանակությամբ քիմիական արդյունաբերության օբյեկտների կառուցումը:

Լրց. ավագ սերնդի գողականների շրջանում առավելապես օգտագործվում էր 1-ին և 2-րդ իմաստներով: Միջին սերնդի գողականների շրջանում բառն օգտագոչվում էր 1-ին և 3-րդ իմաստներով: 4-րդ իմաստը հանդիպում է հիմնականում նոր սերնդի քրեականների մոտ:

ԽԻՊԻՇ

Նշ. աղմուկ, կռիվ ու սկանդալ սարքել, 2. կոնֆլիկտ ունենալ բանտային վարչակազմի հետ, բունտ բարձրացնել, 3. խուլիգանություն անել:

Ծգվ. փոխառություն՝ ռուս. քր. *хиппиш* բառից: Բառի ծագման մասին տարբեր կարծիքներ կան: Կա կարծիք, որ այն կապված է հին հանցավոր զբաղմունքներից մեկի՝ *խիպեսի* հետ: Ըստ մեկ այլ տարբերակի էլ բառը ծագել է Օդեսայի քր. ժարգոնային ձևից, որը փոխառություն է երբ. *שיפיש* (խիպուս) - իրարանցում, շփոթ ձևից: Ըստ այլ կարծիքի՝ բառը ծագում է գերմ. 19-րդ դարի արգոյի *Chippesch, Gippesch* «խուզարկություն» ձևից: Եվս մի կարծիք՝ բառը ծագում է «խիբեժ, խիբյոժ» եզրույթից, որը 1903 թվից օգտագործվում էր մարմնավաճառի օգնությամբ թալան կազմակերպելու հանցավոր գործողությունը նշելու համար:

Պսմ. առաջին նշանակությամբ օգտագործվում է ՆԷՊ-ի (նոր տնտեսական քաղաքականություն) ժամանակներից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում, իսկ 2-րդ նշանակությամբ՝ սկսած 1940-ականների կեսերից:

Բղղ. խիպիշ անել, էս ի՞նչ խիպիշ ա:

Լրց. ըստ բանասացներից որոշների բացատրության բառը ծագում է ռուսերեն *կիպյոշ* արտահայտությունից, ինչը նշանակում է իրավիճակը եռացնել, եփել:

ԽՈՆԽՄԱ

Նշ. 1. կատակ, ծիծաղելի որևէ երևույթ, 2. ծիծաղելի մարդ, 3. հումորով մարդ:

Ծգվ. փոխառություն՝ ռուս. քր. *хохма* «ձեռնածություն, ծաղր»: Ծագում է իդիշի *עמך* «իմաստություն» բառից:

Պսմ. օգտագործվում է նախահեղափոխական (1917 թ.) ժամանակներից:

Լրց. ընդհանուր օգտագործման բառ է: Ավելի տարածված է ավագ ու միջին սերնդի մեջ: Ավելի քիչ է օգտագործվում նոր սերնդի կողմից:

ԽՈՒՄԱՐ (ՂՈՒՄԱՐ)

Նշ. խաղաղությունով խաղացվող թղթախաղ, որի հասույթի մի մասը փոխանցվում էր *գողական արջակ (գողական գանձարան):*

Ծգվ. փոխառություն՝ արաբ. *خمار* (խումար) «հարբած, հարբեցումից նոր սթափված, խենթ» (ԳՁՍ):

Պսմ. քր. խոսույթում լայն տարածում է ստացել 1974 թվականից:

Լրց. բանտային միջավայրում լայնորեն տարածված պրակտիկա էր, որը հանդիսանում էր գողական գանձարանը լցնելու հիմնական ձևերից մեկը: Այդ պատճառով սկսած ստիպողականից վերջացրած մոտիվացնող տարբեր մեթոդներով շահագրգռում էին

բանտարկյալներին դումար խաղալ, քանի որ անկախ այն բանից թե ով էր հաղթում կամ պարտվում, գողական գանձարանը դրանից գումար էր ստանում: Այսինքն, որքան շատ մարդ էր խաղում, այնքան շատ գումար էր լցվում արշալակ: Նույն պատճառով նաև շատ խիստ էր նաև պարտված գումարը հաղթողին տալը, ինչը կանոնակարգվում է հատուկ քրեական մեխանիզմի՝ *թավանի* միջոցով: *Թավանի տակ* մնացողները, այսինքն գումարը չվճարողները, կարող էին *փչացվել* և գրկվել որևէ մարդկային կարգավիճակից: Այդ պատճառով պարտվածներն ամեն գնով աշխատում էին վճարել պարտված գումարը:

Ծ

ԾԱԿՎԵԼ

Նշ. 1. դատախիրավական մարմիններին տեղեկություններ հաղորդել այս կամ այն բանտարկյալի մասին, 2. թմրանյութ սրսկվել:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. *колотья* բառից, որն ունի դատախիրավական մարմիններին տեղեկություն հաղորդել իմաստը:

Պտմ. քր. խոս. առաջին իմաստով օգտագործվում է ՆԷՊ-ի (նոր տնտեսական քաղաքականություն) ժամանակներից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Լրց. ընդհանուր օգտագործման բառ է: Գողական ենթամշակույթում առավել հաճախ օգտագործվում է առաջին իմաստով: Համահունչ արտահայտություններն են *ծախել*, *գործ տալ*, *բոզկրնալ*:

ԾՅՈՒԿԵՔ

Նշ. գողական տարբեր հեղինակությունների կամ խմբավորումների միջև բանավեճ կամ խոսակցություններ:

Ծգմ. ռուս. քր. խսկց. *терки* բառից և հայերեն հոգնակի՝ -եր վերջածանցից ստացված բառ: Փոխառություն՝ ռուս. քր. *тёрки*՝ *հարաբերություններ պարզել*, *խնդրի լուծում փնտրել* բառից: Բառն առաջացել է ռուս. *тереть* «տրորել» բայից:

Պտմ. բառն օգտագործվում է նախահեղափոխական (1917 թ.) ժամանակներից: Հայկական միջավայր մուտք է գործել ռուսականից 1950-60-ականների շրջանում:

Բղղ. ծյռկեքի մեջ լինել:

Լրց. *ծյռտի* բառը քր. միջավայրում նշանակում էր խելացի, գաղափարով, հմուտ խոսակցություն վարելու ունակ մարդ: Օգտագործվում էր հիմնականում քրեական միջավայրում՝ ավագ ու միջին սերունդների շրջանում:

Կ

ԿԱԹԱՑՆԵԼ

Նշ. ինչ որ մի բան աստիճանականորեն բացատրել, համոզելու նպատակով:

Ծզմ. ծագում է հայերեն *կաթացնել* բառից, ինչը գող. ժառգնում *ձեռք է բերել աստիճանաբար* ինչ որ միտք առաջ տանելու, այսինքն ջրի նման կաթիլ կաթիլ կաթացնելու եղանակով:

Պտմ. օգտագործվում է 1970-ականներից:

Բղղ. ուղեղը կաթացնել:

Լրց. տարածված է հիմնականում ավագ և միջին սերունդների մեջ: Օգտագործվում է գլխավորապես գող. ժառգնում, սակայն տարածված է նաև թաղ. խոսակցության մեջ:

ԿԱՅՖ ԲՈՒՆԵԼ

Նշ. 1. ինչ որ մեկին ծաղրել, 2. թմրանյութեր օգտագործել, 3. վայելել պահը կամ իրավիճակը, հաճույք ստանալ:

Ծզմ. փոխառություն է ռուսերենից: Ռուս. խսկց. *ловить кайф* արտահայտության թարգմանությունը: *Кайф* ռուսերենում նույնպես փոխառություն է ենթադրաբար թուրքերեն *keyif* ձևից, որն էլ իր հերթին փոխառվել է արաբերեն համարժեք բառից, որը ունի հաճույք, վայելք իմաստները:

Պտմ. արտահայտության ռուսերեն տարբերակը տարածում է գտել 1974թ. թմրանյութերի հետ կապված որոշման ընդունումից հետո:

Բղղ. կայֆավատ լինել

Լրց. արտահայտությունը տարածված է թե քրեական և թե առօրյա խոսակցություններում: Օգտագործվում է բոլոր սերունդների կողմից:

ԿԱՆՑԱՎԻԿ

Նշ. 1. գող դառնալու նպատակ ունեցող, 2. գողին հավասար հեղինակություն, որը հրաժարվում է գող դառնալուց

Ծզմ. հավանաբար ռուս. խսկց *концевик* բառից:

Պտմ. Հայաստանում օգտագործվում է 1970-ականներից:

Լրց. կիրառվում է գողական ժառգնում: Բնորոշ է ավագ ու միջին սերունդներին:

ԿԱՄԻՏ ԱՆԵԼ

Նշ. Ինչ-որ բան թաքցնել, լեզվի տակ ինչոր բան պահել:

Ծզմ. Փոխառություն՝ ռուս. քր. *косить*՝ «խուսափել ինչ-որ բանից, կեղծել, ձևացնել»:

Պտմ. Ռուս. քր. ժառգնում բառն օգտագործվում է 1920-ականների վերջից - 1930-ականների սկզբներից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ: Հայերենում տարածում էստացել ավելի ուշ

Լրց. Օգտագործվում է միջին ու նոր սերնդի գող. միջավայրում:

ԿԱՍՅԱԿ

Նշ. 1. գաղութի ակտիվիստի կամ դրուժինիկի կարմիր թևկապ, 2. գողական հասկացողությամբ անընդունելի արարք, բաց թողում, սխալ, 3. տաբատի կողային գրպաններից մեկը, 4. հաշիշով լցունված ծխախոտ

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. косяк բառից: Ծագում է косой «թեք» բառից, սլավ. коса «մանգաղ»-ից:

Պտմ. առաջին իմաստով օգտագործվում է 1930-ականներից՝ նախկին ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում: Երկրորդ իմաստով օգտագործվում է 1920-ականներից, հիմնականում ազատագրված վայրերում՝ նախկին ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում: Երրորդ իմաստով օգտագործվում է 20-րդ դարի կեսերից, հիմնականում գրպանահատների կողմից՝ նախկին ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում: Չորրորդ իմաստով օգտագործվում է 1970-ականներից՝ նախկին ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում:

Լրց. քր. միջավայրում օգտագործվում է հիմնականում երկրորդ և չորրորդ իմաստներով:

Թաղ. միջավայրում օգտագործվում է հիմնականում չորրորդ իմաստով՝ ավագ և միջին սերնդի շրջանում: Գողականով կասյակը նաև դուռը բացող փակողն է: Զակասիտ՝ բացել, փակել, թողնել-չթողնել:

Բղղ. կասիտ անել:

ԿԵՂՏ ԲՈՆԵԼ

Նշ. Դիմացինի վրա գողական հասկացություններով սխալ համարվող արարք գործելու մեղադրանք բարդել՝ հատուկ կերպ խոսակցությունը վարելու միջոցով: 2. Գողական իմաստոց սխալ արարքի հայտնաբերմանն ուղղված խոսակցություն

Ծգմ. բառակապակցություն, կազմված է հայ. կեղտ և բռնել բառերից: Բռնելը հայերենում ունի նաև հայտնաբերել, երևան հանել նշանակությունը:

Պտմ. հայերենում տարածվել է 1970 ական թվականներից:

Լրց. գործածական է գողական ու թաղային ժառգոններում: Հաճախ նաև կիրառվում է առօրյա խոսակցության մեջ:

ԿՁՑՆԵԼ

Նշ. 1. խեղճացնել, 2. նվաստացնել, 3. լռեցնել, 4. ենթարկեցնել, 5. զզվեցնել:

Ծգմ. հայ. խսկց.՝ նվաստացնել: Կա՛մ գուտ հայկ. արտահայտություն է, կա՛մ ռուս. քր. опустить բառի նմանակում է:

Պտմ. օգտագործվում է 1960-ականներից:

Բղղ. կզցրած պահել, կզցնել-թողնել:

Լրց. գող. միջավայրում օգտագործվում է հիմնականում առաջին երեք իմաստներով: Թաղ. միջավայրում օգտագործվում է բոլոր իմաստներով: Հազվադեպ է հանդիպում: Հանդիպում է բոլոր սերունդների մեջ: Գող. ժարգոնում տարածված է նաև համարժեք «ոտքը պոչի վրա դնել» արտահայտությունը:

ԿԹԵԼ

Նշ. փոքրոգի, վախկոտ մեկից՝ համոզելու կամ վախեցնելու միջոցով պարբերաբար թանկարժեք իրեր ստանալը:

Ծգմ. ռուս. քր. доить բառի նշանակությամբ գործածվող իմաստի թարգմանությունն է:

Պտմ. ԽՍՀՄ տարածքում բառն օգտագործվում է 1970-ական թթ.ից:

Լրց. գործածվում է քրեական միջավայրում: Բավական տարածված է նաև թաղային միջավայրում և առօրյա խոսքում: Առօրյա իմաստը շատ մոտ է քրեականին, պարզապես չունի քրեական կոննոտացիա: Այսինքն, եթե քրեականում կթելը նաև ունի ստորացնելու ենթատեքստ, ապա առօրյա կյանքում ավելի շատ «կթողի» խորամանկության ու «կթվողի» միամտության ենթիմաստ ունի: Ասենք օրինակ, առօրյաում կարող է մի եղբայրը կթել մյուսին, անընդհատ խեղճացած տեսք ընդունելով ու նրանից նյութական օժանդակություն ստանալով, ինչը չունի քրեականին բնորոշ ստորացուցիչ ենթատեքստը:

ԿԻԼԴԻՄ

Նշ. 1. տարածք /տաղավար, որջ, խորշ/ որտեղ դեռահասներն ու անչափահասները անցկացնում են իրենց ժամանցը, 2. հանցագործների հավաքատեղի, 3. կռիվ, ընդհանրում, վեճ, 4. խառնաշփոթ, քառս

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. килдым «որջ, բույն»: Հնում Ռուսաստանում այդպես էին անվանում բաց կառույցը կամ տարածքը, որտեղ կարելի է ժամանակ անցկացնել ընկերների հետ: Մերձվոլգյան շրջաններում կիլդիմ են անվանում շվայտ գինարբուքը: Ուկրաինայի որոշ մասերում այդպես է կոչվում մեծ հավաքը:

Պտմ. բառը ռուս. միջավայրում օգտագործվում է նախահեղափոխական (1917 թ.)

Ժամանակներից: Հայկ. միջավայր է ներթափանցել խորհրդային տարիներին:

Լրց. Քր. միջավայրում օգտագործվում է երկրորդ իմաստով և հիմնականում հին սերնդի միջավայրում: Թաղ. միջավայրում օգտագործվում է երրորդ և չորրորդ իմաստներով: Հիմնականում միջին ու նոր սերնդի մեջ:

ԿԻՄԱՐԻՏ

Նշ. 1. քնել, աչք կացնել, 2. կիսարթուն վիճակ, 3. թմրանյութի ազդեցության տալ լինել:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. кимарить, кимать «քնել, հանգստանալ»: Ավանդաբար համարվում է հունարենից ռուսերենի արգո անցած ձև (հուն. κείμαι «պառկած եմ», κοιμάμαι «քնած եմ»): Ըստ այլ վարկածի՝ բառը ծագում է նիս. Սլավ. *kyvati «զլուխը վերուվար անել» ձևից:

Պտմ. բառն առավել տարածում է գտել 1974 թվականից՝ նախկին ԽՍՀՄ ողջ տարածքում:

Լրց. գող. միջավայրում օգտագործվում է հիմնականում առաջին և երկրորդ իմաստներով: Տարածված է ավագ ու միջին սերնդի շրջանում:

Թաղ. միջավայրում հազվադեպ է հանդիպում: Այստեղ օգտագործվում է նաև երրորդ իմաստով:

ԿԻՇԿԻ ՄԵՌԱԾ

Նշ.1. Մննդի, ուտելիքի համար ամեն ինչի պատրաստ մարդ: Որկրամուլ, 2. գողոն, գողացված իր:

Ծգմ. Ռուս. ժոգ. *кишка` աղիք* բառի և հայերեն *մեռած*: Հայերենում տարածված է *մեռնել, մեռած* բառերի համակցությամբ մարդու գայթակղությունը, ինչ որ մի բանով տարվելու թուլությունը նշելը:

Բղղ. Կիշկադրոմ, կիշկա բացել:

Լրց. քրեական ենթամշակույթում օգտագործվում է երկու նշանակություններով: Թաղ. միջավայրում և առօրյա խոսակցություններում օգտագործվում է առաջին իմաստով:

Տարածված է հիմնականում ավագ և միջին սերունդների մեջ

Գողական միջավայրում համարվում է դատապարտելի բան, պախարակելի թուլություն: Քանի որ համարվում է վտանգավոր բան, որովհետև *կիշկի խաթեր* մարդ կարող է դավաճանել, մատնությամբ զբաղվել, այսինքն *գործ տալ*:

ԿԿԵԼ

Նշ. սեռական կապ ունենալ:

Ծգմ. հայ. քր.՝ «սեռական կապ ունենալ»: Հավանաբար եկել է թարգմանաբար՝ ռուս. քր. *гнеть* «ենթարկել, ստիպել կամքին հակառակ գործողություն կատարել»:

Լրց. քր. աշխարհում ծանոթ են, բայց համարում են, որ քր. միջավայրում չի ծագել: Տարածված է բոլոր սերունդների մեջ: ներկայումս երիտասարդության մեջ շատ չի գործածվում:

ԿՅԱՆՔԻ ՏՂԱ

Նշ. գողական հասկացություններին քաջածանոթ և դրանց հարգանքով վերաբերող անձ, ով սակայն գողական կյանքով չի ապրում:

Ծգմ. նմանակում՝ ռուս. քր. *пазан по жизни*: Ծագում է հայ. կյանք և տղա բառերից: Կյանք՝ հայ. կազմություն *կեա* և *ան*: Հնարավոր է *կեան* ձևի անմիջական հնդեվր. ծագումը: Տղա՝ հայ. *տղայ*-ը փոխառություն ասոր. *Talyā*:

Պտմ. Հայաստանում առավել լայն շրջանառություն է ստացել 1990-ականներից ի վեր:

Լրց. առավել բնորոշ է թաղային խոսակցական լեզվին:

ԿՈՂԼ

Նշ.1. խաղաքարտերի կապոց, 2. մարդկանց խումբ /չափահասների և անչափահասների/, որ հակված է հանցագործության, գողության, կոմպրոմիսի և այլն, 3. ցանկացած խումբ, որ միասին ժամանակ է անցկացնում:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. *кодла, кодыак* «հավաքույթ»: *Кодло* «գողերի խումբ» բառի ձևափոխումն է: Ծագում է նիդեր. *kudde* «նախիր» ձևից: Որոշ լեզվաբաններ համարում են, որ բառը ծագում է լեհ. *Godlo* «նշանաբան, խորհրդանշան» բառից:

Բառն օգտագործվում է նախահեղափոխական (1917 թ.) ժամանակներից:

Բղդ. կողլավատ:

Լրց. գող. միջավայրում օգտագործվում է 1-ին և 2-րդ իմաստներով: Քաղ. միջավայրում օգտագործվում է բոլոր երեք իմաստներով: Առավել տարածված էր ավագ ու միջին սերունդների միջավայրում:

ԿՊՆԵԼ

Նշ. 1. անհիմն մեղադրել, վիրավորել, 2. անտեղի կոնֆլիկտ ստեղծել, 3. ինչ-որ բան ստացվել /գործ կպնել, փող կպնել/

Ծգմ. հայ. կպնել բառի ժարգոնային իմաստափոխումն է: Համարժեք ժարգոնային արտահայտություններն են *պիտնո բռնել, կիլղիմ բռնել, կեղտ բռնել, սխալ բռնել, յակովել, դայաղվել:*

Պտմ. Հայաստանում տարածված է 1960-1970-ականներից:

Լրց. գող. ժարգոնում օգտագործվում է առաջին և երկրորդ իմաստներով: Թաղ. միջավայրում օգտագործում են բոլոր 3 իմաստներով: Հանդիպում է բոլոր սերունդների բառապաշարում:

ԿՌԻՍ

Նշ. 1. Կալանավոր, որն ուրիշի իրը վերցրել է առանց թույլտվության, 2. դավաճան, 3. խաբեբա, ստախոս

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. крыса (առնետ): Крыса բառի ծագումն անհայտ է: Ենթադրաբար, կապ ունի крызу «կրծում եմ» ձևի հետ: Մի այլ վարկածով՝ ազգակցություն ունի. հն. հնդ. krúdhyaṭi «զայրանալ, բարկանալ» ձևի հետ:

Պտմ. բառն օգտագործվում է 1930-ականներից:

Բղդ. կռիսություն, կռիսավարի, կռիսական:

Լրց. առօրյա խոսակցության մեջ գործածվում է վերջին իմաստով, գող. խոսվածքին բնորոշ է առաջին նշանակությունը

ԿՐՈՒՏԻՏ

Նշ. 1. կալանքի ավելացում կամ նոր կալանքի դատապարտում կալանավայրում գործած հանցագործությունների համար /փախուստ, սպանություն և այլն/, 2. բանավեճի ընթացքում մեղադրանքից խուսափում: Գողական բանավեճի ժամանակ հմուտ կերպով, տարբեր արդարացումների կամ հիմնավորումների միջոցով մանևերելով մեղադրական թեմաներից խուսափելը:

Ծգմ. ռուս. գող. ժոգ. крутить, крутануть՝ պտտել բառերից:

Պտմ. ԽՍՀՄ-ում օգտագործվում է 1930-ականներից: Հայաստանում տարածվել է 1950-1960-ական թվականներից:

Բղդ. կրուտիտ լինել, կրուտիտներ անել:

Լրց. քր. միջավայրում առաջին իմաստով օգտագործվում է միայն ավագ սերնդի շրջանում: Երկրորդ իմաստով օգտագործում են միջին ու նոր սերունդները: Թաղ. միջավայրում ևս օգտագործվում է հիմնականում երկրորդ իմաստով: Գողը, գողականը չի կարող անել: Իրենք

մեղադրանք են ներկայացնում (պրիդավիտ են անում) իրենցից ցածրերին: Հաճախ դա կարող է վերաբերել դուրմարի գումարը չվճարելուն:

ԿՈՒՏՈՎ

Նշ. 1. կալանավորների ճաշակով առանձնացված հատված, անկյուն (պոսիտո), 2. խումբ:

Օգմ. փոխառություն ռուս. քր. *кюток* բառից, որը ունի հետևյալ իմաստները՝ 1. որջ, 2.

բռնավորների խումբ 3. թաքստոց, թմրանյութերը պահելու վայր:

Պտմ. բառն օգտագործվում է 1930-ականներից, հիմնականում ազատագրկման վայրերում՝ նախկին ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում:

Բղղ. գողերի կուտոկ, բոգերի կուտոկ

Լրց. գող. միջավայրում օգտագործվում է հիմնականում առաջին նշանակությամբ: Թաղ.

խոսքում օգտագործվում է հիմնականում երկրորդ նշանակությամբ: Գործածական է հիմնականում ավագ ու միջին սերնդի շրջանում:

ԿՈՒՏ ՏԱԼ

Նշ. գրավիչ առաջարկների միջոցով դիմացինին համոզել, մանիպուլյացիայի ենթարկել:

Օգմ. ծագել է թռչուններին որսալու ժամանակ կուտ տալու միջոցով թակարդը զցելու գործողության իմաստից: Ժարգոնային խոսվածքում նույն իմաստն ունի, քանի որ կիրառվում է նույն կերպ դիմացինին գայթակղելու ու խաբելու նպատակով:

Պտմ. օգտագործվում է Հայաստանում սկսած 1960-ականների վերջերից:

Բղղ. կտավատ անել:

Լրց. տարածված է բոլոր սերունդների մեջ: Կիրառելի է ինչպես քրեական, այնպես էլ թաղային ու առօրյա խոսակցություններում: Հիմնականում օգտագործվել է հարիֆներին կամ չմոներին որևէ բան համոզելու ու խաբելու համար:

ԿՈՒՐԱԺԻՑՑԱ

Նշ. 1. ձևեր թափել, ցուցադրականորեն լավ տղա իրեն ներկայացնել, 2. զվարճանալ, ձեռք առնել, ծաղրել:

Օգմ. փոխառություն՝ ռուս. քր. *куражиться*: Ծագում է *кураж* բառից, որը փոխառված է ֆրնս. *courage* «խիզախություն» բառից, որն առաջացել է *cœur* «սիրտ» արմատից:

Պտմ. Ռուսաստանում բառն օգտագործվում է նախահեղափոխական (1917թ.)

ժամանակներից: Հայաստանում տարածում է գտել 1970-ականներից սկսած:

Լրց. հայաստանյան միջավայրում ավելի շատ օգտագործվում է առաջին իմաստով և ավելի հազվադեպ՝ երկրորդ: Գործածվում է բոլոր սերունդների կողմից:

ԿՈՒՐՅԱՏՆԻՎ

Նշ. մեկուսի տարածք, որը քրեականների կողմից բանտային միջավայրում հատկացված է նույնասեռական բանտարկյալներին:

Օգմ. փոխառություն՝ ռուս. քր. *курытник*՝ հավաբուն, բաժին կամ բարաք, որտեղ

ապրում են ճամբարային նույնասեռականները: Բառը ծագել է *кура, кур*՝ *աքլոր*, հն. սլավ. *коуръ* ձևից:

Պտմ. Բառն օգտագործվում է 1930-ականներից, հիմնականում ազատագրկման վայրերում՝ նախկին ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում:

Լրց. Թաղային և առօրյա խոսակցություններին բնորոշ է: Հիմնականում գործածվում է բանտային միջավայրում:

ԿՈՒՐՍՎԵԼ

Նշ. որևէ հարցում ճիշտ կողմնորոշվելու համար վստահելի մարդուց անհրաժեշտ տեղեկություններ ստանալ

Ծգմ. հայ. կուրս՝ *ուղղություն, ընթացք* բառից: Ծագում է լատ. *Cursus*՝ *ընթացք, ուղի*:

Պտմ. Հայաստանում տարածում է ստացել 1990-ականներից:

Բղղ. *կուրսի լինել, կուրսավորվել:*

Լրց. ընդհանուր օգտագործման բառ է ինչպես գողական այնպես էլ թաղային ժառգնում: Օգտագործվում է հիմնականում միջին և կրտսեր սերունդների շրջանում: Թաղային ու գողական միջավայրերից դուրս առօրյա խոսակցություններում ավելի հազվադեպ է հանդիպում:

Հ

ՀԱՄԲԱԼ

Նշ.1. խոշորամարմին մեկը, որին օգտագործում են կամ ուրիշներին վախացնելու կամ ինչոր ծանր գործեր անելու համար, *2.* ուրիշի համար աշխատող, ուրիշին ծառայող: Ունի նաև *հիմար* իմաստը:

Ծգմ. հայ. խսկ. համալ, համբալ՝ *բեռնակիր*: Ծագում է արաբ. *حمال* (*ḥammāl*)՝ *բեռնակիր*, *բարձող* ձևից:

Հայ. քր. *համբալը* փոխառություն է ռուս. քր. *амбал*՝ *1.* ամրակազմ մարդ, *2.* գողացված իրերը տեղափոխող *2.* ուրիշի հանցանքը իր վրա վերցնող»: Ռուս. *амбал*-ի ծագման մի քանի վարկած կա: Ամենատարածվածն են՝ *1.* բառը փոխառված է պրսկ.-ից՝ Կասպից ծովի նավահանգիստներում աշխատող բեռնակիրների անվանումից: Պրսկ. բառը ծագում է նույն արաբ. ձևից, ինչ հայ. համբալը: *2.* արամ. *ܠܒܠܐ* «ամբար» (ցորենի պահեստարան) ձևից անցել է եբրայերենին: Օղեսայի հրեաները ցորենի պահեստի բեռնակիրներին անվանել են «*амбарный*» (ամբարնիյ), բայց քանի որ հրեաները դժվարանում են Ռ և Բ հնչյուններն արտաբերելիս, ապա *амбарный*-ն վերածվել է *амбальный* ձևին:

Պտմ. օգտագործվում է նախահեղափոխական ժամանակներից հիմնականում հարավի և արևելյան կալանավայրերում:

Բղղ. համբալություն անել, համբալավարի, ատմասկի համբալ:

Լրց. գող. ժարգնում օգտագործվում է հիմնականում առաջին իմաստով: Թաղ. միջավայրում տարածված է երկրորդ նշանակությունը: Օգտագործվում է բոլոր սերունդների շրջանում:

Որպես հոմանիշներ գործածվում են *շկաֆ, գարդերոբ, շիֆաներ, եզ, հարիֆ, շեստյորկա* բառերը:

ՀԱՐԻՖ

Նշ. 1. ոչ գողական դատապարտյալ, որը ընդունում է գողական օրենքները և հարգանք է դրսևորում գողերի հանդեպ, 2. խեղճ, միամիտ, ուրիշներին հեշտ վստահող մարդ, ում հեշտ է խաբել:

Ծգմ. հայ. խսկց. հարիֆ: Փոխառություն՝ արաբ. حريف (harif)՝ ընկեր, բարեկամ:

Բղղ. հարիֆություն անել, հարիֆավարի, հարիֆցնել:

Լրց. գող. ժարգոնում օգտագործվում է հիմնականում առաջին իմաստով: Թաղ. միջավայրում սարածված է երկրորդ իմաստը: Գործածվում է բոլոր սերունդների մեջ: Հոմանիշ է թաղ. խոս. *միամիտ* բառին: Մոտ է քր. խոս. *ֆրաեր* բառին:

ՀԱՎԱՅԻ

Նշ. անիմաստ, անտեղի, իզուր:

Ծգմ. փոխառություն՝ թրք. Havai՝ օդային բառից, որի փխբ. իմաստն է *թեթևամիտ, ցանցառ, անարժեք, դատարկ*:

Պտմ. օգտագործվում է հայ. խսկց. շատ վաղ շրջանից:

Բղղ. հավայի տեղ, հավայի գյաղա, հավայի խոսել *հավայի բաներ ասել*:

Լրց. գործածական է բանտ. և թաղ խսկց.: Ընդհանուր օգտագործման բառ է: Վերաբերում է ինչպես խոսքին ու արարքին, այնպես էլ մարդուն: Ընդհանուր օգտագործման բառ է: Որպես հոմանիշներ թաղ. խոսակցության մեջ գործածվում են *ֆուֆլո, տուֆտա* բառերը:

ՀԱԼԱԼ/ՆԵՐ

Նշ. 1. գողական հասկացություններից չշեղվող, դրանք չխախտող, վրան բիծ չունեցող մարդ կամ մարդիկ, 2. յուրային կամ յուրայիններ, 3. առհասարակ մաքուր, ազնիվ մարդ մարդիկ:

Ծգմ. փոխառություն՝ արաբ. حلال հալալ՝ թույլ տրված, լիակատար, օրինական: Ղուրանում «հալալ»-ը հակադրվում է «հարամ»-ին՝ որպես լավի և վատի, ճշտի ու սխալի հակադրություն:

Պտմ. բառն օգտագործվում է հայ. խսկ. շատ հին ժամանակներից:

Բղղ. հալալ ախպեր:

Լրց. հավանաբար գողական ժարգոն է թափանցել ժողովրդա-խոսակցական լեզվից: Համընդհանուր օգտագործման բառ է, բայց գող. ժարգոնում օգտագործվում է առաջին և երկրորդ իմաստներով, իսկ թաղ. միջավայրում՝ երրորդ նշանակությամբ: Որպես հոմանիշներ գործածվում են *մաքուր, սվոյ* բառերը:

Ճ

ՃԻՇՏ

Նշ. գողական ենթամշակույթում ճշմարիտ համարվող դոգմատիկ հասկացություններ, որոնք ընկած են հարաբերությունների հիմքում:

Ծգմ. հայերեն խոսակցական *ճիշտ* բառից, որը գող. ժարգոնում գործածվում է բացառապես այդ ենթամշակույթի հիմքը կազմող հասկացությունների համար:

Պսմ. ենթադրվում է որ հայ. գող. ժարգոնում այն հիմնավորվել է 1950-ականներին:

Բղղ. ճշտով տղա, ճշտի մեռած, ճիշտը պահել, ճիշտ կյանք, հարցերը ճշտով լուծել, ճիշտը մեկն է:

Լրց. գող. աշխարհի ներկայացուցիչները պարտավոր են հարցերը լուծել «ճշտով»: Ընդունված է, որ յուրաքանչյուր երևույթի, հարաբերության ձևի մեկ ճիշտ ձև կա: Այս բառի գործածումը գող. ժարգոնում վերաբերում է բացառապես այդ աշխարհի անբեկանելի հասկացություններին: Թաղ. միջավայր բառի նման նշանակությամբ գործածումը տարածված է գող. և նրանց հարող տղաների միջավայրում: Թաղ. միջավայր ներթափանցել է գող. ժարգոնից:

ՃԻՇՏ ԿՅԱՆՔ

Նշ. 1. գող. աշխարհում ընդունված հասկացություններով ու նորմերով ապրելը, 2. գողերի ապրած կյանքը:

Ծգմ. ծագում է գող. ժարգոնի *ճիշտ* հասկացությունից:

Պսմ. ենթադրվում է, որ գող. և թաղ. ժարգոնում սկսել է տարածվել 1950 ականներից: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԽՍՀՄ Ներքին գործերի ժողկոմիսարիատը (ՆԳԺԿ – НКВД) պատերազմ սկսեց *օրենքով գողերի* դեմ, բոլորին հայտարարելով «կազմակերպված հանցագործներ»: Նրանք, ովքեր իրենց համարում էին *օրենքով գողեր*, դատապարտվում էին ազատազրկման: Շատ *օրենքով գողեր* այդ պատճառով հրաժարվեցին իրենց կոչումներից: Իսկ նրանք ովքեր չհրաժարվեցին գողական աշխարհում սկսեցին կոչվել ճիշտ կամ ճշմարիտ գող (воp правилный):

Բղղ. ճշտով ապրել:

Լրց. երկու իմաստներով օգտագործվում է հիմնականում միջին և նոր սերնդի շրջանում: Գործածական է նաև թաղ. միջավայրում:

Ս

ՍԱԼԱԼԵՏԿԱ

Նշ. 1. անչափահաս կալանավոր, 2. անչափահասների համար ուղղիչ-աշխատանքային գաղութ, 3. դեռահաս:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. малолетка՝ անչափահաս կալանավոր բառից

Պտմ. բառը, հավանաբար ծագել է Դոնի, Կուբանի, Օրենբուրգի կազակների մեջ մինչև 1917 թ. ընդունված малолетка «քիչ տարիք ունեցող» բառից, որը նշանակում էր բանակում դեռևս չծառայած մեկը: Բառն օգտագործվում է 1960-ականներից, հիմնականում ազատագրկման վայրերում՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. մալալետկա լակոտ, մալալետկա նստել:

Լրց. գող. ժարգոնում օգտագործվում է առաջին և երկրորդ իմաստներով: Թաղ. միջավայրում օգտագործվում է հիմնականում առաջին և երրորդ իմաստով: Համընդհանուր օգտագործման բառ է:

ՄԱՆԴԱԼՈՇԿԱ

Նշ. քր. միջավայրում ստորացման ենթարկված անձ՝ փչացած, 2 հակահիգիենիկ տիպ, 3. պարազիտ կենդանի:

Ծգմ. ըստ մի վարկածի՝ ծագում է լեհերեն mądowneska, [mendoweska](#) բառից, որ թարգմանվում է *ոջիլ*:

Պտմ. Հայաստանում տարածված է 1970-ականներից: Ներկայումս բառը շատ հազվադեպ է գործածվում:

Լրց. գող. միջավայրում այդպես կարող են անվանել *փչացածներին, թռածներին*, անցանկալիներին: Թաղ. միջավայրում գործածվում է երկրորդ իմաստով, հիմնականում թեթև վիրավորանք հասցնելու նպատակով: Օգտագործվում է հիմնականում ավագ սերնդի մեջ:

ՄԱՆԴՐԱԺ

Նշ. 1. վախից, անկարողությունից առաջացած զգացում, 2. ինքնատիրապետման կորուստ, 3. քողազերծման, ձերբակալման երկյուղ:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. мандраж: Բառի ծագումը պարզ չէ:

Պտմ. Բառի օգտագործման ստույգ ժամանակահատվածը չի ճշտված (հայտնի է, որ ցարական Ռուսաստանի կրկեսային դերասաններն օգտագործում էին այդ բառը, երբ անսպասելիորեն չէին կատարում անելիքը, կամ սխալ էին թույլ տալիս ելույթի ժամանակ):

Բղղ. մանդրաժի մեջ լինել, պոլնի մանդրաժ, մանթո մնալ, սիամանթո:

Լրց. բառը գող. ժարգոնում գործածվում է բոլոր իմաստներով, իսկ թաղ.՝ միայն առաջին երկու: Թաղ. ժարգոն է ներփաթանցել գող.-ից: Ներկայումս ավելի գործածական է առաջին երկու իմաստները: Կիրառվում է բոլոր սերունդների կողմից:

ՄԱՉԻՏ ԱՆԵԼ

Նշ. 1. հրազենի օգտագործմամբ սպանել, 2. ցանկացած միջոցով սպանել:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. мочить՝ սպանել:

Պատ. բառն օգտագործվում է նախահեղափոխական (1917 թ.) ժամանակներից:

Բղդ. մաշիլովկա:

Լրց. գող. ժարգոնին բնորոշ է հիմնականում առաջին նշանակությունը: Տարածված էր ավագ սերնդի մեջ: Թաղ. միջավայրում օգտագործվում է նաև երկրորդ իմաստով՝ ավագ ու միջին սերնդի մեջ:

ՄԱՍՏ

Նշ. 1. հանցագործ աշխարհում՝ կարգավիճակ, կաստա, խումբ, 2. հաշիշի կոչտուկ, 3. թղթախաղի ժամանակ նշվող խաղաքարտի այս կամ այն տեսակը, 4. բնավորության և նախընտրությունների նմանություն:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. мاست՝ *կարգավիճակ, թղթախաղի խաղաքարտի տեսակ բառից:*

Պատ. բառն օգտագործվում է 1920-ականների վերջից - 1930-ականների սկզբներից, հիմնականում ազատագրկման վայրերում՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղդ. մաստը փոխել, մաստը բռնել, մաստը չբռնել, նույն մաստի:

Լրց. գող. միջավայրում օգտագործվում է առաջին երեք իմաստներով: Առաջին իմաստով նշվում են բանտային տարբեր կարգավիճակի բանտարկյալների խմբերը՝ օր. *գողերի մաստ, հարիճների մաստ, չուռկաների մաստ:*

1930-ական թթ. հանցագործ աշխարհում կային երեք մաստեր՝ *գողեր, մուժիկներ, ֆրայերներ:* 1960-ի սկզբներին ԽՍՀՄ-ում նոր ազատագրկման կողմնակալ ընդունումից հետո ավելացան նոր ենթակաստաներ՝ *թոսածներ, կոտրվածներ, կարմիր գլխարկներ, ցուլիկներ* և այլն: Ըստ այդմ նաև դատապարտվածներին առանձնացնում էին տարբեր հարկաբաժիններում կամ տնակներում /Ձուգումով/:

Թաղ. միջավայրում հիմնականում գործածվում է երրորդ և չորրորդ իմաստով:

ՄԵԾ ԱԽՊԵՐ

Նշ. 1. գողերին ու գողական հեղինակություններին դիմելու ձև, 2. հեղինակություն ունեցող մարդ:

Ծգմ. առաջացել է *մեծ* և *եղբայր* բառի արևելահայ. խսկց. *ախպեր* ձևից: Մոտ է ռուս. քր. баты հասկացությանը:

Պատ. Հայկական քր. խոսույթում տարածվել է 1970-ականներից:

Բղդ. *մեծություն, մենձ ախպեր:*

Լրց. գող. ժարգոնում ընդունված է առաջին նշանակությունը: Հաճախ նման արտահայտությամբ դիմում էին *բազածով գողերին:* Թաղ. միջավայրում համընդհանուր օգտագործման բառ է և կարող է վերաբերել ցանկացած հեղինակություն ունեցող մարդու, այդ թվում՝ մեծ եղբորը: Սովորաբար դիմում են մեկ սերունդ բարձր և հեղինակություն վայելող անձին:

ՄԵՆԹ

Նշ. ոստիկան, 2. անդուր մարդ

Ծզմ. ռուս. քր. мент` *նստիկան* բառից, որը, հավանաբար, փոխառված է լեհ. menda *նստիկան* ձևից: Այլ վարկածով` 19-րդ դարի հունգարացի նստիկանների mentik հագուստի անվանումից:

Պտմ. բառն գործածումը ռուսական միջավայրում գալիս է նախահեղափոխական (1917 թ.) ժամանակներից: Հայկական միջավայրում ավելի լայն տարածում է ստացել 1960-ականներից:

Բղղ. մենթի բազար, մենթի տղա, մենթ գյաղա, մենթնոց, մենթովկա:

Լրց. բառը գործածական է ավագ և միջին սերունդների մոտ, կրտսեր սերնդի միջավայրում շատ հազվադեպ է կիրառվում:

ՄԵՆԹՆՈՑ

Նշ. քաղաքային կամ մարզային միլիցիայի բաժանմունք, նստիկանատուն:

Ծզմ. փոխառություն` ռուս. քր. ментовка (ментура)` *նստիկանական բաժանմունք*: Բառը ծագում է мент` *նստիկան* բառից:

Պտմ. բառն ամենուր օգտագործվում էր նախահեղափոխական (1917 թ.) ժամանակներից սկսած: Հայկ. միջավայրում տարածում է ստացել 1960-ականներից:

Բղղ. մենթի բազար, մենթի տղա, մենթ գյաղա, մենթովկա:

Լրց. Բառը գործածական է ավագ և միջին սերունդների մոտ: Երիտասարդ սերնդի միջավայրում շատ հազվադեպ է հանդիպում: Որպես հոմանիշներ ունի *միլիցայանոց*, *մուսրոնոց*, *մենթովկա*, *բոզանոց* ձևերը:

ՄՈՒԽԼՅՈՑ

Նշ. 1. թղթախաղում խարդախության, խորամանկության դիմող անձ, 2. կեղծ գողական, 3. կեղծիք:

Ծզմ. քր. իսկց. բառի ծագման մասին կա երկու հիմնական մոտեցում: 1. Ռուս. քր. իսկց. мухлевать բառից ստացված ձև, որն իր հերթին յուրացվել է գերմ. moheln` *նշում անել խաղաքարտերի վրա*, mogeln` *խարդախել*: 2. Եբր. mâhal` *կտրել, գինու մեջ ջուր ավելացնել*:

Պտմ. բառն օգտագործվում է նախախորհրդային ժամանակներից:

Բղղ. մուխլյովշիկ, մուխլյոժ անել:

Լրց. գող. ժարգնում գործածվում է առաջին իմաստով: Երկրորդ և երրորդ իմաստները գործածական են թաղ. իսկց.: Որպես հոմանիշ հանդիպում է նաև *մուֆլյոժ* ձևով:

ՄՈՒԺԻԿ

Նշ. 1. հարգված հարիֆ, որը գողական չէ` հաճախ ավագ տարիք ունեցող, 2. իսկական տղամարդ, որոշ իմաստով համարձակ կամ խոսքի տեր տղամարդ:

Ծզմ. փոխառություն` ռուս. քր. мужик` ճամբարում բարեխղճորեն աշխատող շարքային դատապարտյալ: Ծագում է հն. ռուս. мужикъ «ցյուղացի, ռամիկ», նիս. սլավ. *mъžikъ «մարդուկ, ցածրահասակ տղամարդ»:

Պտմ. բառն օգտագործվում է 1930-ականներից` նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. մուժիկավարի:

Լրց. գող. ժարգոնում օգտագործվում է առաջին իմաստով: Թաղ. միջավայրում տարածված է հիմնականում երկրորդ իմաստը: Ավելի շատ գործածական է ավագ ու միջին սերնդի մեջ: Կալանավայրերում՝ մարդկանց խումբ, որը չի ապրում գողական կյանքով, բայց միևնույն ժամանակ հրաժարվում է համագործակցել վարչակազմի հետ: Գողականները հիմնականում ապրում են մուժիկների հաշվին ու աշխատում են պաշտպանել նրանց բեսպրեդելից:

ՄՈՒՍՈ

Նշ. ոստիկան, 2. սովետական միլիցիոներ:

Ծզմ. փոխառություն՝ ռուս. քր. мусор՝ միլիցիոներ, ՆԳ բաժնի աշխատակից: Բառի առաջացման մի քանի վարկած կա: Ամենապարզ վարկածը, мусор՝ աղբ բառն օգտագործված է իր ուղիղ իմաստով: Ըստ մեկ այլ մեկնաբանության էլ դա «Մոսկվայի հետախուզման և քննչական վարչություն» անվան հապավումն է (ռուս. Московское Управление Сыска и Расследований - МУСР): Մեկ այլ վարկածով բառն առաջացել է իդիշի ֆրազա *מוסר* ղի մուսեն՝ մատնիչ բառից:

Պտմ. բառն օգտագործվում է ՆԷՊ-ի (նոր տնտեսական քաղաքականություն) ժամանակներից: Հայաստանում գործածության մեջ է հայտնվել ավելի ուշ՝ 1950-1960-ական թվականներից:

Լրց. օգտագործվում է բոլոր միջավայրերում, հիմնականում՝ ավագ ու միջին սերունդների մեջ: Ներկայումս երիտասարդ սերնդի մեջ համարյա թե չի գործածվում:

ՄՈՒՏԻՏ

Նշ. խառնակչություն

Ծզմ. փոխառություն՝ ռուս. քր. мутить՝ կոնֆլիկտային իրավիճակ հրահրել բառից:

Պտմ. ռուս. քր. միջավայրում բառն օգտագործվում է նախահեղափոխական (1917 թ.) ժամանակներից: Հայկ. միջավայրում տարածում է գտել 1960-70-ական թվականներից:

Բղղ. մուտիտ անել, մուտիլովկա, մուտիլ(ով)չիկ:

Լրց. Գող. աշխարհում *մուտիտ անելը* չէր հարգվում: *Մուտիլովկի* համար կարող էին պատժել: Բառը գործածական է գող. և թաղ. ժարգոններում՝ բոլոր սենունդների միջավայրում: Թաղ. միջավայր ներթափանցել է գող.-ից:

ՄՈՒՏԻԼՈՎԿԱ

Նշ. 1. խառնակչություն, 2. կեղծ փաստարկումների միջոցով շփոթություն առաջացնել:

Ծզմ. փոխառություն՝ ռուս. քր. мутилово կեղծիք, համոզիչ սուտ բառից: Տե՛ս **ՄՈՒՏԻՏ**:

Պտմ. հայկ. միջավայրում տարածում է գտել 1960-70-ական թվականներից:

Բղղ. մուտիլովկա անել:

Լրց. հոմանիշ է գող. ծառգոնի մեկ այլ՝ պառաշ բառի:

Ն

ՆԱՅԻԺԱՏ ԱՆԵԼ

Նշ. 1. նվաստացնել, 2. վրա տալ, ճնշել, նեղել, 3. դաս տալ:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. наезжать՝ վրա տալ բառից: Բառի ծագումը՝ տե՛ս **ՆԱՅԵԶՂ** բառահոդվածը:

Պտմ. բառն օգտագործվում է 20-րդ դարի կեսերից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:
Լրց. գող. ժարգոնում կիրառվում է բոլոր սերունդների կողմից: Երրորդ իմաստով կիրառվում է միայն գող. ժարգոնում: Թաղ.միջավայրում կիրառվում է ավելի հաճախ երկրորդ, և ավելի հազվադեպ՝ առաջին իմաստներով: Գործածական է հիմնականում ավագ ու միջին սերունդների մեջ: Երիտասարդ սերնդի կողմից նկատելի է գործածության անկման միտում:

ՆԱՅԵԶՂ

Նշ. 1. կալանավայրերում վարչակազմի ներկայացուցիչների կողմից հաճախ կալանավորների նկատմամբ ֆիզիկական բռնության ուղեկցությամբ իրականացվող շրջայցը, 2. որն է մեկի կամ խմբի վրա խեղճացնելու կամ ինչ-որ բան ստանալու նպատակով իրականացվող խոսքային կամ ֆիզիկական բռնություն մեկ այլ անձի կամ խմբի կողմից:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. наезд վրա տալ բառից:

Պտմ. ռուս. քր. խոսույթում օգտագործվում է ՆԷՊ-ի (նոր տնտեսական քաղաքականություն) ժամանակներից՝ երկրի ամբողջ տարածքում: Հայաստանում տարածում է ստացել 1960-1970-ականներից:

Բղղ. նայեզդ անել:

Լրց. գող. ժարգոնին բնորոշ են երկու իմաստներն էլ: Թաղ. միջավայրում գործածվում է միայն երկրորդ նշանակությամբ: Բնորոշ է ավագ ու միջին սերունդներին: Տարեցտարի նվազում է երիտասարդության միջավայրում կիրառումը:

ՆԻՐՅԱՏ ԼԻՆԵԼ

Նշ. 1. գող. իսկց. ժամանակ՝ միջամտելով խորանալ խնդրի մեջ, 2. գրպան մտնել, 3. գողության նպատակով տուն մտնել, 4. փակվել, ժամանակավոր թաքնվել

Ծգմ. Փոխառություն՝ ռուս. քր. нырнуть «1. Ինչ-որ տեղ խցկվել, սողոսկել: 2. Միջամտել, խորանալ»: Բառը ծագում է ռուս. нырять «սուզվել», նիս. սլավ. нырз ձևից:

Պտմ. Խոսքը համատարած օգտագործվում էր գրպանահատների և տան գողերի շրջանում, սկսած նախահեղափոխական (1917 թ.) ժամանակներից մինչև 20-րդ դարի կեսերը, երբ փոխարինվեց аукануться «արձագանքել» բառով: Այդ ժամանակից нырнуть բառն օգտագործվում է 2-րդ նշանակությամբ:

Լրց. առաջին, երկրորդ, երրորդ իմաստները բնորոշ են գլխավորապես գող. ժարգոնին, օգտագործվում է հիմնականում ավագ և միջին սերնդի կողմից: Երրորդ նշանակությունը գործածական է թաղային միջավայրում:

ՆԻՇՏՅԱԿ

Նշ. 1. գերազանց, լավ վիճակ, 2. թմրանյութի ազդեցությանը հաճելի վիճակ, 3. սնունդ,

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. ништяк «լավ, գերազանց»: Առաջացել է не что «մի բան» («нешто» արտասանությամբ), որն առաջացել է что դերանունից, նիս. սլավ. *чъто ձևից:

Պտմ. Բառ Ռուսաստանում օգտագործվում է ՆԷՊ-ի (նոր տնտեսական քաղաքականություն) ժամանակներից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Լրց. երեք նշանակություններն էլ կիրառելի են գող.ժարգոնում: Վերջին նշանակությունը բնորոշ է հիմնականում ավագ սերնդին: Թաղ.միջավայրում կիրառվում է առաջին նշանակությամբ՝ հիմնականում ավագ սերնդի կողմից: Նոր սերնդի կողմից չի կիրառվում:

Յ

ՅԱԽՇԻ

Նշ. լավ տղա, հարցեր լուծող տղա:

Ծգմ. փոխառություն՝ թաթ. ԿХАԿԻ «լավ»:

Բառը ծագում է հն. թյուրք. *yakısıg* «բարետես» ձևից:

Պտմ. բառն օգտագործվում է թյուրքալեզու ժողովուրդների լեզվում հին ժամանակներից, քր. խոսույթում՝ 20-րդ դարի կեսերից: Հայկական միջավայրում տարածում է գտել 1990-ականներից:

Լրց. արտահայտությունը ավելի տարածված է բանակային միջավայրում: Յախշի լինելու համար պարտադիր չէր լինել գողական: Կարևորը հասկացող ու հարցեր լուծելու կարողությունն է: Բնորոշ է միջին և նոր սերնդին:

Շ

ՇԱԼԱՇՈՎՎԱ

Նշ. պահանջարկ չունեցող էժանագին պոռնիկ

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. *шалашовка (шалаша)*՝ *չպահանջված, էժան մարմնավաճառ:*

Ծագում է ռուս. *шалаш՝ հյուղակ, քոլիկ*, թյուրք. *salaş՝ ծածկ, վրան* բառից:

Պտմ. ռուս քր. միջավայրում բառն օգտագործվում է նախահեղափոխական (1917 թ.)

ժամանակներից: Հայկական քր. ժարգոն անցել է ռուսականից 1950-60-ականներին:

Լրց. Հայկ. գող. ժարգոնում ոչ հաճախակի գործածվող բառերից է: Հայտնի է ավագ սերնդի միջավայրում: Թաղ. միջավայրում չի օգտագործվում: Հոմանիշ է *պոռնիկ* և ռուս. քր. *շալավա* բառերին:

ՇԱԿԱԼ

Նշ. 1. ուրիշի ուտելիքը գողացող կալանավոր, 2. խոսք տանող, բերող, 3. նենգ, անխիղճ, վտանգավոր մարդ, 4. ժլատ:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. *шакал՝ լկտի, անամոթ մարդ* արտահայտությունից:

Ռուս. *шакал՝ շնագայլ*-ը փոխառություն է գերմ. *Schakal* կամ ֆր. *Chacal*-ից: Բառն օգտագործվում է նախախորհրդային (1917 թ.) ժամանակներից: Հայկական միջավայր մուտք է գործել 1930-ականներին:

Բղղ. շակալավարի, շակալություն:

Լրց. առաջին և երկրորդ իմաստները բնորոշ են գող. ժարգոնին: Երկրորդից չորրորդ իմաստները հանդիպում են *թաղ.* միջավայրում: Ավելի բնորոշ է ավագ և միջին սերնդին:

ՇԱՅԿԱ

Նշ. 1. հանցագործների խումբ, 2. հանրայնության կողմից մարզինալ համարվող և անդնդունելի ցանկացած խումբ:

Ծգ. ռուս. ժարգոնային *шайка* բառի փոխառությունը: Բառն իր հերթին կարող է փոխառնված լինել թրք. ծագման *shaika* բառից, որը թարգմանվում է՝ *'նավակ, ծովահենների նավ:*

Պտմ. տարածված էր նախախորհրդային ժամանակներից մինչև 1960-ական թթ.:

Բղղ. գողերի շայկա, բոզերի շայկա:

Լրց. Բառը լայնորեն օգտագործվում էր առօրյա խսկց: Ներկայումս ավելի քիչ է գործածվում երիտասարդության մեջ: Որպես հոմանիշ ունի. *կողլ, թայֆա, կուտոկ, բանդա* ձևերը:

ՇԵՍՏՅՈՐԿԱ

Նշ. 1. գողերից կախվածություն ունեցող ցածր կարգավիճակի մանր գող, նրանց ծառայող անձ, 2. որևէ մեկից կախված, նրան ծառայող անձ:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. *шестёрка*՝ վեցնոց բառից: Բառն առաջացել է, հավանաբար, որոշ թղթախաղերից, որոնցում վեցանոցը «шестёрка»-ն, ամենացածր արժեքով խաղաքարտն է: Բառը ծագում է *шесть*՝ *վեց* թվից:

Պտմ. ռուս. քր. խսկց.-ում բառն օգտագործվում է նախախորհրդային շրջանից: Հայկ. միջավայրում օգտագործվում է 1960-ականներից: Բառը հայկ. գող. և թաղ. ժարգոն ներթափանցել է ռուս. քր. խսկց.-ից:

Լրց. Առաջին իմաստով գործածական է քր. միջավայրում, երկրորդ իմաստով՝ թաղ.: Հանցագործ աշխարհում չունի հստակ ընդգծված ստորացուցիչ նշանակություն: Պարզապես նշում է գողական հիերարխիայում որոշակի կարգավիճակ և գործառույթ ունենալը:

ՇԼԱՆԳ

Նշ. իրեն անհասկացողի, չիմացողի տեղ դնող մարդ:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. *шланг* *ծուլլ, հիմար* բառից:

Պտմ. բառն օգտագործվում է 20-րդ դարի կեսերից՝ նախկին ԽՍՀՄ տարածքում: Հայկական միջավայր մուտք է գործել ռուս. քր. ժարգոնից:

Բղղ. շլանգի տեղ դնել, շլանգավատ լինել:

Լրց. բառը բնորոշ է գող. և թաղ. խոսվածքին և երկու միջավայրում էլ ունի նույն իմաստը: Գործածական է բոլոր սերունդների մեջ:

ՇԿՈՆԿԻ ՏԱԿ ԿՈՒՆԵԼ

Նշ. 1. փչացնել, նվաստացնել, 2. որևէ մեկին պղծվածների տարածք՝ «գյոթնոց» գցել:
գղ. հզվդպ.:

Ծգմ. 1. *շկոնկի տակ* կոչվածը բանտախցում տեղակայված մահճակալ էր, որ գտնվում էր գուգարանի կամ գուգարանակոնքի մոտ: Սովորաբար այդ տեղը ազատ էր լինում և ոչ ոք չէր քնում: Այն նախատեսված էր արիժնիկների համար: Ըստ մեկ այլ բացատրության, արտահայտությունը ծագել է պատժելու նպատակով կարգը խախտածներին՝ *թռածներին ու նեղացածներին* բանտախցում տեղադրված մահճակալի տակ մտցնելու պրակտիկայից:

Պտմ. ազատագրկման վայրերում բառն օգտագործվում է 1960-ական թվականներից:

Լրց. բնորոշ է միայն գող. ժարգոնին: Երկրորդ իմաստը շատ հազվադեպ է հանդիպում:

ՇՄՈՆ

Նշ. 1. Կալանավայրի աշխատակցի կողմից իրականացվող խուզարկություն, 2. ցանկացած մեկի կողմից իրականացված խուզարկություն:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. шмон՝ *խուզարկություն, զննություն, շուրջկալ:*

Ենթադրաբար, բառն առաջացել է եբր. שמון «ուլթ» բառից: Օդեսայի բանտում, դեռ ցարական Ռուսաստանի ժամանակներում, առավոտյան ժամը ութին խուզարկում էին բանտախցերը:

Պտմ. ռուս. քր. միջավայրում բառն օգտագործվում է նախահեղափոխական (1917 թ.)

ժամանակներից: Հայկ. միջավայր մուտք է գործել 1930-ականներից:

Բղղ. շմոն անել:

Լրց. գող. ժարգոնում գործածվում է առաջին իմաստով: Երկրորդ նշանակությունը տարածված է թաղ. միջավայրում: Բնորոշ է բոլոր սերունդներին: Գողական աշխարհում դա համարվում էր մենթերի գործը և գողերն իրենք շմոն չէին անում: Եթե ցանկանում էին ինչ որ կորած կամ թաքցված բան գտնել, սպա ստիպում էին կասկածի ենթակա բանտարկյալին դատարկել գրպանները կամ ցույց տալ, թե որտեղ է կորածը կամ գողացածը թաքցրել: Նույն պրակտիկան բնորոշ էր նաև թաղի տղաների միջավայրին:

ՇՊԱՆԱ

Նշ. մանր գող, ժուլիկ, խուլիգան

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. шпана *անապաստան, մանր գող, ժուլիկ* բառից:

Բառի ծագումը պարզ չէ: Ոմանք (ЭСФ) նմանեցնում են шпанский՝ *իսպանական* բառին՝ նկատի ունենալով դրա «թափառական» իմաստը ցարական Ռուսաստանում: Հնարավոր է կապ լինի шпандырь բառի հետ, որը նշանակում է՝ կոշկակարների օգտագործած կաշվե բարակ փոկ:

Պտմ. ռուս. միջավայրում բառն օգտագործվում է նախախորհրդային (1917 թ.)

ժամանակներից: Հայկական միջավայր անցել է ռուսականից:

Լրց. բառը գործածվում է գող. և թաղ. ժարգոններում նույն իմաստով: Չնայած գործածական է բոլոր սերունդների մեջ, սակայն հաճախ գործածվող բառերից չէ:

ՇՈՒԼԵՐ

Նշ.1. խորամանկ, խարդախ, .2. խաղաքարտային աճպարար:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. шулер՝ թղթախաղում կամ պարզապես կյանքում խարդախ մարդ բառից: Բառը ծագում է լեհ. szuler, միջին գերմ. scholderer, schollerer՝ մոլեխաղերի կազմակերպիչ, scholder, scholler (մոլի խաղի անվանում):

Պտմ. ռուս քր. իսկց. բառն օգտագործվում է նախախորհրդային (1917 թ.) ժամանակներից:

Բղղ. շուլերություն անել, շուլերական, շուլերավարի:

Լրց. գործածվում է գող. և թաղ. ժարգոններում նույն իմաստով: Տարածված է բոլոր սերունդների մեջ: Երիտասարդության մեջ՝ ավելի հազվադեպ է գործածվում: Որպես հոմանիշներ ունի մախինատոր, բիճ, բճի տղա ձևերը:

Ո

ՈՏԵՐ

Նշ. բանտի կամ գաղութի սպասարկող անձնակազմ:

Ծգմ. ունի հայ. ծագում ու նշանակություն:

Պտմ. գող. ժարգոնում բառի գործածումն ի հայտ է եկել 2000 ականերին:

Լրց. բնորոշ է գող. ժարգոնին: Թաղ. միջավայրում կիրառում չունի: Գործածվում է երիտասարդ սերնդի միջավայրում:

Չ

ՉԱՏԼԱԽ

Նշ. 1. պիղծ, անբարոյական, 2. վատ մարդ:

Ծգմ. հայ. և վր. հայհոյական բառ: Ծագում է թյուրք. Çatlak՝ ճեղք բառից: Հայերենին, հավանաբար անցել է ադրբեջանցիներից, որոնք թուրք. k-ն արտասանում են kh (խ):

Բղղ. չատլախ գյադա, չատլախի կատու, չատո/չաթո, չատիբեկ, չաթինդար:

Լրց. բառն օգտագործվում է Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասի մի մասում՝ հին ժամանակներից: Հայաստանում գող. և թաղ. ժարգոնում համարվում է խիստ ծանր հայհոյանք, որի դիմաց ենթադրվում է շատ սուր և խիստ արձագանք վիրավորանքը ստացողի կողմից, ընդհուպ մինչև վիրավորողին ծանր ծեծ ու դանակահարություն: Համագոր է համարվում գյոթ, սուկա բառերին: Ընկերական առօրյա զրույցում բառը կորցնում է իր խստությունը և կարող է օգտագործվել նույնիսկ կատակով միմիանց դիմելու ձև: Երկրորդ իմաստը հանդիպում է առօրյա իսկց. մեջ, սակայն ոչ գող. ժարգոնին բնորոշ իմաստով:

ՉԱԹՈ

Տես՝ ՉԱՏԼԱԽ

ՉԵՏԻՐ

Նշ. թունդ թեյ, որը ընդունված է օգտագործել բանտարկյալների միջավայրում:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. цифир՝ շատ թունդ թեյ բառից: Բառի ծագումն անհայտ է: Կա կարծիք, որ բառն առաջացել է «чихир» բառից, որը նշանակում է կովկասյան թունդ գինի, կամ սիբիրյան բառից, որը նշանակում է փչացած՝ թթված գինի:

Բառն օգտագործվում է 1920-1930-ականներից, հիմնականում ազատագրված վայրերում՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. չիֆիրիտ անել:

Լրց. առավել բնորոշ է գող. ժարգոնին և թաղ. միջավայրում քրեականին հարող շրջանակներին: Չեֆիրը համարվում է հոգեխթանիչ, ինչ որ առումով թույլ թմրանյութային միջոց, որն առաջացնում է ֆիզիոլոգիական կախվածություն: Հայտնի է ավագ և միջին սերունդներին: Կրտսեր սերնդի մեջ շատ հազվադեպ է գործածվում:

ՉՍՈ, ՉՍՈՇՆԻԿ

Նշ. 1. անպատիվ և կամազուրկ մարդ, ում բոլորը կարող են շահագործել, 2. մարդ, որը չի հետևում իր արտաքինին, աղբ է քջջում, գետնից կոթուկներ է հավաքում և այլն:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. чмо՝ *անպետք, անարգ, բարոյապես և ֆիզիկապես ընկած* բառից: Բառի ծագման վերաբերյալ միասնական տեսակետ չկա: Մի վարկածով նշվում է, որ այն առաջացել է քրեական ժարգոնում և, հավանաբար, человек морально опустившийся «բարոյապես ընկած մարդ» արտահայտության հապավումն է: Այլ վարկածով՝ Կարմիր բանակի զինվորների կողմից նյութական ապահովման գորամասերի ծառայողների (части материального обеспечения) նսեմացուցիչ անվանում: Դիտարկվում է նաև անգլ. իս. մերձեցման վարկածը՝ schmo՝ *բթամիտ, տաղտկալի* կամ իդիշից՝ שמו (shmok) *առնանդամ, պենիս, հիմար:*

Պտմ. բառն օգտագործվում է 1920-ականների վերջից - 1930-ականների սկզբներից, հիմնականում ազատագրված վայրերում՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. չմո գյադա, չմոյացնել, չումարիտ անել:

Լրց. բառը գործածական է գող. և թաղ. ժարգոններում: Գործածվում է բոլոր սերունդների կողմից: Խորհրդային շրջանում բառը բավական լայն տարածում ուներ նաև խորհրդային բանակում: Շատ տղաներ հենց այնտեղ էին ծանոթանում բառի նշանակությանը:

Պ

ՊԱԼԱԺԵՆԵՑ

Նշ. 1. կալանավայրում գողական կարգ ու կանոնի ու հասկացությունների համաձայն դատապարտյալների հարաբերությունները կարգավորող գողական աշխարհի ներկայացուցիչ դատապարտյալ, 2 որևէ տարածիք նիստ ու կացը վերահսկող անձ:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. положенец՝ գող, որը հանցագործների հիերարխիայում օրենքով գողի նկատմամբ երկրորդ աստիճանն է զբաղեցնում: Բառը ծագում է ռուս. ложить, նիստը՝ *loziti «դնել» ձևից: Փաստորեն положенец-ը նշանակում է դրածո:

Պտմ. բառն օգտագործվում է 1970-ականների կեսերից, հիմնականում ազատազրկման վայրերում՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Լրց. իմաստով մոտ է *զոն նայողին* (տես՝ ՋՈՆ ՆԱՅՈՂ Բառահոդվածը), սակայն եթե որոշ դեպքերում *զոն նայողը* կարող է չլինել գողական հիերարխիայի անդամ, ապա *պալաժենեցը* պետք է անպայման լինել գողական աշխարհի ներկայացուցիչ: Նույնացնում են նաև *սմատրյաշչի* բառին: Սակայն, կա կարծիք, որ *սմատրյաշչին* գողական աշխարհը ներկայացնող այն անձն է, ով հետևում է քրեական խմբավորումների միջև բաժանված քաղաքային տարածքի այս կամ այն հատվածին:

Բառը գործածական է գող. ժարգոնում: Թաղ. ժարգոնում շատ հազվադեպ, ավագ սերնդի միջավայրում կիրառվել է միայն երկրորդ իմաստով:

ՊԱԼԻՏ ԱՆԵԼ

Նշ. 1. իրավապահ մարմիններին կամուրջի կամ ակամա մատնել քրեականների վերաբերյալ տեղեկություն, 2. բացահայտել գաղտնի համարվող տեղեկությունը մտածված կամ չմտածված ձևով:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. палить մատնել քրեականների վերաբերյալ տեղեկություն: Ծագում է հն. ռուս. палити՝ այրվել, բոցկլտալ բառից: Հմմ. հայ. «վառվել» բառի հետ (գործը վառվավ, վառվանք և այլն):

Պտմ. ռուս. քր. խոսույթում օգտագործվում է ՆԷՊ-ի (նոր տնտեսական քաղաքականություն) ժամանակներից՝ երկրի ամբողջ տարածքում: Հայերենում փոխառվել է ռուս. քր. ժարգոնից:

Բղղ. պալիտ ըլնել, պալիտ անել:

Լրց. առաջին իմաստը ավելի բնորոշ է գող., իսկ երկրորդը՝ թաղ. ժարգոնին: Գործածական է բոլոր սերունդների միջավայրում:

ՊԱՌԱԺ

Նշ. 1. կեղծիք, անհիմն, վարկաբեկող լուր, 2. դատարկ խոսակցություն:

Ծգմ. ռուս. քր. параша բառից, ինչը նշանակում է *արտաթորությունների համար նախատեսված տարա*, որը տեղադրվում է խցում:

Բառը ծագել է «պարաշայից», ըստ Սերբական Սուրբ Պարասկևայի տոնի ժողովրդական անվանման Պարասկևա Գրյագնիխա (նշվում է հոկտեմբերի 27-ին): Անունը տրվել է աշնանային ցեխի և վատ եղանակի պատճառով:

Պտմ. երկրորդ իմաստով բառն օգտագործվում է 1930-ականներից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. պառած գցել, պառածնյակ, պառած տարածող:

Լրց. Հայաստանյան միջավայրում օգտագործում է հիմնականում առաջին իմաստով: Ընդհանուր օգտագործման բառ է թե գող. թե թաղ. միջավայրում: Առավել տարածված է ավագ սերնդի շրջանում:

ՊԱՍՏԱՎԿԱ ԱՆԵԼ

Նշ.1. գողական ենթամշակույթում՝ ինչ որ մեկի կողմից մյուսին ոչ միտումնավոր դժվար վիճակի մեջ դնել, այդ թվում բռնել տալ, 2. քաշել, մեկ ուրիշին վատ վիճակի մեջ դնել:

Ծգմ. ռուս. քր. խսկց. поставка բառի փոխառությունն է:

Լրց. առաջին իմաստով գործածվում է գող. ժարգոնում: Երկրորդ իմաստն ավելի բնորոշ է թաղ. միջավայրին: Գործածվում է բոլոր սերունդների կողմից: Հոմանիշ է *քաշել* ժարգոնային արտահայտությանը:

ՊԵՐԵՂՈՋ

Նշ.1. չափից մեծ քանակությամբ թմրանյութի օգտագործում, որից կարող է առողջական տարբեր բարդություններ առաջանալ, անգամ մահանալ, 2. Ինչ որ բանի չափից շատ օգտագործում:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. передоз՝ մեծ դոզայով ընդունված թմրանյութ արտահատությունից: Բառն առաջացել է передозировка բառի կրճատումից:

Պտմ. քր. խոսույթում օգտագործվում է 1974-ից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. պերեղոզ անել, պերեղոզ լինել, պերեղոզի տակ մնալ:

Լրց. գործածական է գող. և թաղ. ժարգոններում: Թաղ. ժարգոն մուտք է գործել գող. միջավայրից պահպանելով իմաստը: Գործածական է բոլոր սերունդների համար:

ՊԵՐՎՈՒՄՈՂԿԱ

Նշ. առաջին անգամ դատված և կալանավայրում հայտնված անձ:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. первоход (первая ходка) առաջին անգամ դատապարտված բառից: Ռուս. խսկց. первоходка բառն այլ նշանակություն ունի՝ մեկ էլք ունեցող բնակարան և այս իմաստով օգտագործվում է ՆԷՊ-ի (ևոր տնտեսական քաղաքականություն) ժամանակներից:

Ռուս. первоход բառն առաջացել է первая և ходка բառերից:

Պտմ. բառն օգտագործվում է 1930-ականներից հիմնականում ազատագրկման վայրերում՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Լրց. բառը գործածվում է հիմնականում կալանավայրերում: Թաղային միջավայրում բառը գործածություն չունի:

ՊԻՂՈ

Նշ. 1. նույնասեռական, 2. սեռապես փչացած, 2. ծախու էակ, 3. անբարոյական:

Օգտ. փոխառություն՝ ռուս. քր. пидор «педераст»-ի՝ նույնասեռականի կրճատ ձևը: Բառը ծագում է հն. հուն. παιδεραστία բառից, որը Եվրոպայում paederastia ձևով կիրառվել է 16-րդ դարից: Ռուսաստանում եզրույթն օգտագործվել է տղամարդկանց նույնասեռականության առումով, սակայն բառի բուն իմաստը՝ սեռական կապ տղայի հետ: *Օգտ.* ռուս. քր. խսկց. բառն օգտագործվում է 19-րդ դարից: Հայկ. միջավայրում տարածված է եղել 1950-ականներից սկսած:

Բղղ. պիդո գյադա, պիդո լակոտ, պիդառած:

Լրց. գող. ժարգոնում գործածվում է առաջին երկու իմաստներով, թաղ. բոլոր չորսն էլ հայտնի ու գործածական է: Բոլոր սերունդներն էլ գործածում են:

ՊԻՈՍ

Նշ. 1. իրավապահայան մարմինների կամ կալանավայրերում վարչակազմի աշխատակից, 2. էժան արարքներ գործող, «լակոտական» արարքներ գործող մարդ, որին օգտագործում էին ինչ-որ մեկին նեղելու համար, «քսի էին տալիս» ինչ-որ մեկի վրա:

Օգտ. փոխառություն՝ ռուս. քր. пёс շուն, անպետք, նվաստ արարած բառից:

Պտմ. բառն օգտագործվում է 1920-30-ականներից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. պիոս գյադա:

Լրց. առաջին իմաստը բնորոշ է գող. ժարգոնին, երկրորդը՝ թաղ.: Ավելի բնորոշ է ավագ ու միջին սերունդներին:

ՊԻՄԿԵԼ

Նշ. սուր գործիքով մարմնական վնասվածք պատճառել:

Օգտ. փոխառություն՝ ռուս. քր. писка՝ մետաղադրամից պատրաստված փոքր դանակ, անվտանգ ածելու կեսը բառից: Բառի հայկականացված բայական ձևը դառնում է պիսկել՝ կտրել, ծակել, դանակահարել:

Պտմ. բառն օգտագործվում է 20-րդ դարի կեսերից, հիմնականում գրպանահատների խոսքում՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Լրց. բնորոշ է գող. և թաղ. ժարգոններին: Թաղ. ժարգոն անցել է գողականից առանց իմաստափոխման: Գործածվում է բոլոր սերունդների կողմից:

ՊԻՏՆՈ ԲՈՆԵԼ

Նշ. որևէ մեկի արարքում կամ խոսքում միտումնավոր սխալ փնտրել:

Օգտ. կազմված է ռուս. пято բիծ և հայ. բռնել բառերից: Ռուս. пято բառը, որն ունի նաև արատավորող, վարկաբեկող փաստ իմաստը (տվյալ բառակապակցության մեջ ունի հենց այդ իմաստը), ծագում է հն. ռուս. пятьно խարան, նշան ձևից: Փոխառություն է ռուս. քր. խսկց. поймать пято արտահայտությունից:

Պտմ. հայկ. գող. և թաղ. ժարգոնում գործածվում է 1960-ականներից:

Լրց. գործածական է գող. և թաղ. ժարգոններում, բոլոր սերունդների կողմից: Հոմանիշ է կեղտ բռնել, սխալ բռնել արտահայտություններին:

ՊԻՏՈՒԽ/ ՊԻՏՈՒԽԻ ԶՈՆ

Նշ. 1. նույնասեռական դատապարտյալ, որը որոշակի գումարի դիմաց ծառայություն է մատուցում բոլոր ցանկացողներին, 2. ցածր կարգի կալանավոր «կզցված», 3. գլուխ գովան մարդ:

Ծգվ. փոխառություն՝ ռուս. քր. *петых* ճամբարային նույնասեռական արտահայտությունից: Բառը ծագում է *петь*՝ երգել: Ի դեպ՝ հնում ռուս. *петых*՝ *աքլոր*-ին անվանել են *певух*՝ երգող: *Պտմ.* Բառն օգտագործվում է 1930-ականների սկզբից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում: *Լրց.* առաջին և երկրորդ իմաստներով բառը գործածվում է բացառապես գող. ժարգոնում: Երրորդ իմաստով՝ թաղ.միջավայրում և առօրյա խոսքում:

ՊՈՆՏ

Նշ.1. ձև, ցուցադրական արարք, 2. ուշադրություն շեղող հնարք: Խորամանկություն, 3. մարդկանց կուտակում, որտեղ հեշտ է գողություն կատարել՝ ուշադրությունը շեղելով:

Ծգվ. փոխառություն՝ ռուս.քր. *понт* ձևամոլություն, շինծու արարք 2):»
Բառը փոխառված է ֆրնս. *Ponte* բառից կազմված *ponter* ձևից, որն ունի *թղթախաղում բանկի դեմ դուրս եկող խաղացող կամ քայլ* իմաստը:
Պտմ. ռուս. քր. խսցկ.բառն օգտագործվում է նախախորհրդային (1917 թ.) ժամանակներից: Հայկական միջավայր մուտք է գործել 1950-60-ականներից:
Բղղ. պոնտ անել, պոնտավատ լինել:
Լրց. գող. ժարգոնում բոլոր ձևերն էլ գործածական են: Երրորդ ձևը միայն ավագ սերնդին է հայտնի, մնացած սերունդները չեն կիրառում: Առաջին և երկրորդ իմաստները բնորոշ են նաև թաղ. միջավայրին և գործածական է բոլոր սերունդների մեջ:

ՊՈՒԱԲԻՏ/ՊՈՒԱԲԻՎԱՏ ԱՆԵԼ

Նշ. իմանալ, ճշտել, ստուգել, պարզաբանել, ձեռք բերել անհրաժեշտ տեղեկությունը:
Ծգվ. փոխառություն՝ ռուս. քր. *пробить, пробивать* *ստուգել, ճշտել* արտահայտությունից: Բառը կազմված է *про-* + *-бивать* (*бить*) «խփել, հարվածել»:
Պտմ. Բառն ռուս. քր. խսկց.-ում օգտագործվում է նախախորհրդային (1917 թ.) ժամանակներից: Հայկ. միջավայր մուտք է 1930-ականներից:
Լրց. գործածական է գող.ժարգոնում: Թաղ. միջավայրերում գործածվում է գողականին հարող տարբեր սերունդների տղամարդկանց միջավայրում: Սովորական առօրյա խոսակցության մեջ շատ հազվադեպ է հանդիպում: Թաղ.միջավայր անցել է գողականից առանց իմաստափոխման:

ՊՈՒԱԳՈՆ

Նշ. արտակարգ գրավոր ուղերձ գողի կամ մի խումբ գողականների կողմից:
Ծգվ. ռուս. քր. խսկց. *прогон*՝ *գողական ուղերձ* բառի փոխառությունն է:

Լրց. Կարող է հղվել ինչպես գաղութի ներսում, այնպես էլ գաղութից գաղութ և ազատության միջավայրից գաղութներ: *Պռագմնը* սովորաբար վերաբերում էր նոր կարգ և պայմաններ հաստատելուն, կամ քրեական հեղինակությունների շարքում տեղի ունեցող փոփոխությունների մասին: Պռագմնը պետք է գրված լիներ անձամբ օրենքով գողի ձեռքով:

ՊՌԱՆՈՂ

Նշ. 1. գաղութի բարաքներում մահճակալների կամ «նառերի» միջև դատարկ տարածություն, անցում: 2. միջանցիկ բակ, որից օգտվել են հանցագործները փախուստի դեպքում, 3. հեղինակության կամ խմբի կողմից հովանավորություն որևէ հարցում:

Ծզմ. ռուս. проход` միջանցք բառի փոխառությունն է:

Պտմ. ռուս. քր. խսկց. գործածվում է նախախորհրդային շրջանից: Հայկ. քր. և թաղ. ժարգոնում տարածում է ստացել 1950-ականներից:

Բղղ. պռախոդ տալ:

Լրց. Քր. խսկց. բնորոշ է առաջին և երկրորդ նշանակությունը: Յուրաքանչյուր *պռախոդում* կարող էր տեղակայված լինել 8-10 մահճակալ: Երրորդ նշանակությունը բնորոշ է թե գող. և թե թաղ. ժարգոններին: Տարածված է բոլոր սերունդների միջավայրում:

ՊՌԱՇԼԱԳ

Նշ. 1. նախկինում օրենքով գող, որը հետագայում ինչ-ինչ պատճառներով հրաժարվել է իր կոչումից կամ պարտադրել են հրաժարվել, 2. փչացած, գծից ընկած, բարոյականություն չունեցող:

Ծզմ. փոխառություն` ռուս. քր. прошляк *նախկինում օրենքով գող* արտահայտությունից: Բառը ծագում է пройтти «անցնել» բայից:

Պտմ. բառն օգտագործվում է 20-րդ դարի երկրորդ կեսից` նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Լրց. գող. ժարգոնում կիրառվում է առաջին իմաստով: Թաղ. միջավայրում գործածական է երկրորդ իմաստը: Ավելի տարածված է ավագ ու միջին սերնդի մեջ:

ՊՌԱՇՄԱՆԴՈՎԿԱ

Նշ. 1. խորամանկ փողոցային կին, 2. անբարոյական:

Ծզմ. ռուս. ժարգոնային прошмандовка բառի փոխառությունը: Ըստ մի ստուգաբանության` կազմված է профора" /ավանտյուրիստ, խորամանկ կին/ և мондя /արգանդ/ բառերից:

Պտմ. ռուս. խսկց. առկա է նախախորհրդային շրջանից: Տարածված հայեցողության և էր համարվում հատկապես Օդեսսայում:

Լրց. գող. ժարգոնում ավելի շատ ունի առաջին իմաստը: Անօրյա խոսակցություններում առավելապես կիրառվում է երկրորդ նշանակությամբ: Բնորոշ է առավելապես ավագ և միջին սերունդներին:

ՊՈՍՊՈՒՄԿԱՏ

Նշ. 1. գողական հասկացություններին չհամապատասխանող արարք կամ արտահայտություն, որին կարող էր պատիժ հետևել, 2. ցանկացած սխալ կամ սայթաքում, որը բացահայտվում է, բայց պարտադիր չէ, որ լինի պատժի ենթակա:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. пропускать՝ 1. քրեական բանավեճի ժամանակ պատահաբար (անզգուշորեն) հայտնաձև անցանկալի տեղեկություն, 2. Քրեական կյանքում, հարաբերությունների մեջ թույլ տված սայթաքում:

Բառը կազմված է про- + пускать «թողնել» ձևից, նիս. սլավ *pustъ, նիս. հնդեվր. *paus «թողնել» արմատից:

Պտմ. ռուս. քր. խսկց. հայտնի չէ երբ է հայտնվել: Հայկական միջավայր փոխառվել է ռուսականից, լայնորեն գործածվում է 1970-ականներից:

Լրց. գող ժարգոնում կիրառվում է առաջին նշանակությամբ, թաղ.-ում գործածվում են երկու նշանակությունները: Տարածված է բոլոր սերունդների շրջանում:

ՊՈՒԴՅԱՎ/Կ/Ա

Նշ. մեղադրանք գողական օրենքները խախտելու համար:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. предъява՝ պահանջ, դժգոհություն, մեղադրանք:

Բառը ծագում է предъявить ներկայացնել բայից, որի явить հիմքը առաջացել է նիս.սլավ. *aviti, հն. հնդ. Avih՝ իրողություն ձևից:

Պտմ. բառն օգտագործվում է 1930-ականների սկզբից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում, այդ թվում և հայկական քր. ժարգոնում:

Լրց. բնորոշ է գող. ժարգոնին, թաղային միջավայրում չի գործածվում: Մեղադրել կարող էին միայն գողերը: Օրենքով գողի կարող էր մեղադրել միայն մեկ այլ գող, հիմնականում գողական սխողկայի ընթացքում: Հայ. -ում հայտնի է նաև դեմք դնել արտահայտությունը:

ՊՈՒԿՈՒ

Նշ. 1. հետաքրքիր պատմություն, պատում, 2. ձեռք անելու բան, ծաղրանք:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. приколы հետաքրքիր պատմություն, ծաղրանք, կատակ, խարդավանք նշանակությունից: Ծագում է ռուս. приколоть խոցել, խոցելով ամրացնել բառից:

Պտմ. բառն օգտագործվում է 1920-1930-ականներից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. պոփկոլ անել, պոփկոլ բռնել:

Լրց. առաջին նշանակությունը բնորոշ է գող. ժարգոնին, երկրորդը՝ թաղ.: Տարածված է բոլոր սերունդների մեջ:

ՊՈՒՄՅՈՎԻ

Նշ. 1. գողական հասկացությունների համաձայն կարգին կալանավոր, 2. քրեական միջավայրում հաջողակ մեկը:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. путёвый բոլոր առումներով օրինավոր կալանավոր:

Բառը ծագում է ռուս. путь՝ ճանապարհ բառից:

Պտմ. Բառն օգտագործվում է 1930-ականների, հիմնականում ազատագրկման վայրերում՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. պուտյովի տղա:

Լրց. գործածական է հիմնականում գող.ժարգոնում: Թաղ.միջավայրում նույնպես երբեմն կիրառվում է, սակայն որոշ իմաստափոխմամբ և գողական հասկացություններից հասկացող և դրանք հարգող թաղի տղա:

Ռ

ՌԱՄՍ

Նշ. 1. գողական հասկացությունների շրջանակում ընդունված վարքագծային սահման, 2. քննարկում, որը չի վերաբերում գողական բարքերին, բայց կատարվում է գողական օրենքով, 3. թղթախաղի անվանում, 4. չափ, սահման:

Ծզմ. փոխառություն՝ ռուս. քր. բառ *սահման, չափ* բառից:

Բառի ծագման մի քանի վարկած կա: Առաջինը՝ թղթախաղի անվանումից: Հետաքրքիր վարկածներից է նաև այն, ըստ որի բառն նմանակում է՝ մատներ: Մատների դիրքը և շարժումները մեծ նշանակություն ունեն բանավեճի դեպքում: Մխալ ժեստը հենց անվանվել է՝ ռամները խառնել:

Պտմ. Բառերն օգտագործվում են 1920-30-ականներից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Բղղ. ռամները խառնել, խամները խախտել, ռամների մեջ մնալ:

Լրց. առաջին երեք իմաստները վերաբերում են գող.ժարգոնին: Թաղ միջավայրում կիրառվում է միայն չորրորդ նշանակությամբ և այն էլ գլխավորապես ավագ և միջին սերնդի միջավայրում:

ՌԱՄԿԼԱԴ

Նշ. 1. եղելություն, դրվածք, 2. հանցագործության մասնակիցների մատնություն, որը կարող էր տեղի ունենալ ինչպես իրավապահ մարմինների ճնշման, այնպես էլ սեփական դատապարտման ժամկետը կրճատելու ցանկությամբ:

Ծզմ. փոխառություն՝ ռուս. քր. բառ *расклад՝ իրական իրավիճակ, մատնություն* (раскладка) բառից: Բառն առաջացել է *раскладывать* բայից, հն. սլավ. *кладж, класти*,

Պտմ. առաջին իմաստով բառն օգտագործվում է 60-ականներից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում: Բնորոշ է գող. և թաղ. ժարգոններին՝ հիմնականում ավագ ու միջին սերնդի մեջ: Երկրորդ իմաստով բառն օգտագործվում է գող.ժարգոնում 30-ականների կեսերից՝ ավագ ու միջին սերնդի կողմից:

Ս

ՍԱՂԿԱ ՊԱՀԵԼ

Նշ. 1. քաղաքային ավտոտրանսպորտի երթուղին, որ արձանագրվում էր գրպանահատների կողմից, 2. աչքը վրան պահել, հետևել:

Ծզմ. ռուս. քր. садка բառի փոխառություն + հայ. պահել:

Պատմ. բառն օգտագործվում է 1930-ական թթ. ից: Օգտագործվում է հիմնականում 2-րդ իմաստով՝ ավագ և միջին սերունդների մեջ:

Հրց. բառի առաջին իմաստը գրեթե մոռացված է: Մյուս իմաստով գործածական է հիմնականում ավագ ու միջին սերնդի մեջ: Քր. խսկց. ունի *ատանդի, ատանդի լինել* հոմանիշները:

ՍԼԻՎ

Նշ. 1. փակ, գաղտնի համարվող տեղեկության (հիմնականում կալանավայրերի վարչակազմերին վերաբերող) արտահոսք, 2. ցանկացած գաղտնի տեղեկության արտահոսք:

Ծզմ. փոխառություն՝ ռուս. քր. слив՝ տեղեկության արտահոսք բառից: Հայտնի է նաև *сличь՝ գողոնը վաճառել*:

Ծագում է сливать՝ *դատարկել* բառից:

Պատմ. գողոնի վաճառքի իմաստով բառն օգտագործվել է ՆԷՊ-ի (նոր տնտեսական քաղաքականություն) ժամանակներից, մինչև որ 20-րդ դարի կեսերին փոխարինվել է сбавить՝ *ռադ անել, բերը թորափել* բառով: *Տեղեկության արտահոսք* նշանակությամբ բառն օգտագործվում է 1980-ականներից նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Հրց. առաջին իմաստով բնորոշ է գող. ժարգոնին: Երկրորդ նշանակությունը գործածական է թաղ. և ընդհանրապես առօրյա խսկց.: Գործածական է բոլոր սերունդների մեջ:

ՍԽՈՂԿԱ /ՍԽԱՂՆՅԱԿ

Տես՝ ԳՈՂԱԿԱՆ ՍԽՈՂԿԱ բառահոդվածը:

ՍԽԱԼ ԿՅԱՆՔ

Նշ. 1. գողական հասկացություններով ու օրենքներով չապրողների կյանքը, 2. Գողականից բացի այլ օրենքներով ապրողների կյանքը:

Ծզմ. գող. ժարգոնում գործածվող *Ճիշտ կյանք (տես. այս բառարանի ՃԻՇՏ ԿՅԱՆՔ հոդվածը)* հասկացության հակառակ իմաստից:

Պատմ. ենթադրվում է, որ գող. և թաղ. ժարգոնում սկսել է տարածվել 1950 ականներից: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԽՍՀՄ Ներքին գործերի ժողկոմիսարիատը հայտարարեց օրենքով գողերի դեմ պայքար: Բոլոր նրանք, ովքեր հրաժարվեցին գողական կյանքով ապրելուց, որակվեցին որպես սխալ կյանքով ապրողներ:

Հրց. գործածական է հիմնականում գող. ժարգոնում և թաղ. ժարգոնային խոսվածքին տիրապետող ավագ ու միջին սերնդի անձանց միջավայրում:

ՄՄԱՏՐՅԱՇԻ

Նշ. քր. հեղինակությունների կողմից նշանակված անձ, ով առաջնորդվելով գող. հասկացություններով, պատասխանատու է որոշակի տարածքում հարցերի ու խնդիրների լուծման համար:

Ծզմ. ռուս. Смотрящий բառը ծագում է смотреть` նայել բայից:

Լրց. որոշ կարծիքների համաձայն այս բառը հոմանիշ է *զոն նայողի* կամ պալաժենեց բառերին: Սակայն, կա նաև կարծիք, որ իտարբերություն *զոն նայողի* կամ *պալաժենեցի, սմատրյաշչին* թաղային կամ քաղաքային որոշակի տարածքը «նայողն է», այլ՝ ոչ *զոնի*:

Մանրամասն տես նաև այս բառարանի ԶՈՆ ՆԱՅՈՂ և ՊԱԼԱԺԵՆԵՑ բառահոդվածները:

ՄՊՈՈՍ ԱՆԵԼ

Նշ. 1. հարցում անել գողական հասկացություններին չհամապատասխանող որևէ արարքի համար: 2. պատասխան պահանջել արարքի համար:

Ծզմ. փոխառություն՝ ռուս. քր. спрос «սխոդնայկի» ժամանակ այս կամ այն հարցի պատասխան պահանջելը»: Կազմված է с- + просить *հարցնել, պատասխան*:

Պում. օգտագործվում է 1930-ական թթ. ողջ ԽՍՀՄ տարածքում:

Լրց. առաջին նշանակությամբ բնորոշ է գող. ժարգոնին: Երկրորդ նշանակությունը գործածական է թաղ. միջավայրում: Տարածված է հիմնականում ավագ և միջին սերունդների մեջ: Գողից կարող էին «սպռոս անել» ուրիշ գողեր՝ սխադնայկի ժամանակ: Ոչ գողից սպռոս կարող էր անել գողական աշխարհում հեղինակություն ունեցող ցանկացած մեկը:

ՍՈՈԿ ՎԵՐՑՆԵԼ

Նշ. 1. բանտարկվել, բանտ նստել, 2. մեղադրանքը իր վրա վերցնել:

Ծզմ. փոխ. ռուս. քր խսկց. тащить срок արտահայտությունից:

Պում. հայկական միջավայրում տարածված է 1950-ականներից:

Բղղ. սոռկ շալակել:

Լրց. բնորոշ է գող. և թաղ. ժարգոններին: Կիրառվում է բոլոր սերունդների մեջ:

ՍՎԻԴԱՆԿԱ

Նշ. ազգականների հետ կարճաժամկետ կամ երկարաժամկետ տեսակցություն ազատազրկման վայրում:

Ծզմ. ռուս. քր. свиданка բառի փոխառությունը:

Բղղ. սվիդանշիկ՝ ազատազրկման վայրերում տեսակցությունը կազմակերպող/դասավորող անձ:

Պատ. օգտագործվում է նախախորհրդային ժամանակներից:

Լրց. *զոն նայողը* սվիդանկաներում կարող էր իր մարդն ունենալ, որպեսզի խնդիրներ չծագեին: Գողական պռախտում քնող մարդ էր էդ մարդը: Բայց գող չէր:

ՍՏՐԵԼԿԱ ԽՓԵԼ

Նշ. Գողականների ժամադրությունն որևէ վայրում որևէ հարց քննարկելու կամ լուծելու նպատակով:

Ծզմ. Փոխառություն՝ ռուս. *забить стрелку* ժամացույցի սլաքը մեխել բառացի արտահայտությունից, որը նշանակում է ամրագրել հանդիպման ժամը: Ըստ այլ վարկածի՝ Լենինգրադում (ներկայիս Սանկտ Պետերբուրգ), այդ նույն ժամանակներում, հանդիպման սիրված վայր էր Վասիլևսկի կղզու ցամաքալեզվակը (Стрелка Васильевского острова): Կա նաև վարկածի՝ ըստ որի բառակապակցության *стрелка* բառը կապված է *стрелять* «կրակել» բառի հետ:

Բառն օգտագործվում է 20-րդ դարի կեսերից՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

ՍՈՒՉԻՏ ԱՆԵԼ

Նշ. 1. ծախել, պարբերաբար մատնությամբ զբաղվել, 2. բարոյապես փչացնել:

Ծզմ. փոխառություն ռուս. քր. *всучить*՝ *մատնություն տալ* բառից:

Բառը ծագում է *сучить* «հյուսել, ոլորել, փաթեթ տալ» բառից, որը ստացվել է հն. ռուս. *сѹкати* «թել ոլորել, խմոր գրտնակել» ձևի հնչյունափոխությամբ: Կապ չունի *сука* բառի հետ:

Պատ. բառն օգտագործվում է 1960-ականներից նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Լրց. բանտային միջավայրում ավելի տարածված է առաջին իմաստը: Երկրորդ իմաստը, որն ավելի շատ կապվում է *սուկա* բառի հետ, հիմնականում կիրառվում է թաղ. ժարգոնում:

ՍՈՒՉԻ ԶՈՆԱ

Նշ. 1. գաղութ, որտեղ մեծամասնությունն են կազմում մատնիչ-ակտիվիստները, 2. մատնիչների միջավայր:

Ծզմ. փոխառություն՝ ռուս. քր. *сучья зона* գործ տվողների, փչացվածների տարածքը ճամբարում: Բառակապակցության *сучья*-ն *суки* բառի հոլովաձևն է:

Պատ. բառակապակցությունն օգտագործվել է 1940-ականների կեսերից մինչև 1960-ականների սկիզբը, երբ բառը փոխարինվեց *зона красная* *կարմիր զոնա*: բառակապակցությամբ՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Լրց. առաջին նշանակությունը բնորոշ է գող. ժարգոնին: Երկրորդ իմաստով կիրառվում է թե գող. և թե թաղ. միջավայրերում: *Սուչի զոնայի* կամ *կրասնի զոնայի* առանձնահատկությունն այն է, որ այստեղ բանտարկյալները մեկը մեկի վրա գործ են տալիս, ինչը խիստ դատապարտելի է գող. աշխարհում:

Այս արտահատության մասին տես նաև ԳՈՐԾ ՏՎՈՂ և ԶՈՆ բառահոդվածները:

Վ

ՎԱԶՎՈՍՏՅԻՎ

Նշ. ինչ-որ բան հետ բերող անձ: Դա կարող էր լինել օրենքով գողը կամ պալաժենեցի:

Ծգմ. ռուս. քր. возвратчик բառի փոխառությունը:

Պտմ. բառն օգտագործվում է 1960-ականներից:

Լրց. Տարածված էր հիմնականում ավագ սերնդի մեջ: Ներկայումս խիստ հազվադեպ է կիրառվում:

ՎԱԼԱԿԻՏ

Նշ. 1. խոսակցության բարդացում, 2. խառնաշփոթ, իրարանցում, 3. դեբոշի թեթև տեսակ:

Ծգ. ռուս քր. волокита՝ *քաշքշուկ, ձգձգում* բառի փոխառությունն է: Ծագում է հն. ռուս. волокида *զննություն, velkti «тащить», «волочь»* համասլավոնական ձևից:

Լրց. առաջին երկու իմաստները բնորոշ են գող. ժարգոնին: Երկրորդ և երրորդ իմաստով կիրառական է եղել փողոցային խսկց.: Բնորոշ է հիմնականում ավագ ու միջին սերունդներին: Ըստ որոշ բանասացների՝ *վալակիտն* է բնորոշ գող. ժարգոնին, իսկ *վալակուշը* ավելի ուշ արտահայտություն է ու վալակիտի հետ կապ չունի: Կա կարծիք նաև, որ *վալակիտը* վերաբերում է գողերի սխողկայի ժամանակ բարդ խոսակցությանը:

ՎԱԼԱԿՈՒՇ

Նշ. թմրանյութի առաջացրած էյֆորիայի երկրորդը փուլը:

Ծգմ. ռուս. ժոգ. волокуша բառի փոխառությունը:

Պտմ. բառն օգտագործվում է սկսած 1974թ.՝ թմրանյութերի դեմ պայքարի ուժեղացման մասին որաշման ընդունումից հետո:

Լրց. ռուսական միջավայրում բառն ունեցել է նաև ձևառատ տայգայում փորձանքի մեջ ընկած մարդկանց տեղափոխելու նպատակով օգտագործվող պարաններից գործված հարմարանքի իմաստ: Այդ իմաստով բառն օգտագործվել նախախորհրդային ժամանակներից, հիմնականում անտառահատման գոտիներում տեղակայված կալանավայրերում:

ՎԱՌՎԵԼ

Նշ. բացահայտվել, ձախողվել:

Ծգմ. հավանաբար ռուս. քր. палить բառի *բոցկլտալ, այրվել* նշանակության թարգմանությունից ստացված կրավորական տարբերակն է, ինչը քր. ժարգոնում ունի *ձախողվելու պատճառով բացահայտվել* իմաստը:

Պտմ. հայ-ում տարածվել է 1960-ականներից:

Լրց. գործածական է քր. և թաղ. ժարգոններում՝ բոլոր սերունդների միջավայրում:

ՎԻՆԻՎԻՏ

Նշ. վեճի («ռազբիրատի») ժամանակ մեղադրական ներկայացնել:

Ծգ. ռուս. քր. винить, виноватить (մեղադրել, մեղսագրել բառից) բառի ինդաթյուրամբ փոխառությունը:

Լրց. վինիվիտը *վազնիկատի* ու *լիվիրիտի* (տես ԼԻՎԻՐԻՏ բառահոդվածը) միջև է ու նշանակում է «սխալ ռազբիրատ» սկսել (մեղավորին փնտրել ուրիշների մեջ) գուցե անտեղի տեղը, ինչի համար, կրկին, պիտի «ատվետ» պահել, եթե արդեն խոսակցությունը բացել էս /Գ.ՏԳ/: Օգտագործվում էր հիմնականում ավագ և միջին սերունդներում:

S

ՏԱԼԿԱԶ

Նշ. 1. ինչ-որ գումարի դիմաց խնդիրներ լուծող մարդ, 2. ցանկացած գնով ապրանք իրացնող, սաղացնող անձ:

Ծգ. ռուս. толкач *հրող, խթանող* բառի փոխառությունը:

Պտմ. ռուս. քր. խսկց. օգտագործվում է նախախորհրդային ժամանակներից: Հայ-ում գործածվել է 1960-ականներից:

Լրց. ներկայումս այդ բառի առաջին նշանակությամբ օգրագործման փոխարեն տարածված է *հարց լուծող* արտահայտությունը: Երկրորդ նշանակության հոմանիշներն են *սաղցնող, նաղող* արտահայտությունները:

ՏԱՍՈՎԿԱ

Նշ. 1. խառնել խաղաթղթերը, խաղաքարերը, 2. գործերը, հարաբերությունները հմուտ կերպով դասավորել:

Ծգմ. փոխառություն՝ ռուս. քր. тасовка՝ *վերաբաշխում, դասավորում, թղթաքարտերի խառնում* բառից: Ծագում է ռուս. тасовать, тасую բառերից, լեհ. Tasować-ից: Փոխառություն՝ ֆրնս. tasser՝ *կույտով դարսել*, tas՝ *կույտ* արմատից:

Պտմ. *Թղթաքարտերի խառնում* իմաստով բառն օգտագործվում է նախախորհրդային (1917 թ.) ժամանակներից: Դասավորում իմաստով՝ 1930-ականներից, երբ քր. միջավայրում հայտնվեցին *տասովչիկներ*՝ «գործերը դասավորողներ»:

Բղղ. տասովչիկ, տասովկեք անել:

Պտմ. բառն օգտագործվում է նախախորհրդային ժամանակներից:

Լրց. գող. ժարգոնում գործածվում է առաջին նշանակությամբ: Երկրորդ իմաստը բնորոշ է առօրյա խսկց:

ՏԻՆԴԻՐԻՏ, ՏԻՆՏԻՐԻՏ

Նշ. 1. խոսքի, հիմնականում շատախոսելու միջոցով շփոթության ստեղծում, դիմացինին նեղը գցելու նպատակով, 2. ձևեր թափել:

Լրց. տինդիրիտը *լիվիրիտի* թեթև ու մեծահոգի դեպքն է: *Լիվիրիտը*՝ համարվում է *վազնիկատի* «նիսյա» տարբերակը, այսինքն՝ խլրտալ, թպրտալ ուշադրություն գրավելով, առանց դրա իրավունքն ունենալու (տես՝ ԼԻՎԻՐԻՏ բառահոդվածը): Եթե վազնիկատը հայտ է ու հավակնություն, ապա լիվիրիտ անում են ստորին կաստաները կամ ստորինացվածը/ստորինացվողը, ու դրա համար, եթե առանց թույլտվության է արվել, սովորաբար պատասխան կպահանջվի: Իսկ *տինդիրիտն* այն դեպքն է, երբ մթնոլորտը ու միջավայրը ընկերական է, երբ կարելի է *լիվիրիտ* անել: Բայց, նույնիսկ այդ դեպքում, կարող է որևէ մեկի աչքում *տինդիրիտը* վեր ածվել *լիվիրիտի* ու պահանջ ներկայացվի «լիվիրիտին տեր կանգնելու» և «ատվեչալ պահելու», քանի որ դրա իրավունք տվյալ անձին չի տրված, այսինքն «սխալ վազնիկատ է լինում» /Գ.ՏԳ/:

ՏՈՒԶ

Նշ. 1.տուգ, ամենաբարձր կարգավիճակ գողական ենթամշակույթում: Օրենքով գողի խորհրդանիշ, 2. թաղի հեղինակություն, 3. բարձրաստիճան պաշտոնյա, դեկավար:

Ծգ. ռուս. ժոգ. туз բառի փոխառությունը: Օգտագործվում էր նաև որպես հապավում, օրինակ ТУЗ - «Тюрьма у нас — забава»; «Тут умирают зеки»; «Туалетный уборщик зоны» և այլն:

Պտմ. բառն օգտագործվում է 1960-ականների կեսերից հիմնականում անչափահասների գաղութներում և առավել հաճախ՝ դաջվածքների մեջ: Խոսակցականում օգտագործվում էր երրորդ դեմքով: 1970-ական թվականների վերջերին Հայաստանում այն արդեն դուրս էր եկել ակտիվ շրջանառությունից:

Լրց. տուգավատ, քուչի տուգ, մայլի տուգ, թաղի տուգ:

ՏՈՒԼԻԿ

Նշ. 1.կալանավայր ուղարկվող փոքրիկ ծանրոց, որը հիմնականում պարունակում է սնունդ և ծխախոտ, 2.զինձառայողներին ուղարկվող փոքրիկ կապոց, որը հիմնականում պարունակում է սնունդ և ծխախոտ:

Ծգմ. թրք. тylik բառի փոխառությունը, որը թարգմանվում է՝ սնունդ, ուտելիք:

Լրց. բառը գործածական է բոլոր սերունդների մեջ, ինչպես գող., այնպես էլ առօրյա խսկց.-ում:

ՏՈՒԼԻՏ ԱՆԵԼ

Նշ. ինչ որ անպիտան բան իրացնել՝ գնորդին կամ ստացողին խաբելով: Խաբելով դիմացինին ինչոր բանում համոզել:

Ծզմ. փոխառություն՝ ռուս. *тулить* թաքցնել, փակել, խոթել բառից:

Պտմ. տարածված է եղել նախահեղափոխական (1917) շրջանի Օդեսայի խակց. ժարգոնում: Հայկ. միջավար է ներթափանցել 1960-ականներին:

Լրց. գործածական է գող. և թաղ. խակց.: Տարածված է բոլոր սերունդների խոսքում: Որպես հոմանիշ է *սաղացնել* արտահայտությանը:

ՏՈՒՍՈՎԿԱ

Նշ. 1. ցանկացած խումբ, որին միավորում է ընդհանուր հետաքրքրությունը, 2. զբոսանք:

Ծզմ. փոխառություն՝ ռուս. *пр. тусовка*՝ աննպատակ ժամանց՝ պարզապես շփման համար:

Պտմ. բառը առաջին նշանակությամբ, մեծ մասամբ «տասովկա» ձևով, օգտագործվել է նախախորհրդային (1917 թ.) ժամանակներից: Բառամիջի *ա-*ից *ու* անցումը տեղի է ունեցել անցած դարի 70-ականներին, երբ բառը սկսեցին օգտագործել բռնեմի ներկայացուցիչները:

Լրց. բառը գործածական է բոլոր սերունդների մեջ: Երկրորդ իմաստը կիրառվել է միայն քր.միջավայրում՝ գլխավորապես ավագ սերնդի կողմից:

ՏՈՒՖՏԱ

Նշ. 1. կեղծ բան, 2. անորակ բան, 3. աննպատակ, առանց գումարի թղթախաղ, 4. դատարկ, անիմաստ խոսակցություն, 5. անիմաստ մարդ, դատարկախոս:

Ծզմ. 1. ռուս. *ТУФТ* հապավումի կենցաղային փոխառությունը, որը բացվում է որպես՝ *Техника Учета Фиктивного Труда* – Ձևական աշխատանքի հաշվարկի տեխնիկա: Այն կապվում է Սոլովկի՝ ԽՍՀՄ-ում առաջին ուղղիչ աշխատանքային գաղութում հանդիպող պրակտիկայի հետ, որտեղ բանտարկյալները որպեսզի գերակատարեին սահմանված նորման և միևնույն ժամանակ կանխեին դրա ավելացումը, ձևացնում էին թե աշխատում են:

2. Մեկ այլ մեկնաբանությամբ «տուֆտա»-ն նույն արմատից է, ինչ «տուֆ»-ը: Նշանակում է ծակոտկեն և համեմատաբար փափուկ մի բան: Նման է նաև «Տաֆտա» բառին, որը փոքրիկ կտոր էր, մի փոքր հաստ, փափուկ և ծակոտկեն: Օդեսայի դերձակները աշխատանքի ավարտից հետո այն դնում էին «Ձինգեր» կարի մեքենայի ասեղի ոտնակի տակ, որպեսզի ասեղը չդիպչի մետաղական մասին ու չվնասվի: Այսինքն, «տաֆտա անելու» ժամանակ մեքենայի անվակը անիմաստ պտույտ է անում: Երբ նրանց քստրեցին առաջին էտապներով, նրանք հասկացան, որ գուլագային համակարգում ապրելու միակ ձևը «տուֆտա անելն» է, այսինքն՝ ձև թափել, թե գործ ես անում, իրականում չանել: Եվ այդպես այդ բառը մտավ այդ ամբողջ մշակույթի մեջ: /Գ.ՏԳ/

Բղղ. տուֆտել, տուֆտա խոսել, տուֆտըչի, տուֆտա գյադա:

Պտմ. առաջին իմաստով բառն օգտագործվում է նախահեղափոխական ժամանակներից:

Լրց. ըստ գրանցված մեկնաբանություններից մեկի «տուֆտայի» թեզաուրուսի մեջ կարելի է ընդգրկել նաև *ֆուֆլո*, «*ֆառո*» («*ֆալո*» բառից), *ֆրնդրիս*, *իմիտացիա*, *կամուֆլաժ*,

աղապատացիա, սինուլակր, ֆեյք, կեղծ, ֆասադ, «Պոստմոկրիսի գյուղ» արտահայտությունները /Գ.ՏԳ/:

Բառի առաջին երեք իմաստները բնորոշ են գող. ժարգոնին: Երրորդ իմաստն ավելի շատ բնորոշ է եղել ավագ սենրդին: Վերջին երկու իմաստներով բառը գործածվում է նաև թաղ. միջավայրում և առօրյա խսկց.-ում:

Ց

ՑԵԼԿԱ

Նշ. 1. իրավապահ և առողջապահական մարմինների կողմից չգրանցված մարմնավաճառ, 2. ցանկացած նոր, չօգտագործված բան, 3. կույս:

Ծգմ. ռուս քր. խսկց. *целка` կույս* բառի փոխառությունն է: Բառը ծագում է ռուս. *цельный* անականից, հն. ռուս. *цѣлъ*, նիւ. սլավ. **сѣлъ* ձևից:

Բղղ. ցելկա մաշնա, ցելկա աղջիկ:

Լրց. գործածական է գող. և թաղ. ժարգոններում, բոլոր սերունդների կողմից:

ՑԵԼՈՉՆԻԿ

Նշ. 1. կույս բռնաբարելու համար դատապարտված, 2. բռնության դիմող հանցագործ, 3. գողական կյանքում նպատակ ունեցող, օրենքով գող կամ հեղինակություն դառնալու նպատակով քրեական կյանքով ապրող մարդ:

Ծգ. ռուս. քր. *целочник* բառի փոխառությունն է:

Պտմ. հայկ միջավայրում բառը օգտագործվում է 20-րդ դարի կեսերից:

Լրց. առաջին իմաստը համարվում է գող. ժարգոնում գործածված, սակայն հնացած ու դուրս մնացած: Երկրորդ իմաստը նույնպես բնորոշ է համարվում գող. ժարգոնին: Երրորդ իմաստը, ունի նաև *ցելալիկ* ձևը, որն առավելապես տարածված է թաղ. ժարգոնում:

ՑԻՆԿԱՎԱՏ ԱՆԵԼ

Նշ. 1. նշան տալ (ձայնի, ժեստերի կամ այլ միջոցներով), 2. նշաններով խոսել, 3. հաճույք ստանալ, կայֆ բռնել:

Ծգմ. ռուս. քր. խսկց. *цинканыть* բառի մասնակի թարգմանությունը: Ըստ մի վարկածի՝ ստացված է անգլ. *chink* բառից, որ թարգմանվում է՝ ձայն հանել, զանգել:

Պտմ. Օգտագործվում է 1930-ականներից:

Լրց. առաջին երկու նշանակությունները բնորոշ են գող. խսկց., երրորդը՝ թաղ.:

որպես հոմանիշ ունի *իշմար տալ, իշմարել* արտահայտությունները: Գող. ժարգոնում *ցինկ* բառով նշվում է բանտից դուրս ուղարկվող հաղորդագրությունը: Այն շատ մոտ է *քսիֆ* բառին, որով նշվում է դրսից բանտ ուղարկվող լուրը:

Փ

ՓԱՌՉԱԿ

Նշ. 1. ստորացված, թափթփված, հաճախ վեներական հիվանդություններ ունեցող դատապարտյալ, 2. փնթի հարիֆ, 3. երկար մազերով տղա, հիպի:

Օգ. 1. ռուս. ժոգ. парчак բառի փոխառությունը, որը վերցված է պրսկ. ծագման բառից և թարգմանվում է՝ փրչոտ, մազվզոտ:

Պում. օգտագործվում է 1930-ականներից: Հայկական միջավայրում, խոսակցական լեզվում լայն տարածում ստացավ 1960-ական թվականներին:

Բղղ. փառչակ գյադա, փառչակի մազեր, փառչակ տեսք:

Լրց. բառի առաջին նշանակությունը գող. ժարգոնում գործածվել է ավագ սերնդի կողմից: Բառը տարածվեց խոսակցական լեզվում 1960-ականներին, որով նշում էին հիպիզմի հետևորդներին, ովքեր չէին ապրում թաղային նորմերով և անտեսում էին թաղերում տարածված գողական հասկացությունները:

ՓԱՐՄԱԶՈՆ

Նշ. 1. զարդեր կեղծելով և կեղծված զարդերի փոխանակությամբ զբաղվող անձ, 2. խաբող, զցող, խարդախությամբ զբաղվող անձ:

Օգվ. ֆր. franc-maçonnerie՝ ազատ որմնադիր բառակապակցությունից, որը ռուսերենում ստացել է *фармазон ազատ մտածող*, իսկ քր. խսկց. *խարդախությամբ խաբող* նշանակությունը:

Պում. օգտագործվում է նախախորհրդային ժամանակներից:

Լրց. առաջին նշանակությունը բնորոշ է գող. ժարգոնին, երկրորդը՝ թաղ.: Երկու դեպքում էլ արտահայտությունը հնացել ու դուրս է եկել գործածությունից: Որպես հոմանիշ ունի *քցող, պատաստվչիկ* ձևերը:

ՓԱՍՓԻՈՆ

Նշ. Հիմար, անիմաստ մարդ: *քղ.*

Օգ. 1. Կոնֆետի տեսակ: «Մաստակ, ծխախոտ, լուցկի, էն ժամանակի հայտնի կոնֆետներից չինո ու փամփիոն (անձամբ ես նախընտրում էի փամփիոնը), հյութերի փոշիներ, որոնք Յուպի էին կոչվում»: <http://hasarakaget.blogspot.com/2015/08/blog-post.html> , 2. Մալազայերեն՝ pampion – պոմպ:

ՓՈՐՈՎ

Նշ. 1. նեղացած լինել, 2. նեղացած մարդ:

Օգմ. կա կարծիք, որ արտահայտության ծագումը կապվում է *հղի* բառի այլաբանության միջոցով խոսակցական հայերենում գործածվող *փորով* բառի հետ, որը նշում է պտուղը փորում կրելու իմաստը: Այստեղ ավելի շատ ակնարկվում է ոչ օրինական սեռական կապից հղիանալու իմաստը, որը առօրյա խոսակցական լեզվում համարվում է անցանկալի ու խնդրահարույց երևույթ:

Բղդ. փորով մնալ:

Լրց. օգտագործվում է հիմնականում միջին և նոր սերնդի միջավայրերում: Որպես հումանիշ կիրառվում է *արիժնիկ* բառին:

ՓՈՒՌՇ ՏԱԼ

Նշ. 1. գոհաբերել, գոհել, 2. վատ արարքի համար պարսավանքի ենթարկել:

Օգմ. հայերեն *փուռ* (հաց թխելու վառարան, հնոց) և *տալ* բառերից:

Լրց. գործածական է գող. և թաղ. ժարգոններում: Ներկայումս գործածական է առօրյա խոսակցական երկրորդ ձևը: *Փուռ* բառով քր. խսկց. երբեմն նշել են մեկուսարանը:

Ք

ՔԵՐՈՔ

Նշ. օրենքով գող:

Օգ. եբրայերեն כּוּרֵךְ, քերովբե բառից, որպես կոչվում են երկնային թռչող էակները Աստվածաշնչում: Թարգմանվում է *գիտության բազմություն* և *իմաստության հեղուկ*: Ըստ [Դինիսիոս Արիոպագացի](#)՝ քերովբեները հրեշտակաց 9 դասերից մեկն են: Ըստ Սաղմ. 17:11-ի, քերովբեները Աստծո կամքի կատարողներն են: Ծննդոց գրքում նրանք դեպի Կենաց ծառը տանող ճանապարհի պահպանողներն էին (Ծննդ. 3:24): Նրանք իրենց վրա են կրում Աստծո աթոռը, կամ մինչև իսկ ծառայում են իբրև աթոռ՝ գահ: Մբ. Գրքում շատ ենք հանդիպում (Ա Թագ. 4:4, Բ Թագ. 6:2, Սաղմ. 79:1)

Լրց. առերես հանդիպման ժամանակ գողին *զակոննիկ* կամ *օրենքով գող* չէին անվանում, այլ պարզապես դիմում էին *քերոք ջան* ձևով:

Տես նաև՝ ՕՐԵՆՔՈՎ ԳՈՂ և ԶԱԿՈՆՆԻԿ բառահոդվածները:

ՔՅԱՍՍՄ

Նշ. 1. գողական հասկացությունների գործադրմամբ, երբեմն նաև որևէ գողական հեղինակության միջամտությամբ հաշտություն կնքել, 2. վեճն ավարտել հաշտությամբ:

Բղդ. քյաստմ տայ:

Լրց. առաջին նշանակությունը բնորոշ է գող. ժարգոնին: Երկրորդ նշանակությամբ կիրառվում է թաղ. միջավայրում: Որպես հոմանիշներ գործածվում են նաև իտոզ տայ, փրչըցնել, ջրել, բարիշել, հարցը փակել արտահայտությունները: Տարածված է բոլոր սերունդների մեջ:

ՔՅՈՒԵԼ

Նշ. 1. խաբել, 2. համոզել, սուտ խոսքով թյուրիմացության մեջ գցել, մոլորության մեջ գցել:

Ծգմ. 1. հայերեն՝ Շերամի որդերի բոժոժ հյուսելու համար քոլ դնել: 2. եբր kollel – כולל – հավաքել

Պտմ. Հայաստանում գործածվում է 1960-70-ականներից:

Լրց. գողական ենթամշակույթում խրախուսվող վարքագիծ, որն հիմնականում օգտագործվում էր հարիֆներին համոզելու միջոցով նրանցից ինչոր բան /ապրանք, ծառայություն, աջակցություն, ստանալու նպատակով: Օգտագործվում է գող. և թաղ. ժարգոններում: Բնորոշ է հատկապես ավագ ու միջին սերնդին: Կրտսեր սերնդի մեջ ներկայումս ավելի քիչ է գործածվում:

ՔՈՐԵԼ

Նշ. հետաքրքրել, վերաբերել, անհանգստացնել:

Ծգմ. հավանաբար ռուս. ժարգոնային чesать բառի թարգմանությունն է: Это мне не чешёт – դա ինձ չի վերաբերում:

Պտմ. հայ. թաղ. ժարգոնում տարածում է գտել 1960-70-ական թվականներին:

Բղդ. ինձ չի քորում:

Լրց. հավասարապես գործածվում է գող. և թաղ. ժարգոններում, նույն նշանակությամբ: Գործածվում է բոլոր սերունդների մեջ:

ՔՄԻՖ

Նշ. 1. որևէ մեկի կամ իրադարձության մասին ազատության միջավայրից գաղութ կամ հենց գաղութում գաղտնի փոխանցվող նամակ, գրություն, 2. փաստաթուղթ, 3. ցանկացած գաղտնի փոխանցվող թուղթ:

Ծզմ. փոխառությունն է ռուս. քր. ксива՝ փաստաթուղթ, նամակ, գրություն բառից, որն էլ իր հերթին փոխառվել է իդիշերեն. [כסיבה](#) (ksiva)- փաստաթուղթ, թուղթ, որի վրա ինչոր բան է գրված:

Պտմ. առաջին իմաստով ռուս. քր. իսկց. բառն օգտագործվում էր մինչև 20-րդ դարի կեսերը, որը հետո փոխարինվեց՝ *малява* բառով, իսկ երկրորդ նշանակության փոխարեն շրջանառության մեջ մտավ *корочки* արտահայտությունը:

Լրց. *քսիֆ* անվանվում էր տեղեկությունը, որն ուղարկվում էր դրսից բանտ կամ փոխանցվում էր բանտի ներսում: Իսկ բանտից դուրս ուղարկվող լուրը գող.ժարգոնով կոչվում է *ցինկ*: Ներկայումս քսիֆը կամ ցինկը կարող է փոխանցվել նաև հեռախոսով: Առաջին և երկրորդ նշանակությունները բնորոշ են քր.ժարգոնին: Երրորդ նշանակությունը սովորաբար գործածվում է թաղ. իսկց.:

ՔՈՒՅՐԻԿ

Նշ. 1. նույնասեռական, ում բանտային միջավայրում օգտագործում են սեռական ակտի նպատակով, 2. թաղային միջավայրում նուրբ շարժուձև ունեցող տղա:

Լրց. առաջին նշանակությամբ գործածական է քր. իսկց.: *Քույրիկները* և *պիտուխները* բանտում ունեին մեկուսի տեղ, որը համարվում էր պիղծ տարածք: Երկրորդ իմաստը բնորոշ է թաղ. իսկց.: Ներկայումս թաղ.միջավայրում այն ավելի հազվադեպ է հանդիպում:

ՈՒ

ՈՒԳԼԱՎԻԿ

Նշ. 1. գաղութում առաջին *պռախոդ* (տես՝ ՊՈՒԱԽՈՂ բառահոդվածը) քնողը: 2. զոն նայողի օգնականը, 3. թաղում «քուչա» նայողներ:

Ծզմ. ռուս. քր. угловой՝ *շարքային գողերի (բլատնոյ) կողմից նշանակված նայող* բառից:

Պտմ. բառն օգտագործվում է 1970-ականներից, հիմնականում ազատագրկման վայրերում՝ նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում:

Լրց. բանտում *ուզլավիկը* համարվում էր գող. հասկացություններով ապրող այն անձը, ով զբաղվում էր բարաքի ներսի խնդիրների լուծմամբ (արշագ հավաքել, թղթախաղին հետևել և այլն): Թաղ. միջավայրում բառը գործածվում էր հաճախ երրորդ իմաստով և հոմանիշ էր *քուչա նայող, մայլա նայող, մայլի ավտարիտետ* հասկացություններին:

Օ

ՕԲՇԻ ԿԱԾՅՈՒ

Նշ. 1. գողականների տարբեր կարիքների (թեյ, ծխախոտ և այլն) համար հավաքվող գումար, 2. ընդհանուր տնօրինման ենթակա գումար:

Օգ. փոխառություն է ռուս. ժարգոնային *общий катёл* արտահայտությունից:

Լրց. առաջին նշանակությամբ գործածվում է քր. միջավայրում: Հումանիշ է *աբշագ* բառին (տես ԱԲՇԱԳ բառահոդվածը): Երկրորդ նշանակությունը բնորոշ է առօրյա խսկց.: Գործածական է բոլոր սերունդների մեջ:

ՕՂԵՐԸ ՓԱԿԵԼ

Նշ. 1. նեղը գցել, կապի միջոցներից գրկել, 2. փող աշխատելու հնարավորություններից գրկել:

Օգմ. փոխառություն՝ ռուս. քր. *перекрыть кислород*՝ *հնարավորությունները սահմանափակել, ռեժիմը կոշտացնել* արտահայտությունից:

Պտմ. բառակապակցությունն օգտագործվում է 20-րդ դարի կեսերից նախկին ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում, այդ թվում և Հայաստանում:

Լրց. առաջին նշանակությունը բնորոշ է գող. և թաղ. ժարգոններին: Երկրորդ նշանակությունը կիրառվում է առօրյա խսկց.: Գործածվում է բոլոր սերունդների մեջ:

ՕԼՈՒԽ

Նշ. հիմար, միամիտ մարդ, ում հեշտ է խաբելը:

Օգ. փոխառություն՝ ռուս. քր. *олух* *հիմար, անխելք* բառից:

Օագում է անհայտ ձևից, սակայն բառի առաջացման վարկածները բազմաթիվ են՝ սկսած նույնացումից Պսկովի բարբառային *волух* (ծուլ) և *валух* (հիմար) բառերի հետ, վերջացրած՝ արար. օլուխ (հիմար, կոպիտ) բառերով: Ռուսերենում հանդիպում է 1769 թվից: Շատ տարածված է «*Олух царя небесного*» արտահայտությունը, որը նույն իմաստն ունի, ինչ ռուս. քր. *олух*-ը:

Բղղ. օլուխավարի, օլուխի տեղ դնել:

Լրց. ավելի տարածված է ավագ և միջին սերնդի մեջ, քան կրտսեր: Որպես հոմանիշ ունի *լոխ, ուլ, էշ, հորթ* արտահայտությունները:

Ֆ

ՖՐԱՅԵՐ

Նշ. 1. մարդ, ով գող չէ, 2. սովորական կալանավոր, 3. հարիֆ, 4. մարդ, ով իրեն փորձում է ցույց տալ որպես քրեական հասկացություններին տիրապետող, սակայն իրականում այդ գործերում անփորձ մեկը, 5. մարդ, ով իրեն ներկայացնում է «գողականից» հասկացող, իրականում չլինելով այդպիսին:

Օգ. ռուս. քր. իսկց. փաբբ բառի փոխառություն: Ծագում է գերմ. freier (հասարակաց տան հաճախորդ) բառից: Գերմ.-ից այն անցել է իդիշին ֆֆֆ, որը նշանակում է «ազատ»: Իդիշից, հավանաբար, անցել է Օդեսայի ժարգոնային բառապաշար, այնտեղից էլ ռուս. քր. ժարգոն:

Պտմ. օգտագործվում էր նախախորհրդային ժամանակներից մինչև 1960-ական թթ. կեսերը: Մինչև 1930-ականները հանցագործ աշխարհում կար հիմնական երեք խումբ՝ *գողեր, մուժիկներ, ֆրայերներ*: Ավելի ուշ այդ դասակարգումը փոփոխությունների ենթարկվեց:

Լրց. մինչև 1930-ականները լայնորեն գործածվող բառ է եղել: Առաջին երեք իմաստները բնորոշ են եղել քր. իսկց: Այժմ հանդիպում է ավագ և միջին սերունդների բառապաշարում, հիմնականում չորրորդ և հինգերորդ նշանակությամբ: Երիտասարդության մեջ հազվադեպ է կիրառվում: Հոմանիշ է եղել *լոխ, հարիֆ* բառերին:

ՖՈՒՑՆ

Նշ. 1. միամիտ, փոքրիկ մարդ, 2. քրեական հասկացություններից անտեղյակ, բան չհասկացող, 3. հարգանքի անարժան մարդ, 4. ինտելիգենտ:

Օգմ. ռուս. քր. իսկց. փուцан, փуцан բառի փոխառությունը, որն իր հերթին փոխառվել է գերմ. fotze բառից, ինչը թարգմանվում է կնոջ սեռական օրգան:

Պտմ. բառի ծագման ժամանակագրությունը պարզ չէ: Ենթադրվում է, որ այն եկել է Օդեսայի ժարգոնից: 1970-80-ականներին Օդեսայում *ֆուցն* էին անվանում բարոյական սկզբունքներից լիովին զուրկ, տականք երտասարդներին, որոնց Մոսկվայում անվանում էին *ուրլա*, իսկ Սանկտ Պետերբուրգում՝ *գուպնիկ*: Ենթադրվում է, որ հենց Օդեսայի ժարգոնից էլ բառը տարածվել է նախկին ԽՍՀՄ ողջ տարածքում:

Լրց. *պիոսի, համբալի* պես օգտագործվող բառ է: Գող. ժարգոնի համաձայն ցածր խմբի պատկանող մարդ: Բայց *փչացածը* չէ: Միևնույն ժամանակ, այդ բառը նշանակում է պոտենցիալ զոհ՝ կողոպուտի համար: Որպես հոմանիշ գործածվում է նաև *ֆուֆան* բառը:

ՖՈՒՖԼՈ

Նշ. 1. ազարտային խաղերի արդյունքում առաջացած գումարային պարտք, որը չի վճարվել պայմանավորված ժամկետում, 2. ազարտային խաղերում պարտքը պայմանավորված ժամկետում չվճարած անձ, 3. գողական հասկացությունները լավ չիմացող մեկը, որը փորձում է իրեն ներկայացնել, որպես «հասկացող տղա», 4. անիմաստ խոսող անձ:

Օգմ. փոխառություն ռուս. քր. իսկց. փуфло՝ *կեղծ, սուտ տեղեկություն*, անպիտան մարդ բառից: Բառի ծագման մասին կան ենթադրություններ: Ըստ դրանցից մեկի, այն փոխառվել է գերմ. waffel – բառից, որն ունի *անկապություն, եղած-չեղած, անիմաստ բան* իմաստները: Մեկ այլ վարկածի համաձայն, բառն առաջացել է *ֆուֆայկա* բառից: Կալանավայրում տաք ֆուֆայկա էին հագնում միայն հեղինակություն ունեցող կալանավորները: Ազատության մեջ գտնվելով՝ նրանցից շատերը շարունակում էին ֆուֆայկա հագնել, սակայն ազատ կյանքում դա ոչ մի արժեք չունեցող, դառնում էր «ոչինչ»՝ ֆուֆլո:

Պտմ. ԽՍՀՄ կալանավայրերում բառն սկսել է օգտագործվել 1930-ական թվականներից:

Բղղ. Ֆուֆլիժնիկ, ֆուֆլո գյադա:

Լրց. գող. ժարգոնում գործածվում է առաջին իմաստով: *Ֆուֆլո* չի համարվում այն պարտքը, որ դժվար է փոխակերպել գումարի: Օրինակ 10 անգամ կքանստելը կամ գետնից պոկում անելը: Պարտքը ժամանակին չվճարողներին կամ ասածին «աչոտ» տալ չկարողացող անձին կոչում էին *ֆուֆլիժնիկ*: Վերջին երեք իմաստները բնորոշ են թաղ. ժարգոնին: Որպես հոմանիշներ գործածվում են նաև *հավայի, տուֆտա* բառերը:

«Գողական» կոչվող եզրը, խոսվածքը և ենթամշակույթը. հիմնական դիտարկումներ

Նիկոլ Մարգարյան

Բառարանում տեղ գտած բառերի և արտահայտությունների մեծ մասն ունի ավելի վաղ ծագում քան գողական ենթամշակույթը: Գողական ենթամշակույթի ծագումը վերագրվում է 1930-ական թթ. Խորհրդային իշխանության ժամանակահատվածին¹, այնինչ գողական խոսվածքում կարելի է հանդիպել բառեր, որոնք ռուսաստանյան քրեական տարբեր շրջանակներում կիրառվել են դեռևս նախախորհրդային ժամանակահատվածում²: Բացի այդ, ինչպես պարզ է դառնում բառարանից՝ հասկացությունների մի զգալի մասը օգտագործվում է ոչ միայն գողական ենթամշակույթին պատկանող մարդկանց կողմից: Այդուհանդերձ, այդ հասկացությունները գողական ենթամշակույթի խոսվածքին վերագրելու համար ամենակարևորը դրանց ծագումը կամ օգտագործողների պատկանելությունը չէ: Առավել էական են այլ հանգամանքներ: Օրինակ հանրային խոսույթում սկսած 1950-ականներից այդ հասկացությունները ընկալվում են որպես գերազանցապես գողական և նույնականացվում են գողական ենթամշակույթի հետ: Դրանք գողական են համարում նաև քրեական աշխարհին պատկանող և չպատկանող բանասացների մեծ մասը: Մեկ այլ էական հանգամանք է այն, որ ներկայացվող հասկացությունները ինտենսիվորեն օգտագործվել կամ օգտագործվում են գողական խոսվածքում և մեկնաբանվում են գողական արժեքանության համատեքստում: Գողական ենթամշակույթի արժեքանության առանցքում գողությունն է, որպես հանցագործության նախապատվելի տեսակ: Հանցագործության այլ տեսակները (սպանություն, խոշտանգում, բռնապարություն, թմրանյութերի վաճառք և այլն) չեն խրախուսվում կամ սկզբունքորեն մերժվում են: Օրինակ, ըստ գողական վարքականոնի՝ օրենքով գող չի կարող դառնալ մեկը, որի առաջին երկու դատվածությունները կապված են սպանության և բռնության հետ³:

Գողության՝ որպես հանցագործության նախապատվելի ձևի մասին պատկերացման ձևավորումը, ինչը էական նշանակություն է ունեցել քննության առարկա ենթամշակույթը «գողական» անվանելու համար, որոշակի քաղաքական գործոնների հետևանք է և պայմանավորված է հանցագործ աշխարհի դեմ խորհրդային իշխանությունների իրականացրած մի շարք միջոցառումներով: Առաջին հերթին այստեղ դեր ունի այն հանգամանքը, որ բացի գողությունից, հանցագործության մյուս տեսակները (սպանություն, խուլիգանություն, բռնաբարություն, պետական գույքի ոչնչացում և այլն) ժամանակի ընթացքում քաղաքականացվեցին և դրանց համար ավելի մեծ պատժաչափեր սահմանվեցին՝

¹ Сидоров А. Великие битвы уголовного мира. История профессиональной преступности Советской России. Книга первая (1917-1940 г.г.). <https://coollib.com/b/314197-aleksandr-anatolevich-sidorov-velikie-bitvyi-ugolovno-go-mira-istoriya-professionalnoy-prestupnosti-s-/read>

² Գևորգ Տեր-Գաբրիելյանը մատնանշում է բազմաթիվ քրեական հասկացությունների իդիոչերեն ծագումը: Տես՝ Բռնության մշակույթը. գողականություն և հարակից երևույթներ. Ետխորհրդային փուլի ավարտը Հայաստանում: Հարցազրույց Գևորգ Տեր-Գաբրիելյանի հետ: Զրուցավար՝ Գայանե Հովակիմյան: Մաս առաջին: <https://hetq.am/hy/article/108479>

³ Как стать вором в законе? Вор в законе — это кристально чистый человек по воровской идеологии https://vk.com/@darkside_int-kak-stat-vorom-v-zakonevor-v-zakone-eto-kristalno-chisty-i-ch

գողության համեմատ: 1926թ. կատարված խմբագրումների արդյունքում⁴ ՌՍՖՍՀ Քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանվող բանդիտիզմը (այդ թվում խուլիգանությունը) իր պատժաչափով գրեթե հավասարվեց 58-րդ հոդվածով՝ քաղաքական թշնամիների համար սահմանվող պատժաչափին: Ըստ այդմ, նախատեսվում էր նվազագույնը 3 տարի ազատազրկումից մինչև մահապատիժ՝ գույքի բռնագրավմամբ⁵: Դրանց ի հակառակ, գողության և խարդախության համար սահմանվում էին բավականին ցածր պատժաչափեր՝ 3 ամսից մինչև 1 տարի ազատազրկում⁶: Նման մեղմ մոտեցումը մասամբ պայմանավորված էր այն հանգամանքով, որ խորհրդային իշխանությունները գողերին վերաբերվում էին որպես իրենց «սոցիալապես մերձավորների»⁷:

Մեկ այլ կարևոր հանգամանք էր խորհրդային իշխանությունների կողմից գողությունն իբրև հանցագործության տեսակ անթաքույց խրախուսելը, մասնավորապես, եթե դա վերաբերում էր դասակարգային թշնամիների ունեցվածքին: Պետական կամ հանրային ունեցվածքի գողության համար սահմանվում էր ավելի մեծ պատժաչափ՝ մինչև 2 տարի ազատազրկում:⁸ Պատահական չէ, որ իրավական այդ խմբագրումների ժամանակահատվածում խորհրդային զանգվածային լրատվամիջոցները հիշեցին «բարի գող» Ստենկա Ռազինի մասին: Նույն ժամանակ ստեղծվում և տարածում են գտնում բազմաթիվ լեգենդներ ու պատմություններ՝ տարբեր քաղաքներում և թաղամասերում ապրող արդար և հոգատար գողերի վերաբերյալ⁹:

Վերջնահաշվում այդ ամենը խթանելու էր քրեական աշխարհում իշխանության վերաբաշխմանը միտված գործընթացներ, որոնց հետևանքում աստիճանաբար

⁴ Уголовный кодекс РСФСР в редакции 1926 года.

https://ru.wikisource.org/wiki/%D0%A3%D0%B3%D0%BE%D0%BB%D0%BE%D0%B2%D0%BD%D1%8B%D0%B9_%D0%BA%D0%BE%D0%B4%D0%B5%D0%BA%D1%81_%D0%A0%D0%A1%D0%A4%D0%A1%D0%A0_1926_%D0%B3%D0%BE%D0%B4%D0%B0/%D0%A0%D0%B5%D0%B4%D0%B0%D0%BA%D1%86%D0%B8%D1%8F_05.03.1926

⁵ 1937թ. բոլոր խուլիգանական գործերը սկսեցին անցնել 58-րդ հոդվածի համաձայն, այսինքն որպես «հակահեղափոխական հանցագործություններ»: Բանը հասավ նրան, որ 1937–1938 թթ. Լենինգրադում խմբային խուլիգանության փաստով ոչ մի քրեական գործ չի հարուցվել: Բոլորն անցել են 58-րդ հոդվածի 2-րդ կետով՝ մասնակցություն հակահեղափոխական կազմակերպությանը: Տե՛ս՝ Сидоров А. Великие битвы уголовного мира. История профессиональной преступности Советской России. Книга первая (1917–1940 г.г.) https://coollib.com/b/314197-aleksandr-anatolevich-sidorov-velikie-bitvyi-ugolovnogogo-mira-istoriya-professionalnoy-prestupnosti-s_/read

⁶ Уголовный кодекс РСФСР в редакции 1926 года.

https://ru.wikisource.org/wiki/%D0%A3%D0%B3%D0%BE%D0%BB%D0%BE%D0%B2%D0%BD%D1%8B%D0%B9_%D0%BA%D0%BE%D0%B4%D0%B5%D0%BA%D1%81_%D0%A0%D0%A1%D0%A4%D0%A1%D0%A0_1926_%D0%B3%D0%BE%D0%B4%D0%B0/%D0%A0%D0%B5%D0%B4%D0%B0%D0%BA%D1%86%D0%B8%D1%8F_05.03.1926

⁷ Գողությունը մեկնաբանվում էր, որպես կարիքի և գործազրկության հետևանքով նվազագույն պահանջումների բավարարմանն ուղղված գործունեություն:

⁸ Ըստ էության, պետությունը թափանցիկ կերպով ակնարկում էր՝ իմին ձեռք մի տուր, քեզ համար թանկի կնստի:

⁹ Сидоров А. Великие битвы уголовного мира. История профессиональной преступности Советской России. Книга первая (1917–1940 г.г.) https://coollib.com/b/314197-aleksandr-anatolevich-sidorov-velikie-bitvyi-ugolovnogogo-mira-istoriya-professionalnoy-prestupnosti-s_/read

իշխանությունն անցնելու էր գողերի ձեռքը: Սկզբնապես դա տեղի ունեցավ ազատության մեջ, քանի որ ազատագրված վայրերում դեռևս զգալի ազդեցություն ունեին նախկին՝ ցարական շրջանի քրեական բարքերը և հեղինակությունները: Սակայն ազատագրված վայրերում զանազան գողերի (*շիրմաչներ* - գրպանահատներ, *դոմուշնիկներ* - տուն թալանողներ, *մադյանիկներ* - կայարաններում և շուկաներում գողություն կատարողներ, *նայրուսիկներ* - բանկեր, հիմնարկություններ թալանողներ և այլն) թվի գերակշռությունը շուտով ունեցավ իր դերակատարությունը և թվային առավելության շնորհիվ նրանք իրենց ձեռքը վերցրեցին իշխանությունը նաև քրեակատարողական հիմնարկներում¹⁰: Հիշեցնենք, որ այդ ժամանակներում ազատագրված վայրերի մեծ մասում տարբեր տեսակի հանցագործները միևնույն տարածքում էին կրում իրենց պատիժը և չկային առանձնացված բաժիններ՝ մարդասպանների, քաղաքական և այլ հանցագործների համար: Մա ըստ էության նպաստավոր պայման էր ազատագրված վայրերում իշխանության հավակնող հանցագործների նոր խմբի ազդեցությունը ավելի արագ տարածելու համար:

Հենց այդ ժամանակներում՝ 20-ական թթ. վերջերին և 30-ականների սկզբներին ռուսաստանյան քրեական աշխարհում հայտնվում են «օրենքով գող» (законный вор), «գող ըստ օրենքի» (вор по закону) հասկացությունները¹¹: Այդպես, ի հակառակ ժիգանների¹² ու բանդիտների, իրենց սկսեցին կոչել նախկին քրեական աշխարհի հեղինակությունները (ուռկագանները) և նրանց միացած մնացյալ հանցագործ աշխարհը՝ անկախ նախկին հանցագործ զբաղմունքներից: Այդ եղանակով նրանք ձգտում էին ցույց տալ իրենց չեզոքությունը Խորհրդային իշխանության հանդեպ: Առաջին անգամ «գող» բառը սկսեց նշանակել ոչ թե մասնագիտություն, այլ քրեական կաստա¹³:

Մեծ հաշվով ակնկալելի էր, որ իշխանության վերաբաշխման գործընթացների հետևանքում հանցագործության գողությունից տարբերվող տեսակների և դրանցով զբաղվող հանցագործների կարգավիճակը քրեական աշխարհում իջեցվելու էր: Ըստ այդմ, բանդիտիզմը, մարդասպանությունը, խուլիգանությունը, բռնության իրականացումը համարվեցին ցածր կարգի հանցագործության տեսակներ, իսկ գողությունը՝ բարձր կարգի

¹⁰ Այդ առավելությունը հատկապես զգալի դարձավ տիրաառնչակ Գուլագի ստեղծմամբ: 1934 թ. բոլոր ճամբարները միավորվեցին ԳՈՒԼԱԳ (ГУЛАГ - Главное управление лагерей) - համակարգում:

¹¹ Գոյություն ունեն տարբեր մեկնաբանություններ այդ հասկացությունների ծագման վերաբերյալ: Համաձայն մեկի՝ «օրենքով գող» անվանումը ծագել է գրպանահատների միջավայրում, երբ գրպանահատը ըստ պայմանավորվածության գողոնի մի մասը բաժին է հանել հասցե («նավողկա») տվողին, ինչի համար վերջինս ասել է, որ «գողն ամեն ինչ արել օրենքով»: Մեկ այլ վարկածի համաձայն՝ գողական օրենքներին անդրդվելիորեն հետևող անձին անվանել են «օրենքով գող»:

¹² Քրեական խոսվածքների բացատրական բառարանում «ժիգան» բառը մեկնաբանվում է մի քանի կերպ. 1. կատաղի, մոլեգին գող, 2. հին, փորձառու կալանավոր, 3. հանցագործ խմբի գլուխ, 4. թափթփուկների հաշվին ապրող, 5. գողական խոսվածքին տիրապետող, 6. նորաձև հագնվող: Стен Толковый словарь угловных жаргонов (под общей редакцией Ю. Дубягина и А. Бронникова), Москва, 1991, Интер ОМНИС, с. 56.

¹³ Сидоров А. Великие битвы уголовного мира. История профессиональной преступности Советской России. Книга первая (1917-1940 г.г.) <https://coollib.com/b/314197-aleksandr-anatolevich-sidorov-velikie-bitvyi-ugolovno-go-mira-istoriya-professionalnoy-prestupnosti-s/> /read

հանցագործություն: Քանի որ «գողն իր գործն» անում է տեխնիկապես, առանց արյուն թափելու և «մաքուր» կերպով¹⁴:

Կարելի է ուղիղ ասել, որ հենց պետական նպատակաուղղված քաղաքականության շնորհիվ ձևավորվեց գողական կաստան: Պետական իշխանությունները ըստ էության հանցագործ աշխարհին բացահայտ ուղերձ հղեցին՝ եթե ցանկանում եք գոյատևել, ապա կարող եք զբաղվել միայն հանցագործության այդ տեսակով:

Կալանավայրերի ցանցի ընդլայնումը մի կողմից, դրանք մեկ գլխավոր հիմնարկության (ԳՈՒԼԱԳ) - մեջ միավորելը մյուս կողմից, գողականության հեղինակության հետագա կայացման ու ամրակայման համար նոր խթաններ դարձան¹⁵: Բանն այն է, որ սկզբնապես չունենալով վարչակազմի բավարար թվով ռեսուրսներ՝ մի շարք գաղութներում կառավարումը հանձնվում էր «սոցիալապես մերձավորներին»¹⁶, այսինքն գողերին¹⁷: Գողերի հանդեպ վստահության նման դրսևորումը կարծես լեգիտիմացնում էր գողականությունը ոչ միայն քրեական աշխարհի, այլև հասարակության աչքում: Այդ գործընթացը զգալիորեն հեշտանում էր ձևավորված այնպիսի հանրային ընկալումների շնորհիվ, որոնցում գողությունը որպես հանցագործության տեսակ կոնոտանսի մեջ էր խորհրդային իշխանության վարած քաղաքականության հետ: Քանի որ վերջինս՝ իր հենասյունը համարվող բանվոր և ընչազուրկ գյուղացիական դասակարգերի օգնությամբ նույնպես, և ընդհանուր առմամբ, զբաղված էր գողությամբ ու թալանով, որն ուղղված էր դասակարգային թշնամիներ հայտարարված՝ կապիտալիստների, կուլակների և հոգևորականության դեմ:

Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած ժամանակահատվածում քրեական աշխարհում սկիզբ առած պատերազմները (սուչկանների պատերազմներ - *сучьи войны*), որոնք տեղի էին ունենում հիմնականում գողական վարքականոնին հավատարիմ մնացած

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ ГУЛАГ - Главное управление лагерей

¹⁶ Հասկացությունն օգտագործվում է Ա. Սոլժենիցինի Արխիպելագ Գուլագում: Տես նաև <https://dzen.ru/media/litosphera/asoljenicyn-arhipelag-gulag-socialnoblizkie-ili-blatari-5d09c9c886eb9300b19b5133>

¹⁷ Ուղղիչ աշխատանքային գաղութների ադմինստրատիվ պաշտոնների մեծ մասը (սկսած գաղութի անցակետերի գլխավոր հերթապահից) Գուլագի առաջին տարիներին զբաղեցնում էին կալանավորները: Նույնիսկ գաղութների ապարատի բաժնի ղեկավարը կալանավոր էր: Գաղութների վարչակազմը առաջնորդվելով կուսակցության և պետության գլխավոր քաղաքական ուղեգծով, իհարկե, նախընտրում էր այդ պաշտոններին նշանակել «սոցիալապես մերձավոր» բանտարկյալների շարքերից: Առաջին հերթին նրանք հիանալի գիտեին բանտային բարքերը, սովորույթները, կարգուկանոնը և հեշտությամբ էին կողմնորոշվում տարբեր իրավիճակներում: Երկրորդ, նրանց օգնությամբ հնարավոր էր դառնում հեշտությամբ վերահսկել «քաղաքականապես անհուսալի» կալանավորներին: Հատկապես, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջիններս ԳՈՒԼԱԳ-ի ստեղծման առաջին տարիներին բազմաթիվ հոգսեր էին պատճառում բանտային ղեկավարությանը՝ իրենց իրավունքների մասին բարձրաձայնելով: Сидоров А. Великие битвы уголовного мира. История профессиональной преступности Советской России. Книга первая (1917-1940 г.г.) Հատկանշական է, որ մեր փորձագետներից ոմանք հայաստանյան կալանավայրերում գողական բարքերի առկայությունը նույնպես բացատրում են վարչակազմի ոչ բավարար ռեսուրսներ (օրինակ հսկիչներ) տնօրինելու հանգամանքով: Տես՝ *Փորձագիտական հարցազրույց, #6*:

գողերի և վարքականոնին դավաճանածների (իշխանության հետ համագործակցածների¹⁸) միջև, մեծ հաշվով «գողական» եզրի և գողականության հեղինակության վրա չազդեցին: Ընդհակառակը, գողական վարքականոնին հավատարիմ մնացածների և վարքականոնից շեղվածների միջև մարտերում հավատարիմների հաղթանակը ավելի բարձրացրեց քրեական աշխարհում գողականության հեղինակությունը: Մանձարձակությունը (беспрдел) և ֆիզիկական ուժի (маховик) գործադրումը կրկին ու հիմնավորապես մերժվեցին:

Հոգուտ գողականության հեղինակության մեծացման նշանակություն ունեցան նաև մի շարք այլ կարևոր գործընթացներ: Նախ երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած շրջանում գողականության հեղինակության պահպանման ու ամրապնդման տեսանկյունից կարևոր էր «մաքուր» կամ «օրենքով» գողերի նկատմամբ շարքային (այսպես կոչված՝ «մուժիկ») ազատագրվածների վերաբերմունքի փոփոխությունը: Այս խավը ըստ էության ամենամեծաթիվ էր ազատագրված վայրերում և նրա համակրանքից ու գոյության պայմաններից էր մեծ չափով կախված որևէ քրեական կաստայի իշխանավարումը¹⁹: Նախապատերազմյան շրջանում և բուն պատերազմի ընթացքում ազատագրվածների այդ խումբը բացարձակ արհամարված էր գողական վերնախավի կողմից և ենթարկվում էր տարաբնույթ շահագործման: Կալանավայրերում, կարելի է ասել, նրանք էին հիմնականում հոգում գողերի լրացուցիչ սննդի և նյութական պահանջները: Սակայն դրա դիմաց էական աջակցություն չէին ստանում: Սա, իհարկե «մուժիկների» շրջանում որոշակի դժգոհություն էր հարուցում: Բայց քանի որ իշխանության համար գողականներին մրցակից խմբավորումները «ժիգանները» շատ ավելի մերժողական վերաբերմունք ունեին մուժիկների հանդեպ, ապա վերջիններս լռելյայն հանդուրժում էին իրենց նկատմամբ գողականների կողմից ցուցաբերվող անարդար վերաբերմունքը:

Պատերազմից հետո գողական վարքականոնից հրաժարված գողերի («սուչկաների») վերադարձը և մի շարք կալանավայրերում նրանց իշխանության հաստատումը ուղեկցվեց ծայրահեղ «բեսպրեդելով» և «մուժիկների» շահագործման ավելացումով: Սա պատճառ հանդիսացավ, որ վերջիններս աջակցեն գողական վարքականոնին հավատարիմ մնացած կամ, որ նույնն է՝ «մաքուր» գողերին: «Մաքուր» գողերն իրենց հերթին անհավատարիմ գողերի («սուչկաների») դեմ պայքարում ունեին «մուժիկների» աջակցության կարիքը, և տեղի ունեցավ դատապարտյալների այդ երկու խմբերի փոխշահավետ մերձեցումը: «Մուժիկների» տեսանկյունից այդ մերձեցումը շահավետ էր հատկապես նրանով, որ գողերը հասկանալով մուժիկների նշանակությունը, փոխեցին իրենց վերաբերմունքը վերջիններիս նկատմամբ և սկսեցին պաշտպանել վերջիններիս՝ «բեսպրեդելից»: Որոշ դեպքերում «մաքուր» գողերը

¹⁸ «Սուչկաները» նախկին օրենքով գողեր և գողական հեղինակություններ էին, որոնք Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ համաձայնել էին զենք վերցնել ու կովել խորհրդային բանակում, սակայն պատերազմից հետո անգործ մնալով վերադարձել էին հին մասնագիտությանը: Բայց, գողական վարքականոնների չհետևելու պատճառով նրանք զրկվել էին գողի կոչումից ու իրավունքներից: Փորձելով վերագտնել իրենց իշխանությունը ազատագրված վայրերում, նրանք սկսեցին համագործակցել կալանավայրերի վարչակազմերի հետ և դրա հետևանքում արժանացան «սուչկա» պիտակմանը:

¹⁹ Гилинский Я. *Субкультура за решеткой*. "Советская этнография", 1990, №2, с. 100-103. Обсуждение статьи Л. Самойлова *"Этнография лагеря"*, СЭ, №1, 1990. <http://a-pesni.org/dvor/a-subzarech.php>

նույնիսկ ընդհանուր գանձարանի («աբշակի») միջոցներից օգնություն էին հատկացնում նեղության մեջ գտնվող «մուժիկներին» և նրանց ընտանիքներին²⁰:

Գողական ենթամշակույթի հեղինակության աճի տեսանկյունից կարևոր իրադարձություն էր ազատագրկման վայրերից դուրս՝ լայն հանրության շրջանում գողականության արժեքների և խոսվածքի տարածումը: Դրանում որոշակի դեր խաղաց Ստալինյան ռեժիմի տապալմանը հաջորդած Ձնհալը և դատապարտվածների ռեաբիլիտացիայի սկիզբ առած գործընթացը, որի արդյունքում մեծ թվով դատապարտյալներ և արքայազմեր ազատ արձակվելով վերադարձան իրենց բնակության վայրերը: Քանի որ ազատագրկման վայրերի մեծ մասում իշխում էր գողական վերնախավը և գողական բարքերը, տուն վերադառնալով նրանք իրենց հետ բերեցին գողական սովորություններն ու հասկացությունները²¹: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԳՈԻԼԱԳ-ը ողջ ԽՍՀՄ տարածքի կալանավայրերի միավորում էր, որոնցում պատիժ էին կրում նաև բազմաթիվ հայաստանցիներ, նրանց միջոցով ևս այդ բարքերը ներկրվեցին հայաստանյան միջավայր²²: Մի շարք մասնագետների դիտարկմամբ՝ 1950-ականներին գողական ենթամշակույթը արդեն համատարածական երևույթ էր²³: ԽՍՀՄ

²⁰ Сидоров А. Великие битвы уголовного мира. История профессиональной преступности Советской России. Книга первая (1917-1940 г.г.). <https://coollib.com/b/314197-aleksandr-anatolevich-sidorov-velikie-bitvyi-ugolovnogo-mira-istoriya-professionalnoy-prestupnosti-s /read>

²¹ Ըստ Ն.Ս. Խրուշչովի հիշողությունների նրանց թիվը հասնում էր մոտ 10 մլն-ի: Տես՝ *Хрущев Н. С. Воспоминания // Огонек. 1989. №28, с. 31.* Առհասարակ ԽՍՀՄ-ում բնակիչների մի զգալի հատվածը ուներ բանտային կամ գաղութային փորձառություն: Պաշտոնական տվյալների համաձայն միայն 1958-1988թթ 30 մլն մարդ է դատապարտվել, որից 10մլ-ը որպես կրկնահանգագործ: Տես՝ Самойлов Л. **ЭТНОГРАФИЯ ЛАГЕРЯ** . "Советская этнография", 1990, №1, с. 96-108. <http://a-pesni.org/dvor/piter/a-etnlageria.php>

²² Գ. Տեր Գաբրիելյանը այդ գործընթացը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Ճիշտ ինչպես որ մենք ունենք մի զանգված, որը պնդում է, որ ինքը դարաբաղյան պատերազմի ժամանակ հերոսություններ է արել, նույն կերպ էլ Գուլագից վերադարձածները, թեկուզ «ընկածները», ամենատուժածները, իրենց վերադարձից հետո, չունենալով՝ փաստորեն զրկված լինելով մասնագիտությունից, փող սարքելու միջոցից և այլն, պիտի մի կերպ ինքնահաստատվեին արդեն իրենց խաղաղ շրջապատում՝ թաղում և այլն: Եվ մի կողմից ինքնահաստատվեին, մյուս կողմից՝ ամբողջությամբ ներշնչվել էին գուլագային արժեքներով...

Այդ պատճառով էլ մարդիկ, որոնք գող չէին, չէին պատկանում այդ «օրենքով գողերի» կաստային, այդ գողականության մշակույթն իրենց հետ բերեցին: Տրավեստի արված ձևով, այսինքն՝ ավելի շատ ֆարսային ձևով, հաճախ՝ պարոդիայի ձևով: Այսինքն՝ այդ մշակույթը «ներքևից» է գալիս: «Օրենքով գողերը» երբեք այդքան որակական ազդեցություն չէին ունենա, եթե տասնամյակների ընթացքում այդ գործելակերպը սոցիումի կողմից կառուցվածքայնորեն չմարավեր և վերևից՝ իշխի կողմից չթիմարվեր ու քաջալերվեր»: Տես՝ Բոնության մշակույթը. գողականություն և հարակից երևույթներ. Ետխորհրդային փուլի ավարտը Հայաստանում: Հարցազրույց Գևորգ Տեր-Գաբրիելյանի հետ: Մաս երրորդ, <https://hetq.am/hy/article/111823>

²³ Ա. Միդորովը 1990-ականները նկատի ունենալով գրում է. «Ներկայում <<գողական գաղափարը» գործառնում է ոչ միայն Ռուսաստանում, այլև մերձավոր արտասահմանը, ինչպես նաև ամբողջ աշխարհի ռուսական սփյուռքը»: Տես՝ Сидоров А. Великие битвы уголовного мира. История профессиональной преступности Советской России. Книга вторая (1941-1991 г.г.) <https://coollib.com/b/314196-aleksandr-anatolevich-sidorov-velikie-bitvyi-ugolovnogo-mira-istoriya-professionalnoy-prestupnosti-s /read>

որևէ հանրապետությունում կամ մարզում գողական համայնքի կողմից իրականացվող կարևոր միջոցառումներին մասնակցություն ունենալ հանրապետությունների ու մարզերի գողական շրջանակները ուղղակի ներկայությամբ կամ պարզապես տեղեկացված լինելով: «Օրենքով գողերը» գումարում էին համախորհրդային ժողովներ («սխողկաներ»): Տեղեկատվական տարատեսակ փաթեթների (քսիվ- ксифа, մայրավա - малява, պրագոն – парогон) օգնությամբ գողական հեղինակությունների կողմից կայացված կարևորագույն որոշումների մասին ապահովվում էր տեղեկատվություն՝ ոչ միայն առանձին հանրապետությունների ու մարզերի, այլև համայն միության գողական շրջանակների համար:²⁴

1980-ականների կեսերին փոխվում է խորհրդային միութենական իշխանությունների պետական քաղաքականության կուրսը («Վերակառուցում», «Հրապարակայնացում», «Արագացում», «Տնտեսաշվարկ»), ինչով պայմանավորված գողական աշխարհը առերեսվում է նոր մարտահրավերների: Հատկապես կարևոր նշանակություն ունեցան տնտեսական բարեփոխումները, որոնցով սկիզբ դրվեց կոպերատիվ շարժմանը և մասնավոր ու տնտեսական տարբեր տեսակի գործունեություններին: Դեռևս 1970-ական թթ. նկատելի էին ընդհատակյա տնտեսական տարբեր գործունեություններին՝ գողական հեղինակությունների մասնակցության փաստեր, սկզբից՝ դրամաշորթության (рекет), այդուհետ՝ ուղղակի կապիտալի մասնակցությամբ: Գորբաչովյան վերակառուցումը և իմասնավորի՝ կոպերատիվ գործունեության խրախուսման քաղաքականությունը նոր հնարավորություններ բացեցին տնտեսական տարբեր գործունեություններում գողական հեղինակությունների ակտիվությունը ավելացնելու համար: Նման գործունեության հիմնավորումն այն էր, որ գողերն աշխատում են մասնավոր ու ոչ թե պետական ոլորտում կամ պետության համար²⁵: ԽՍՀՄ փլուզման և հետանկախության շրջանում նկատելի դարձան նաև նախկին քրեական հեղինակություններից մի քանիսի մասնակցությունը երկրի քաղաքական զարգացումներին, ինչը առանձին դեպքերում ուղեկցվում էր բանդիտիզմի և բեսպրեդելի դրսևորումներով: Չնայած այդ զարգացումներին, ազատագրկման վայրերում գողական վարքականոնները և գողական վերնախավը պահպանեցին իրենց դիրքերը և ներկայում շարունակում են հիմնականում պահպանել: Սա մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ ԽՍՀՄ-ից անկախացած հանրապետություններում, այդ թվում Հայաստանում, իշխանության բարձրագույն պաշտոններում (այդ թվում իրավապահ մարմիններում և արդարադատության ոլորտում) տևական ժամանակ շարունակում են տեղ զբաղեցնել նախկին կուսակցականներ ու կոմերիտական ակտիվիստներ: Նրանք ըստ էության հանդիսանում են հանցագործ աշխարհի նկատմամբ խորհրդային ժամանակներին բնորոշ մոտեցումների և վերաբերմունքի կրողներ:

Պետական համակարգի հետ խորհրդային և մասամբ նաև հետխորհրդային շրջանում գողական աշխարհի գոյություն ունեցող սերտ կապվածությունն է, որ հիմք է տվել տարբեր հետազոտողների՝ գողականությունը ձևակերպել որպես «ենթամշակույթ»: Լ. Սամոյլով

²⁴ «Սխողկեքի» որոշումները, հատկապես կարևոր հարցերի մասին, «վսեսայուզնի» նշանակություն ունենալու հիմա էլ ունեն: «Սովետի» սաղ գողերը տեղեկացվում էին դրանց մասին ու կարծիք հայտնում: Որոշումները գաղութներ ու բանտեր կհասնեին «պրագոնների» միջոցով: Կամչատկայից մինչև Օդեսա, Լենինգրադից ու Մասկվայից մինչև Կավկազ ու Հայաստան «սխողկի» ինֆորմացիան 2-3 օրվա մեջ տեղ կհասնի», *Անհատական հարցազրույց: Նախկին դատապարտված: Գյումրի, 2022:*

²⁵ Փորձագիտական հարցազրույց: #8, 9:

օրինակ համարում է, որ «կալանավայրերի դատապարտյալների հասարակությունը արտացոլում է ողջ խորհրդային կյանքի առանձին գծերը»²⁶: Վ. Կաբոյի կարծիքով. «Ավելի ճիշտ կլիներ ասել, որ կալանավայրն ու հասարակությունը արտացոլում էին միմյանց, այնպես ինչպես երկու հայելի, որոնք տեղադրված են դեմ դիմաց>>: Անդրադառնալով կալանավայրերում գողականների իշխանությանը նա գրում է. «Ղեկավարությունը հավանաբար նույնպես շահագրգռված էր «անուղղակի կառավարման» այդպիսի համակարգի գոյությամբ, որովհետև այն ապահովում էր և՛ արտադրական պլանի կատարումը, և՛ գաղութի կարգուկանոնը»²⁷: Հիմնահոսային (պաշտոնական) մշակույթի հետ քրեական բարքերի բազմաթիվ ընդհանրությունները նկատի ունենալով գրող, հրապարակախոս Գ. Տեր-Գաբրիելյանը կարծում է, որ «Քրեականությունը ոչ թե շեղում էր կամ բացառություն, **ոչ թե ենթամշակույթ**, այլ՝ մեյնսթրիմի յուրահատուկ մաս, երբեմն՝ քողարկված, իսկ երբեմն՝ մարդիկ պարզապես չէին էլ նկատում, որ իրենց վարքը նույն քրեականությունն է, քանի որ չէին ուզի, որ այդպես եղած լինեք...»²⁸:

Այդուհանդերձ, գողական վարքականոններում առկա են մի շարք արգելքներ, որոնք առավել բնութագրական են հակամշակույթներին: Այդպիսիք են օրինակ.

- Բանակում չծառայելը և իշխանության ձեռքից գենք չվերցնելը:
- Պետական մարմինների և հատկապես իրավապահայան մարմինների հետ ոչ մի դեպքում կապի մեջ չլինելը:
- Ոչ մի պարագայում արդարադատության համակարգի օգնությանը չդիմելը: Դատարանի հետ հնարավոր է ունենալ միայն կապի մեկ ձև՝ մեղադրյալի կարգավիճակում:
- Ոչ մի դեպքում դատարանում վկայի կարգավիճակում, ոչ էլ տուժվածի վիճակում հանդես չգալը: Պաշտպանության համար կարելի է դիմել միայն յուրայիններին:
- Արգելվում է մասնակցել պետական և հանրային կազմակերպությունների աշխատանքներին (օրինակ մտնել կոմերիտիության շարքերը), նույնիսկ համակրել:
- Արգելվում է մասնակցել Խորհրդային իշխանության որևէ միջոցառումների (օրինակ մայիսի 1-ին, նոյեմբերի 7-ին, «կարմիր առաջնորդների» ծնունդներին, միտինգներին, ցույցերին, ընտրություններին և այլն):

Հիշատակված վարքականոնները գողական կաստան յուրացրել է հետհեղափոխական (1917թ. բոլշևիկյան հեղափոխությանն հաջորդող) շրջանում քրեական աշխարհում մեծ հեղինակություն վայելող հանցագործ խմբավորումներից մեկից՝ «Ժիգաններից», որոնք

²⁶ Самойлов Л. Путешествие в перевернутый мир Нева, 1989. №4, с. 162

²⁷ Кабо В. Структура лагеря и архетипы сознания. ("Советская этнография", 1990, №1, с. 108-113). Անդ, էջ 108:

²⁸ Բռնության մշակույթը. գողականություն և հարակից երևույթներ. Հետխորհրդային փուլի ավարտը Հայաստանում: Հարցազրույց Գևորգ Տեր-Գաբրիելյանի հետ: Զրուցավար՝ Գայանե Հովակիմյան, Մաս առաջին: <https://hetq.am/hy/article/108479>

առաջինն էին, որ մշակեցին հանցագործ աշխարհի հստակ վարքականոններ²⁹: Այս գործում նրանց աջակցեցին խորհրդային իշխանության քաղաքական ընդդիմադիրները, որոնք հասկանալով, որ խորհրդային իշխանությունների դեմ պայքարը չեն կարող շարունակել քաղաքական մեթոդներով և լծակներով, որոշեցին, որ դա հնարավոր է իրականացնել հանցագործ աշխարհը կազմակերպելու, վերջիններիս օգնությամբ խորհրդային իշխանության միջոցառումները սաբոտաժի ենթարկելու, իշխանության հաստատությունները վարկաբեկելու եղանակով³⁰: Այդ գործը հաջողությամբ գլուխ բերելու համար նրանք հիմնվեցին բոլշևիկյան իշխանություններից դժգոհ նախկին ցարական ռեժիմի ժամանակների հանցագործ հեղինակությունների վրա, ինչպես նաև որպես քաղաքական դատապարտյալներ իրենք մասամբ համալրեցին նրանց շարքերը: Խորհրդային իշխանությունների կողմից գողության և գողականության խրախուսմանը և գողական կաստայի կայացմանը նպաստող օրենքների ընդունումը ըստ էության հակաքայլ էր՝ ուղղված քաղաքական ընդդիմադիրներին, նրանց կողմից հովանավորվող քրեական խմբավորումներին: Ինչպես և ակնկալվում էր, քաղաքական իշխանությունների՝ անհամեմատ հզոր լծակների և աջակցության շնորհիվ, կարճատև պայքարից հետո գողականությունը կարողացավ նվազեցնել քրեական մյուս խմբավորումների հեղինակությունը և ազատագրկման վայրերում նրանցից զավթել իշխանությունը: Այս առումով հատկապես նպաստավոր եղավ ՌՄՖՍՀ Քրեական օրենսգրքի տխրահռչակ 58-րդ հոդվածը³¹, որի հետևողական կիրառման (մահապատժի) արդյունքում քաղաքական հանցագործների թիվը մեծ արագությամբ շարունակում էր նվազել:

Այնուամենայնիվ, ինչոր բան գողականները յուրացրեցին և ժառանգեցին ժիզաններից: Դրանք ժիզանների կողմից մշակված, ակնհայտ հակամշակութային և հակապետական բովանդակություն ունեցող վարքականոններն էին, ինչպես նաև արտաքին ատրիբուտիկայի որոշ տարրեր:

Ինչու՞ դա տեղի ունեցավ: Առաջին հերթին այդպես էր թելադրում գողության՝ որպես հանցագործության յուրահատուկ տեսակի իմպերատիվ բնույթը: Գողանալ նշանակում էր ապրել անաշխատ եկամտով, այսինքն չաշխատել ոչ մեկի, այդ թվում պետության համար: Քրեական աշխարհում գողականության՝ վերնախավի վերածվելու միտումը էլ ավելի խստացրեց այդ պայմանին հետևելը: Չաշխատելու իմպերատիվից էր բխեցվում նաև բանակում չծառայելը և զենք չվերցնելը, քանի որ դրանք նույնպես դիտարկվում էին որպես աշխատանքի տարբերակներ: Նույնիսկ ազատագրկման վայրերում շահավետ տարբեր աշխատանքներ, որոնք ընդունելի էին հանցավոր աշխարհի նախկին (մինչև 1917թ.

²⁹ Сидоров А. Великие битвы уголовного мира. История профессиональной преступности Советской России. Книга первая (1917-1940 г.г.) https://coollib.com/b/314197-aleksandr-anatolevich-sidorov-velikie-bitvyi-ugolovnogo-mira-istoriya-professionalnoy-prestupnosti-s_/read

³⁰ Как появилась "каста воров". Короли преступного мира | Вор. Закон вне закона. 1 серия. <https://www.youtube.com/watch?v=wMGtQfoWcsY>

³¹ 58-րդ հոդվածը վերաբերում էր «հակահեղափոխական հանցագործներին», այսինքն՝ քաղաքատարկյալներին և որպես «Սոցիալական պաշտպանության բարձրագույն միջոց» նախատեսում էր մահապատժ: Ств Уголовный кодекс РСФСР в редакции 1926 года. https://ru.wikisource.org/wiki/%D0%A3%D0%B3%D0%BE%D0%BB%D0%BE%D0%B2%D0%BD%D1%8B%D0%B9_%D0%BA%D0%BE%D0%B4%D0%B5%D0%BA%D1%81_%D0%A0%D0%A1%D0%A4%D0%A1%D0%A0_1926_%D0%B3%D0%BE%D0%B4%D0%B0/%D0%A0%D0%B5%D0%B4%D0%B0%D0%BA%D1%86%D0%B8%D1%8F_05.03.1926

հեղափոխության ժամանակահատվածի) հեղինակությունների համար³² (հաց կտրող- «խլեբառեզ», բաղնիսպան, շինարարական վերակացու, հերթապահ, վարսավիթ, բրիգադիր և այլն) գողերի կողմից իսպառ մերժվեցին, այնպես ինչպես, որ մերժվում էին ժիգանների կողմից: Պետական մարմինների՝ իրավապահ համակարգի, դատական համակարգի հետ չհամագործակցելու պայմանները գողերը ընդօրինակեցին ժիգաններից, որովհետև այդ վարքականոնները արդեն արմատավորվել էին քրեական աշխարհում, դարձել էին քրեական հեղինակությունների կարևոր հատկանիշներ, որոնց հետ գողերը պարզապես ստիպված էին հաշվի նստել և կապել: Տեսական ժամանակ համակեցության մեջ լինելով ժիգանների հետ, նրանք հասկացել էին, որ այդ հատկանիշները օգնում են ազատագրկման վայրերում մեծամասնություն կազմող «մուժիկության» («հարիֆության») և մյուս ստորակարգ հանցագործների շրջանում հեղինակություն ձեռք բերելուն: Նույն պատճառով գողականները ժիգաններից յուրացրեցին նաև այլ հատկանիշներ: Օրինակ շքեղ հագնվելը, անձնական հիգիենային հետևելը, զինվորական կազմակերպվածությանը բնորոշ խստությունն ու կարգապահությունը³³:

Գողական ենթամշակույթում ժիգանների վարքականոնների ամրապնդմանը հատկապես զգալիորեն նպաստեց արդեն 1930-ական թթ. -ից գողականների նկատմամբ խորհրդային իշխանությունների վերաբերմունքի փոփոխությունը: Տեսեսական տարբեր խոշորամասշտաբ ձեռնարկումներում աշխատուժ ապահովելու նպատակով խորհրդային իշխանությունները գնացին բոլոր տեսակի հանցագործությունների (այդ թվում՝ գողության) համար նախատեսվող պատժաչափերը ավելացնելու քայլին³⁴: Գողերի համար այդ անակնկալը հասկանալի մատուցելու կամ մի գուցե արդարանալու նպատակով նրանք շրջանառության մեջ դրեցին հանցագործների «դասակարգային մերձավորության» թեզը, որը, ի տարբերություն «սոցիալական մերձավորության» թեզի, մասնակի զիջումներ էր նախատեսում ոչ թե բոլոր տեսակի գողերի, այլ միայն բանվորա-գյուղացիական ծագում ունեցողների համար:³⁵ Դրա հետևանքում, հեղինակություն ունեցող շատ գողեր, որոնք չնայած ընդունել էին խորհրդային իշխանության պայմանները՝ միայն գողությամբ զբաղվելու վերաբերյալ, սակայն չունեին բանվորագյուղացիական ծագում, զրկվեցին նախկին պատժաչափով սահմանված արտոնություններից: Կատարվածը, անշուշտ մեծ հիասթափություն առաջացրեց գողականության շրջանում և նպաստեց պետությունից վերջիններիս էլ ավելի հեռու դիրքավորվելուն:

Ողջ ասվածը հաշվի առնելով կարելի է արդյոք գողականությունը հակամշակույթ համարել: Ըստ էության գողականության՝ ենթամշակույթ լինելու օգտին ոչ պակաս ծանրակշիռ ու մեծաթիվ փաստարկներ են առկա: Դրանցից մեկը օրինակ վերաբերում է գողական ենթամշակույթի ծագումնաբանությանը: Արդեն նշվել է, որ ԽՍՀՄ-ում գողականությունը առաջացավ ոչ պաշտոնական մշակույթին և պետությանը հակադրվելու նպատակով: Այն որպես ենթամշակույթ առանձնացավ, կայացավ և քրեական աշխարհում գերիշխող դիրք

³²Якубович П. В мире отверженных. Записки бывшего каторжника (1895–1898 гг.).

<http://elibr.shpl.ru/ru/nodes/3220-t-1-1896>

³³ Сидоров А. Великие битвы уголовного мира. История профессиональной преступности Советской России. Книга первая (1917-1940 г.г.) https://coollib.com/b/314197-aleksandr-anatolevich-sidorov-velikie-bitvyi-ugolovnogo-mira-istoriya-professionalnoy-prestupnosti-s_/read

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նույն տեղում:

ստացավ խորհրդային իշխանությունների մի շարք միջոցառումների շնորհիվ, որոնցում ակնհայտ էր վերջիններիս գաղափարական աջակցությունը: Հետագա տարիներին այդ աջակցությունը, թեկուզ մասնակի նվազմանը, ամբողջովին չդադարեց, ինչի մասին է վկայում ազատագրկման վայրերում վարչակազմերի կողմից ներքին կառավարումը օրենքով գողերին ու գողական հեղինակություններին վստահելը: Ավելի ուշ՝ ԽՍՀՄ փլուզմանն հաջորդող շրջանում, և հատկապես 1990-ականների երկրորդ կեսից սկսած ակնհայտ է քաղաքական որոշակի գործընթացների (օրինակ ընտրարշավների) մեջ նրանց ներգրավումը³⁶:

Գողականի՝ ենթամշակույթ լինելու օգտին են խոսում նաև պաշտոնական մշակույթի հետ տարբեր հարթություններում դրսևորվող նմանությունները: Ինչպես արդեն ասվել է, այդ նմանությունները ակներև են հանցագործության որոշակի տեսակներ մերժելու հարցում, որպիսիք են՝ բռնաբարությունը, սպանությունը, թմրանյութերի վաճառքը, բանդիտիզմը և այլն: Գողական ենթամշակույթը, ինչպես և խորհրդային տարիների պաշտոնական մշակույթը մերժողական վերաբերմունք ուներ հարուստների և կապիտալիստների նկատմամբ, որոնց թալանելը ըստ էության երկուստեք խրախուսելի էր: Մի գուցե ամենա առանցքային նմանությունն այն է, որ ինչպես ԽՍՀՄ պաշտոնական մշակույթի, այնպես էլ գողականության սոցիալական հենարանը շարքային աշխատավոր դասակարգն էր (մուժիկները կամ հարիֆները), որոնց հաշվին ազատագրկման վայրերում գոյատևում էր գողական վերնախավը և որոնք իրենց իշխանությունը պահպանելու համար աջակցում և պաշտպանում էին մուժիկությանը՝ քրեական այլ տարրերի ոտնձգություններից:

Պաշտոնական կամ հիմնահոսային մշակույթի հետ գողական ենթամշակույթը ուներ նաև բյուրոկրատական և կառուցվածքային ընդհանրություններ: «Ինչո՞ւ էր գաղութներում (և բանտախցում) իշխանությունը պատկանում գողերին», հարցնում է Վ. Կաբոն ու անմիջապես պատասխանում. «Որովհետև նրանք միահյուսված ու իրար հետ կապված էին խիստ կարգապահությամբ ու գողական օրենքով, և այդ առումով կապկում էին իշխող կուսակցության³⁷ հիերարխիկ կառուցվածքը, դրա կարգապահությունն ու կանոնադրությունը, դրա անդամությունից բխող իրավունքներով և պարտականություններով: Մալալետկաները՝ ապագա օրենքով գողերը, ինչ որ առումով կոմերիտականներ էին, կադրերի դարբնոց: Մուկաների նկատմամբ դատավարությունները հիշեցնում էին *ժողովրդի թշնամիների* նկատմամբ դատավարությունները... Մուժիկները պարտավոր էին բարեխիղճ աշխատել: Նրանք հարկադրված էին «եկամտահարկ» վճարել, որը վճարելուց հետո կարող էին ապրել հանգիստ ու ինքնավստահ, իմանալով, որ իրենց ոչ ոք չի նեղացնի: Իսկ եթե նման բան տեղի ունենար, կարելի էր դիմել գողերին, ինչպես իշխանություններին՝ օգնության համար»³⁸:

³⁶ «[Լրագրողներ հանուն մարդու իրավունքների](#)» *ՀԿ* նախագահ Ժաննա Ալեքսանյանը խոսելով մինչև Թավշյա հեղափոխության ժամանակահատվածի մասին, նկատում է. «Ասենք օլիգարխիկ համակարգը, որ կար մեր երկրում, որը սերտաճած էր իշխանությունների հետ, եթե հիշում եք ընտրություններին նաև բանտերից մարդիկ էին բերում... Ո՞վ էր դա անում»: *Փորձագիտական հարցազրույց*, #5: ՀՀ նոր իշխանությունների բարեփոխումները ազատագրկման վայրերում

³⁷ Նկատի ունենք ԽՍՀՄ Կոմունիստական Կուսակցությունը:

³⁸ Кабо В. Р. [Структура лагеря и архетипы сознания.](#) ("Советская этнография", 1990, №1, с. 108-113).

Գողերն ունեին իրեն սեփական ոչ բարդ գաղափարախոսությունը: Իրենց գոյությունը նրանք

Ասվածից գատ, առկա էին նաև որոշակի ընդհանրություններ գողական խոսվածքի և հիմնահոսային մշակույթի բառերի ու հասկացությունների միջև: Ա. Միդորովը համարում է, որ խոսվածքում օգտագործվող բառերի մեծամասնությունը ժողովրդի տարբեր բարբառներից վերցված բառերի ու հասկացությունների շաղախ է³⁹: Հետևապես սխալ է այն առանձին լեզու համարելը⁴⁰: Չնայած բառարանի առանձին հատվածներում մենք նույնպես կրկնություններից խուսափելու նպատակով հաճախ «խոսվածք», «Ժարգոն» հասկացություններին զուգահեռ օգտագործել ենք «գողական լեզու» եզրը, այդուհանդերձ, լեզվաբանական տեսանկյունից ճիշտը *խոսվածք* եզրի օգտագործումն է: Քանի որ մի կողմից՝ «Ժարգոնը չունի իր քերականական կարգը և հիմնական բառային ֆոնդը»⁴¹, մյուս կողմից՝ «հանցագործները խոսում են ընդհանուր օգտագործման լեզվով՝ Ժարգոնի կողմից շատ թե քիչ հավելումներով և սնուցումներով»⁴²:

Ավարտելով գողական ենթամշակույթի այս հակիրճ անդրադարձը և վերադառնալով բառարանի բուն նյութին՝ գողական խոսվածքին, մի քանի խոսքով ներկայացնենք վերջինիս ծագման հանգամանքները: Խոսվածքների առաջացման հանգամանքների մասին խոսելիս ուսումնասիրողները կարևորում են մի շարք հանգամանքներ: Օրինակ նման հանգամանքներ կարող են լինել հիմնահոսային մշակույթից որևէ խմբի (էթնիկ, սոցիալական, մասնագիտական և այլն) երկարատև մեկուսացումը, որոշակի արտաքին գործոնների ազդեցությամբ այլ՝ կայացած լեզվական միջավայրում նրանց հայտնվելը, գործունեության առանձին ասպեկտները միջավայրից թաքցնելը կամ ընդհատակյա գործունեությունը: Խոսվածքների առաջացման պատճառների թվում նշվում է նաև սեփական խմբի ներկայացուցիչներին հեշտությամբ նույնականացնելու և խմբին չպատկանողներին նրանցից տարբերելու գործառույթը: Գողական խոսվածքի ծագման վերաբերյալ ուսումնասիրողների կարծիքները նույնքան տարաբնույթ են, որքան թվարկված գործոնները: Ուսումնասիրողների մեծ մասը, այնուամենայնիվ համարում է, որ գողական խոսվածքի առաջացման պատճառը գաղտնապահությունն է: Այդ կարծիքը սակայն հերքվում է մի շարք հակափաստարկներով.

- Գողական ենթամշակույթի ներկայացուցիչները հաճախ բացահայտ օգտագործում են խոսվածքը ոչ միայն հանցագործ աշխարհի մյուս ներկայացուցիչների, այլև իրավապահ մարմինների ներկայությամբ:
- Գողական խոսվածքում ներառվող բառերի ու հասկացությունների մի զգալի մասը օգտագործվում է ոչ գողական ենթամշակույթին պատկանող անձանց կողմից և առօրյա հարաբերություններում:

արդարացնում էին պարզ ձևով՝ «բոլորը գողանում են», նրանց համոզմամբ՝ ողջ հասարակությունը հիմնված է գողության, բլատի վրա»:

³⁹ Сидоров А. Великие битвы уголовного мира. История профессиональной преступности Советской России. Книга первая (1917-1940 г.г.)

⁴⁰ «Ժարգոն» (ըստ էության՝ արգո) բառը շրջանառության մեջ դրած ֆրանսիացի գրող Վ. Հյուգոն լեզուն և ժարգոնը օգտագործում է որպես հոմանիշներ «քիչ հետազոտություններ կարող են այնքան հետաքրքիր ու արդյունավետ լինել, որքան արգոյի ոլորտը: Դա իսկական լեզու է լեզվի մեջ...»: Стелюга В. Отверженные. Т. 2. М.: Правда, 1979, Кн. 7. С. 308

⁴¹ Толковый словарь уголовных жаргонов, Под общей редакцией Ю.П. Дубягина и А.Г. Бронникова, М. 1991, с. 7.

⁴² Толковый словарь уголовных жаргонов, Под общей редакцией Ю.П. Дубягина и А.Г. Бронникова, М. 1991, с. 8.

- Ազատագրկման վայրերում ծառայություն իրականացնող վարչակազմի անդամները հիմնականում քաջածանոթ են գողական խոսվածքին⁴³:

Որոշ ուսումնասիրողներ համարում են, որ հանցագործ աշխարհում ներգրավված անձիք անգրագետ և թերուս են, ինչը որոշակի ազդեցություն է ունեցել գողական բառապաշարի ձևավորման վրա: Այդ հանգամանքը օրինակ Վ. Սամոյլովին թույլ է տվել, նաև այլ փաստարկների հիմամբ, պնդել, որ գողական ենթամշակույթը նախնադարյան մշակույթի արդի դրսևորում է⁴⁴: Այս պնդումն ևս ունի իր հակափաստարկները, իմասնավորի, որ գողական հեղինակությունների մեջ կան բազմաթիվ բուհական կրթությամբ և մտավորականների ընտանիքներից սերող մարդիկ: Ուսումնասիրողների մեկ այլ խումբ համարում է, որ գողական խոսվածքը մասնագիտական լեզու է և ընդհանրություններ ունի որոշակի հազվագույտ արհեստավորական ընկերակցությունների լեզվի հետ⁴⁵: Որպես դրա օժանդակ փաստարկում նշվում են նաև գողականների պահելաձևը, հագուստը, ոճը և այլն⁴⁶: Հնչել է նաև տեսակետ, որ գողական խոսվածքը պայմանավորված է հանցագործների այլասերված մտածողությամբ և պայմանավորված է նրանց բացառիկության ինքնագիտակցմամբ, որը փորձ է արվում ներշնչել մյուսներին⁴⁷:

Մեր կարծիքով վերոնշյալ բոլոր գործոնները ինչոր չափով մասնակից են գողական խոսվածքի ձևավորմանը, այդ թվում և՛ մեկուսացումը, և՛ մասնագիտացումը, և կուրաժը՝ և՛ նույնականացումը, և՛ կոնսպիրացիան: Վերջին առումով ուշագրավ է, որ 18.02.2022թ. ՀՀ Քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները անուղղակիորեն նպաստել են ազատագրկման վայրերում գողական ենթամշակույթի խոսվածքում ընդունված հասկացությունների («պանյատների») բացահայտ օգտագործումից խուսափելուն⁴⁸: ՀՀ տարբեր քրեակատարողական հիմնարկություններում գտնվող դատապարտյալների հետ հարցազրույցներում ակներև էր, որ նրանք զգուշանում են բարձրաձայն հնչեցնել առավել ակտիվ կիրառում ունեցող ժարգոնային հասկացությունները, հատկապես, այնպիսիք, որոնք վերաբերում են գողական աշխարհում ընդունված կարգավիճակներին և հարաբերություններին⁴⁹: Հարցազրույցներից մեկի ժամանակ բանասացը նկատեց, որ անհրաժեշտության դեպքում այդ հասկացությունները կփոխարինվեն ուրիշներով, բայց երբեք չեն հրաժարվի դրանցից՝ քանի դեռ գործում են այդ կարգավիճակներն ու

⁴³ Որոշ փորձագետներ նշում են, որ քրեական ենթամշակույթի հասկացություններ նկատելի են նաև վարչակազմի մոտ: *Փորձագիտական հարցազրույց, # 5, 10*:

⁴⁴ Самойлов Л. Этнография лагеря. "Советская этнография", 1990, №1, с. 96-108.

⁴⁵ Толковый словарь уголовных жаргонов, Под общей редакцией Ю.П. Дубягина и А.Г. Бронникова, М. 1991, с. 8.

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Հիշեցնենք, որ ՀՀ Քր. օրենսգրքում (նաև կատարված փոփոխությունների արդյունքում) չեն օգտագործվում *խոսվածք, ժարգոն, լեզու* արտահայտությունները: Տես՝ Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք: <https://www.arlis.am/documentview.aspx?docid=139239>

⁴⁹ Փորձագիտական հարցազրույց, # 10:

հարաբերությունները⁵⁰: Իսկ մեկ այլ բանասաց նկատեց, որ եթե ինքը լիներ ազատության մեջ, առանց կաշկանդվելու կբացահայտեր գողական մի շարք հասկացությունների իմաստները⁵¹:

⁵⁰ Անհատական հարցազրույց: Գյումրի, 2022:

⁵¹ Անհատական հարցազրույց: Գյումրի, 2022:

Գողական ժարգոնը քրեական ու թաղային միջավայրերում. փոխակերպումներն ու ընդհանրությունները

Ադասի Թադևոսյան

Հողվածի հիմնական նպատակն է քննարկել Հայաստանի հասարակական միջավայրում այսպես կոչված «գողական» ժարգոնի ու պրակտիկաների տարածվածության երևույթը և դրա փոխակերպումները: Հողվածի հիմքում ընկած են «գողական» ժարգոնի բացատրական բառարանի կազման համար իրականացված հետազոտական աշխատանքների ընթացքում գրանցված որակական տվյալները: Հետազոտությունն անցկացվել է Երևանում, Գյումրիում, Գորիսում, Արմավիրում և Արթիկում: Հաշվի առնելով այն, որ հետազոտվող երևույթը հիմնականում բնորոշ է քաղաքային բնակավայրերին, ընտրվել է մեկ խոշոր, մեկ միջին և երեք փոքր քաղաքներ: Իրականացվել են 45 անհատական խորացված և 10 փորձագիտական հարցազրույցներ, ընդհանուրը 80 ժամ տևողությամբ: Աշխատանքները հիմնականում կատարվել են բառարանագիտական տվյալներ գրանցելու նպատակով: Գրանցված հետազոտական տվյալները բավականին հարուստ նյութ են պարունակում ոչ միայն բառերի բացատրական և իմաստաբանության տեսանկյունից, այլև՝ «գողական» ենթամշակույթին բնորոշ ժարգոնի, որպես հասարակական հարաբերությունների վրա ազդող և որոշակի վարքագծային պրակտիկաներ ձևավորող երևույթի: Հետաքրքիր ու կարևոր բացահայտումներից է այն, որ քրեական միջավայրում ծնված ու շրջանառվող «գողական» ժարգոնը պայմանավորում է ոչ միայն բուն քրեական միջավայրին բնորոշ հարաբերությունների ու վարքագծային պրակտիկաների ձևերը, այլև՝ դուրս գալով այդ շրջանակներից և որոշակի փոխակերպումներ ապրելով, էական դեր է խաղում «տղամարդկանց աշխարհում» հասարակական հարաբերությունների կազմակերպման, հիերարխիաների ձևավորման ու վարքագծային պրակտիկաների արմատավորման վրա: Հայաստանում «գողական» ենթամշակույթի տարածման միջավայրը քաղաքներն են, իսկ գլխավոր բջիջը՝ թաղերը, բակերն ու փողոցը⁵²: «Գողական» հասկացությունների ու այդ միջավայրի կանոններին համաձայն ապրելակերպի նորմերի յուրացումը ինչպես 1900-ականների երկրորդ կեսերին, այնպես էլ այսօր սկսվում է թաղային միջավայրում տղաների սոցիալականացման վաղ տարիքից:

Գրանցված բառարանային տվյալները թույլ են տալիս ասել, որ այդ ժարգոնը հայկական միջավայրում փոխառված երևույթ է և այստեղ մուտք է գործել ռուսական քրեական աշխարհից, որը ԽՍՀՄ տարիներին էական տրանսֆորմացիաներ կրեց գուլագներում⁵³ և

⁵² Այս հիմնախնդրի մասին չափազանց հետաքրքիր է՝ Լևոն Աբրահամյան, Գվարդիաններից մինչև թաղային հեղինակություններ, «Հեռափոխելով քաղաքը. մարդաբանական դիտանկյուն» գիտաժողովում կարդացած զեկույց, <https://www.youtube.com/watch?v=OLQNiCuoDQ> (վերջին դիտումը՝ 25 օգոստոս, 2022):

⁵³ Այս խնդրի շուրջ ուշագրավ դիտարկումներ են արվել՝ Բոնուբոյան մշակույթը. գողականություն և հարակից երևույթներ. Ետխորհրդային փուլի ավարտը Հայաստանում: Հարցազրույց Գևորգ Տեր-

արդեն 1940-ականների վերջերից սկսեց ներթափանցել Հայաստանի քաղաքային միջավայր⁵⁴։ Որոշ կարծիքների համաձայն, 1950-ականներին, երբ սկսվեց խրուշչովյան ձնհալը ու շատ բանտարկյալներ արդարացում ստանալով վերադարձան իրենց բնակավայրեր, իրենց հետ բերեցին նաև բանտային միջավայրին բնորոշ ժարգոնը ու վարքագծային պրակտիկաները։ Այսինքն, կարելի է ասել, որ թաղը, որպես հասարակական համակեցության տարածք ու միավոր, սկսեց «գողականացվել» հենց այդ տարիներից սկսած⁵⁵ և դա խորհրդային երևույթ է, ինչը հայկական միջավայրում «ազգայնացվելով» ձեռք բերեց տեղական բնույթ⁵⁶, մինչև ժամանակ պահպանելով ընդհանրություններն ու կապերը ԽՍՀՄ ողջ տարածքում տարածված այդ ենթամշակույթի հետ⁵⁷։ Հետխորհրդային տարիներին, այն որոշակի փոխակերպումներ է կրում⁵⁸։ Փոխակերպումների գործընթացը շարունակական բնույթ ունի և պայմանավորված է նոր հասարակական իրավիճակի առանձնահատկություններով։

Տղան թաղային կյանքում

Հայաստանում «գողական» ժարգոնի ու վարքուբարքի յուրացման անմիջական նեղ միջավայրը փողոցն է, մի փոքր ավելի լայն՝ թաղը։ Փողոցը, որպես քրեական վարքուբարքի միջավայր միայն Հայաստանին բնորոշ երևույթ չէ⁵⁹։ Դա բավական տարածված է աշխարհի նաև այլ երկրներում⁶⁰։ Քաղաքի մարդաբանությունը թույլ է տալիս ասել, որ այն քաղաքային կյանքում տարածվեց հատկապես քաղաքների ինդուստրիալիզացման շրջանում, երբ գողությունը հասարակության կողմից դատապարտելի և առանձին ու անհատական բնույթի արարքից, ձեռք բերեց կազմակերպված խմբային բնույթ, ձևավորելով իրեն բնորոշ ենթամշակույթները։ Հայաստանում նույնպես, ըստ ազգագրական վկայությունների գողությունը համայնքային կյանքում խստագույնս դատապարտող արարք էր, իսկ ըստ

Գաբրիելյանի հետ, հարցազրուցավար Գայանե Հովակիմյան, մաս առաջին, <https://hetq.am/hy/article/108479> (վերջին դիտումը՝ 25 օգոստոս, 2022)։

⁵⁴ Երևանում «գող տղաների» առաջին խմբերը, ըստ որոշ հետազոտությունների ի հայտ են եկել Կոնդ թաղամասում հետպատերազմական առաջին տարիներին, 1945 թվից հետո։ Տես՝ Ավագյան Է., Կոնդի վերջավայրը (Հուշեր հին Կոնդից), *Երևան. գիտական հոդվածների ժողովածու*, Երևան. 2006, էջ 39։

⁵⁵ Հովակիմյան Գ. 2020. Քրեական բարքերի, լեզվի և վարքագծի ազդեցությունը սոցիալական հարաբերություններում բնության դրսևորման վրա։ *Բնության մշակույթը Հայաստանում*, Երևան. ԵՀՀ, էջ 54-55

⁵⁶ Այս խնդրի շուրջ որոշ դիտարկումներ տես՝ Թադևոսյան Ա., Երևանի քաղաքային մշակույթը։ Մաս առաջին. Հասարակական մշակույթի փոխակերպումները խորհրդային և հետխորհրդային Երևանում, *ՎԷՄ Համահայկական հանդես*, 2010, թիվ 4, էջ 116-118։

⁵⁷ ԽՍՀՄ ու ռուսական միջավայրում այս խնդիրը բավականին հետազոտված է։ Տես՝ Ефимова Е.С., Современная тюрьма. Быт, традиции и фольклор., Москва, 2004. Багреева Е.М., Субкультура осужденных и их ресоциализация, Москва, 2001; Самойлов Л., Этнография лагеря. *Советская этнография*, 1990: 1, сс. 96-108; Кабо В.Р., Структура *лагеря* и архетипы сознания. *Советская этнография*. 1990: 1, сс. 108-113.

⁵⁸ Հովակիմյան Գ., նշվ. աշխ., էջ 47-64։

⁵⁹ Այս խնդրի վերաբերյալ հետաքրքիր գույճահեռներ տես՝ Захарова Е., Тбилисская улица как среда мужской социализации. *Laboratorium*, 2010: 1, сс. 182-204.

⁶⁰ White, William Foote. 1993. Street Corner Societies. The Social Structure of the Italian Slum. Chicago-London. University of Chicago Press. Pp. 3-14.

ավանդական համայնքային կյանքի գողը համայնքի կարգավիճակային հիերարխիայում ոչ թե ցածր տեղ էր զբաղեցնում, այլ ընդհանրապես տեղ չունեի⁶¹: Գողերը վտարվում էին համայնքներից և չէին ընդունվում որևէ այլ համայնքի կողմից ինչը նրանց դատապարտում էր ապրել բնակավայրերից դուրս, ինչը փաստացի դանդաղ մահվան դատավճիռ էր նշանակում:

Այս հողվածում նպատակ չունենալով ակնարկ կատարել «գողական» ենթամշակույթի ձևավորման պատմությանը, պարզապես նկատենք, որ այն Հայաստանում գլխավորապես Խորհրդային շրջանում ձևավորված և անկախ Հայաստան այդ շրջանից ժառանգված երևույթ է: *Այդ ենթամշակույթը, ներթափանցելով հիմնականում պատրիարխալ ավանդական նորմերով ապրող թաղային միջավայրեր, իրեն հարմարեցրեց «տղամարդկության» մասին պատկերացումները, միաձուլվեց տղամարդու պատվի կողքսի ավանդական նորմերին և փաստացիորեն դարձավ թաղային կյանքում կարգավիճակների ձևավորման նոր չափանիշ*: Փոխվեցին հարգված տղամարդու մասին ընդունված պատկերացումները: Եթե ավանդականորեն թաղային միջավայրում հարգանք վայելող մարդիկ փորձառու, իմաստուն և որոշումներ կայացնելու կարողություն ունեցող մարդիկ էին, ում վստահում էին արդար դատելու և հարևանների միջև առաջացող հարցերը լուծելու գործը, ովքեր նաև վերահսկում էին թաղամասում կարգուկանոնի պահպանումը, ապա «գողականի» ներթափանցումով նման մարդկանց ազդեցությունը նվազեց: Հատկապես, դեռահաս ու երիտասարդ տղաների միջավայրում այն էական դերակատարում ձեռք բերեց փողոցում և թաղում հարաբերությունների կարգավորման համար⁶²:

Անկախության շրջանում այս ենթամշակույթը զգալի փոփոխություններ է կրում: Որոշ առումով այն քաղաքականացվում է, ընդլայնում իր գործառույթների շրջանակը, հայտնվում հեռուստասերիալներում և դառնում հանրահռչակվող ենթամշակույթ: Նկատելի է դառնում նաև խորհրդային բանտային միջավայրից հայկականի օտարվելը: Դա հատկապես արտացոլվում է բանտային միջավայրում խորհրդային շրջանից ժառանգված բառապաշարի աստիճանական դուրս մղման մեջ: Վերջին տարիներին նկատվում է նաև փողոցի ու թաղի վրա ենթամշակույթի ազդեցության թուլացման միտում: Վերադառնալով ուշադրությունից և մինչև 2018 թվականը ստեղծված պատկերին⁶³, ապա հարկ է նկատել, որ դրա նկարագրությունը հատկապես բնութագրական է այսօրվա միջինից բարձր սերնդի հիշողություններին:

«Գողական» ենթամշակույթը Երևանին և միջին քաղաքներին բնորոշ երևույթ է: Առանձին բացառություններով, այն ավելի թույլ է արտահայտված փոքր քաղաքներում: Փոքր քաղաքներից շատերում փողոցի կարգ ու կանոնին հետևող հեղինակությունները մնում են հարևանության մեջ հարգանք վայելող, ազդեցիկ տղամարդիկ:

Կոնկրետ տարածաշրջանը, որ մինչև ուսանողական տարիքը ապրել էմ, ընդեղ մեր թաղում առհասարակ ու իրա հարակից թաղերում գողականը տենց հատուկ ֆենոմեն չի էղել, ընտանիքների մակարդակով ա էղել, որ ինչ-որ ընտանիքից մի հոգի, իրա խոսքը անցներ, նույն ձևի նույն իրա տարիքի մարդ կարար լիներ, ով որ նույն էր

⁶¹ Акопян М. 1988. Армянская селская община в конце 19–в начале 20 вв., Ереван, с. 106:

⁶² Այս երևույթը չափազանց դիպուկ ու հետաքրքիր կերպով ներկայացված է նաև գեղարվեստական գրականության մեջ: Տես՝ Համբարձումյան Հ., Գյոթնոցի Բիձեն, <https://inknagir.org/?p=8738>, (վերջին դիտումը՝ 03 օգոստոս, 2022):

⁶³ Հովակիմյան Գ., նշվ. աշխ., էջ 47-64:

նկատողությունը աներ, ուշադրություն չդարձնեին, բայց էդ մեկին լսեին: Իրան որպես գողական կերպար չենք ընկալել, որովհետև ինքը ավելի շատ տենց սիմեյնի կերպար ա էլել, որ իրա խոսքը անցնում էր, զուտ էդքանը: Չուտ հարգված էր, այսինքն՝ դեպքեր ա եղել, որ թաղում ինչ-որ մեկը ծխելուց ա էլէ, հերը իրա կոնկրետ էկել, բռնցրել ա, ասել ա՝ ինչ անես-չանես, էսինչ ձյաձային չասես, խոսքի /ծիծաղ/, էդինչ ձյաձան ասենք կարար մի տեղ հաշվապահ աշխատեր, բայց էդ ավանդական նիստուկացին ավելի շատ ա հետևում, հիերարխայում ինքը ավելի բարձր ա, էդ հարցեր լուծելու կամ թաղում կռիվ ա, կամ թեկուզ մարդ ու կին իրար հետ վիճում են, էթում են իրա մոտ: Մուրեց վիճակի մեջ ա ավելի ինքը: Եթե ինչ-որ բան լիներ, խորհրդատվության համար մտածում էին՝ լավ, եթե մենք չիմանանք, չկարանանք, վերջի իտոգ ինքը մի բան կասի, կամ եթե ինքը ինչ-որ մի բան ասում էր, ուրեմն վայո, փակ ա թեման, ուրեմն մե բան գիտի:

23 տարեկան տղա, ք.Քավառ

Երևանում և միջին քաղաքներում «գողական» ենթամշակույթի ազդեցության հիմնական տարածքը փողոցն է, որն ունի երկու հիմնական միավոր՝ «քուչեն» և թաղը: «Քուչեն» դա բառի բուն իմաստով առանձին վերցրած փողոցն է: Այն միավորում է նույն փողոցում ապրող տղաներին վաղ տարիքից, երբ տղա երեխան դուրս է գալիս փողոց խաղալու և առաջին քայլերն է անում սոցիալականացման մեջ: Փողոցային ժարգոնում, երբ խոսք է գնում «քուչի» մասին, ապա այն կիրառվում է որոշակի ենթատեքստով: Դա առաջին հերթին նշում է տղաների հավաքատեղին և երկրորդ, այդտեղ տղաները հաղորդակցվում են որոշակի նորմերի ու հասկացությունների համաձայն, որոնք ծագումնաբանորեն այստեղ են ներթափանցել քրեական, իսկ ավելի կոնկրետ «գողական» աշխարհից:

Երևի մի յոթ ութ տարեկան կեղեի: Մի օր ընկերոջս հետ հայտնվեցի մեր բիսեղկում: Բիսեղկեն լցված էր հայաթի երեխեքով ու մեր մեծերից մեկը բացատրում էր ճիշտը որն է, սխալը որն է, որ սիտուացիայում ոնց է պետք անել ու ասել, ոնց պետք չէ: Ու էդ ամեն ինչը էնքան հետաքրքիր ու գրավիչ էր, որովհետև համ շատ պարզ էր, համ էլ մի տեսակ, դու որ դրանք իմանայիր արդեն ավելի ապահով քեզ կզգայիր, որովհետև ամեն սիտուացիա իրա ճիշտ լուծումն ունի ու երբ դու դա գիտես, քեզ համ հարգում են, համ էլ դու ապահով ես: Եթե չլիներ հորքուրիս մեծ տղու ավտարիտետը, ով արվեստի ու երաժշտության մեջ էր խորացած ու երբ իմացավ, որ բիսեղկում եմ էղել, վրես ջղայնացավ ու էլ չթողեց գնամ, կարող է ես էլ եսիմ ինչ դառած էղնեի:

55 տարեկան տղամարդ, Գյումրի

Երբեմն, որպես քուչին փոխարինող միավոր է հանդես գալիս «հայաթը»՝ բակը: Մա հատկապես ավելի տարածված է բազմաբնակարան շենքերի թաղամասերում և միավորում է տվյալ շենքի կամ մի քանի մերձակա շենքերի տղաներին, ովքեր ծանոթացել և միասին մեծացել են ընդհանուր բակային տարածքում վաղ մանկությունից սկսած: «Քուչի» կամ «հայաթի» ավելի ընդլայնված տարբերակը թաղն է, որը հաճախ համընկնում է քաղաքի պատմական կամ արդի վարչական միավորների հետ և կարևոր տեղ ունի տղաների

սոցիալականացման ու ինքնության մեջ⁶⁴: Թաղը քաղաքային տարածքում նշում է տղաների պատկանելությունը, լոկալ ինքնությունը և ունի շատ հստակ սահմաններ, որի ներսում էլ թաղային նորմերով ապրող տղաները կազմակերպում են իրենց առօրյան: Տղաների կյանքում թաղային նորմերով ապրելու ամենից բուռն շրջանը դեռահասությունից վաղ երիտասարդության, իսկ ավելի որոշակի 12-ից 25 տարեկան ժամանակահատվածն է: Առանձին թաղամասերում այս տարիքը համարվել է հանցագործ կյանքով ապրելու կամ այդ շրջանակներին հարելու ամենից վտանգավոր շրջանը:

Ես, որ դպրոց պետք ա գնայի, հորքուրս ուսմասվար էր Մուրացանի դպրոցում ու մերոնք որպեսզի մեր թաղի դպրոց չգնամ հանկարծ, որովհետև մեր թաղը... 6-րդ դասարանից հետո դատվում էին սաղ /քմծիծաղ/, ինձ տարան ընտեղ, որ հորքուրս տիրություն անի, չնայած ընտեղ էլ եսիմ ինչ չէր:

42 տարեկան տղամարդ, Երևան,

Ըստ գրանցված հարցազրույցների տվյալների, հանցագործ աշխարհին հարելուն տղաներին մի քանի բան էր մղում: Դա նախ, կարգավիճակի հարցն էր ու հատկապես, առաջնորդության ձգտումը :

Ես հիշում եմ մեր բակում մանկական տարիքից հստակ կար էր հիերարխիկ բաշխումը: Այսինքն՝ ովքեր կարային լինել լիդերներ, ովքեր իրանց հետևից կարան տանեն ինչ-որ քանակություն... և ինչ-որ խնդիր որ լինում էր, էդ մարդիկ պետք ա լինեին առաջին տեղերում, այսպես ասած լավեր, լավ տղեք և այլն, և շատ դեպքում տղա էրեխեքը ուզում էին, որ իրանք էլ ինչ-որ դեր կամ դիրք զբաղեցնեին ըստեղ: Հետևաբար, անհրաժեշտություն էր լինում ինչ-որ բաներ իմանալ, տեղեկատվություն, ինչ-որ հարաբերություն, ինչ-որ բարքեր և այլն:

47 տարեկան տղամարդ, Երևան,

Կարևոր դեր ուներ նախ «գողականի» առասպալականացված վիճակը: Երևանում և այլ բնակավայրերում կային նման «լեգենդար» կերպարներ, որոնց կյանքի մանրամասներն իմանալը ու պատմելը արդեն իսկ դեռահաս ու երիտասարդ տղաների համար կարգավիճակ ապահովող երևույթներ էին⁶⁵: Երկրորդը, դա այդ միջավայրերի պատկանելության շնորհիվ տղաների աշխարհում ձեռք բերվող պաշտպանվածության ու իշխանության զգացումն էր: Եվ երրորդ կարևոր գործոնը հասկացությունների ու նորմերի որոշակիությունը, որոնց միջոցով տղան շատ հստակ կարող էր ձևավորել ճշտի ու սխալի մասին պատկերացումների մի համակարգ, որն իմանալու դեպքում մեծանում էր սխալ չանելու և վտանգավոր ու խոցելի իրավիճակներում չհայտնվելու հավանականությունը: Եվ վերջապես, դա կարևոր պայման էր «թաղի տղա» ընկալվելու, այսինքն թաղային միջավայրում տղամարդկային հարգանք ու վարկանիշ ունենալու համար: Հակառակ դեպքում, ցանկացած տղա վտանգում էր իրեն հայտնվելու թաղային կյանքի լուսանցքային վիճակներում: Իսկ դա կտրուկ մեծացնում էր տղաների աշխարհում ծաղրվելու, տարբեր առիթներով շահագործվելու և նույնիսկ ֆիզիկական բռնության ենթարկվելու վտանգը: «Քուշում կանգնող» կամ «հայաթ իջնող» տղաները, ինչը նշանակում էր թաղային նորմերը հարգող, պահպանող և դրանցով

⁶⁴ Лурье С., Давтян А. 2017. Ереванская цивилизация или как формируется традиция современности. Ереван. Сс. 25-28.

⁶⁵ Հովակիմյան Գ., նշվ. աշխ., էջ. 53:

առաջնորդվող միջավայրերին ինտեգրված լինել, կարող էին լուսանցքում հայտնվածներին ծաղրել նրա հագուկապի, դպրոցում լավ սովորելու, ջութակով կամ որևէ այլ երաժշտական գործիքով թաղամասով անցնելու, կիրթ և գրական, այսպես կոչված «կուլտուրական» բառեր օգտագործելու և շատ այլ պատճառներով:

Թաղային կյանքով ապրող տղաները շատ լավ գիտեին նաև քաղաքի այլ թաղամասերի «թաղի տղաներին», հատկապես դրանց մեջի հարգվածներին: Տարբեր թաղամասերի տղաների ծանոթությանն ուղեկցող հարցուփորձերում առաջին հարցերից մեկը «գողական» կամ «լավ» տղերքին ճանաչելուն ուղղված հարցերն էին: Դրանով պարզում էին, թե որքանով է դիմացինը ներգրավված թաղային կյանք և որքանով է առաջնորդվում այդ նորմերով ու հասկացություններով, ինչպես կարելի է նրա հետ հարաբերվել: Եթե դիմացինը չէր ճանաչում սեփական թաղամասի տղաներին, դա նշան էր, որ նա չի կարող «կարգին տղա» համարվել ու կարող էին նրա հանդեպ անհարգալից վերաբերվել: Իսկ հայտնի անունների ճանաչողության դեպքում կարող էին հաստատվել բարիդրացիական փոխհարաբերություններ:

Տղաների աշխարհում ստատուս ապահովող կարևոր չափանիշ էր «նստած-հեղած տղա» արտահայտությունը: Սա բանտում դատապարտվածությունը նշող ժարգոնային արտահայտություններից մեկն էր: Դիմացինի հարգանքը ձեռք բերելու չափանիշ կարող էր լինել նույնիսկ «նստած-հեղած» հարազատ, բարեկամ կամ ընկեր ունենալը և նմանների մասին հարգալից շեշտադրումով խոսելը: Դա ցույց էր տալիս, որ միջավայրը հարգանքով են վերաբերում հանցավոր աշխարհին, ինչը «տղամարդ» ընկալվելու կարևոր նշան էր:

Ստեղ նաև գիտես ինչ կա՝ հասարակության մեջ, հատկապես տղեքի շրջանում, մի տեսակ բան կա՝ էն որ «լավ տղա» լինելու կրիտերիա ա, որ դու նստած ընգեր ունես, այսինքն՝ էդ մի տեսակ մարդիկ հպարտանում էին, որ մենք նստած լավ ընգերներ ունենք, ու ինձ թվում ա նաև նրա մասին ա խոսում, որ ինչքան ա մեր հասարակությունը էդ մարդկանց կարևոր դեր տալիս, որովհետև մեզ մոտ կարող ա, չգիտես, ռազբիռատի բան լինի, որևէ մեկը չի մտածում՝ գնալ, հարցնել մշակութային գործչի՝ /քննիչ/ հարցին լուծում տալու համար, այլ կարող ա կովի ժամանակ մեկն ասի՝ բա ես նստած ընգեր ունեմ, հեսա կզանգի սրան, նրան, մի տեսակ էդ տղայական մշակույթում նստած մեկի հետ կսպ ունենալը քեզ համար բենեֆիթ ա լրացուցիչ, որ դու լավ շրջապատ ունես:

28 տարեկան տղամարդ, ք.Երևան

Հատկանշական է, որ «գողականը» իրականում շատ ավելի տարբերակված մոտեցում ունի հանցագործ աշխարհին, քան թաղայինը: Նախ, դատապարտվածություն ունեցողներից ոչ բոլորն են, որ «գողական» աշխարհի ներկայացուցիչ են, երկրորդ, բանտում ոչ բոլորն են հանցագործ աշխարհի մարդիկ և հետևաբար, «գողական» աշխարհի հիերարխիաներից դուրս են և երրորդ, ոչ բոլոր հանցագործներն են, որ «գողական» աշխարհի կողմից ընդունելի են համարվում: Սակայն, չնայած դրան թաղային միջավայրում «նստած-հեղած» տղաները ունեին որոշակի հարգանք, հիմնականում այն պատճառով, որ նրանք այն տարածքից են, որտեղ բոլորը ապրում են «գողականի» սահմանած նորմերով ու չգրված օրենքներով ու նաև նրանցից շատերը, բանտից հետո այս կամ այն կերպ այդ աշխարհին ինչ որ տեղ կապված մարդիկ են: Իր դերն ունեն նաև վախի գործոնը: Այդ տղաներից նաև վախենում էին, քանի որ տեսնում էին որոշակի վտանգ: Որոշները ժամանակ առ ժամանակ «գռեֆ» են անում,

որոշները բանտում գտնվողներից տարբեր օժանդակություններ ու ծառայություններ են մատուցում և ընդհանուր առմամբ կապված են «գողական» աշխարհի ցանցային կառույցին ինչ որ թելերով:

Արդարության դեֆիցիտը ԽՍՀՄ-ում և այտերնատիվ արդարադատությունը թաղային հարաբերություններում

Իրականացված հարցազրույցներում կարևոր դիտարկումներից մեկը, ինչը թույլ է տալիս հասկանալ թաղային կյանքում «գողական» վարք ու բարքի տարածման ու արմատավորման պատճառները, վերաբերում են **արդարության** խնդրին: Խորհրդային կարգերի հաստատումից հետո, հատկապես ստալինյան դժնդակ տարիներին իրականացված անարդարություններն ու բռնաճնշումները բնակչության մեջ ձևավորել էին պետության հանդեպ անվստահության համատարած զգացում: Այդ զգացումը խորացավ հետագա տարիներին նույնպես: 1960-1970-ական թվականների բրեժնևյան⁶⁶ «լճացման տարիներին» արմատավորվեց համատարած կաշառակերությունը: Ոստիկանության ու ուժային կառուցների կողմից քաղաքացիների հանդեպ իրականացվող անարդարացի վերաբերմունքի հետևանքում, ստեղծվել էր մի իրավիճակ, որ մարդիկ բացարձակապես չէին վստահում պետական մարմիններին:

Փաստը մնում ա փաստ, որ հենց սկզբից էլ, միշտ էլ պետությունը և իրա ներկայացուցիչները, հատկապես իրավապահ համակարգը, միշտ թշնամի ենք էղել, միշտ: Եվ հետո, մի բան էլ ասեմ՝ դաժը եթե արդար էլ էին բան անում, դատում, իրավապահ մեթոդոլոգիան աշխատելու շատ դաժան ա էղել միշտ՝ ծեծելով, ջարդելով, կոտրելով, հավելյալ բաներ իրոք սարքելով գլխներին, հա մարդը իրոք կոնկրետ հանցագործ ա, պետք ա նստի, բայց 100 բան վրեն ավել են դրել, գործեր են դրել վզներին:

49 տարեկան տղամարդ, ք. Երևան

ԽՍՀՄ-ում դատարանն ու ոստիկանությունը համարվում էր մի տեղ, որտեղ դիմողը ոչ թե արդարադատություն էր ստանում, այլ՝ ավելորդ բեռ, քանի որ արդարադատության փոխարեն ինքը կարող էր հայտնվել քաշքշուկների ու գլխացավանքների մեջ: Մարդիկ, ովքեր միամտություն էին ունենում դիմելու իրավապահ մարմիններին, ոչ միայն չէին ստանում իրենց խնդրի լուծումը, այլև նույնիսկ կարող էին իրենք հայտնվել կասկածյալի վիճակում: Ըստ գրանցված պատմությունների, նույնիսկ խոշոր շորթումներն ու գողությունները չէին բացահայտվում:

1973 թվականին հայրս «ժիգուլի» մեքենա էր ցանկանում գնել: Արհեստավոր մարդ էր: Մի տասնհինգ տարի աշխատել, փող էր հետ գցել, որ մեքենա առնի, բայց ծախողները հանցագործներ էին, հորս խաբեցին, փողը գողացան: Հորս խնդրել էին գումարը բերել թաշկինակի մեջ փաթաթված ձևով: Գործարքի ժամանակ, իբր թե թաշկինակով փողը տարել էին կողքի սենյակ կնքելու: Հետո թաշկինակով կապոցը վերադարձրել էին ասելով, թե մի փոքր պետք է սպասել, մինչև իրենք գործարքը կավարտեն, հետո կապոցն իրենից կվերցնեն ու մեքենան կհանձնեն: Միամիտ հայրս, չկասկածելով, որ թաշկինակի մեջ փողը փոխարինված է էղել թղթադրամի չափսով կտրտված թղթերով,

⁶⁶ Լեոնիդ Իլյիչ Բրեժնև՝ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար (1964-1982 թթ.) (ԽՍՀՄ-ում ղեկավար ամենաբարձր պաշտոնը և ըստ էության, ԽՍՀՄ փաստացի ղեկավարը):

մի ժամից ավել սպասելուց հետո, պարզում է որ խաբերայության գոհ է դարձել: Այն ժամանակվա համար հսկայական գումար էր դա: Չնայած, հայրս անմիջապես դիմում է ոստիկանություն, սակայն մի քանի ամիս տանել բերելուց հետո, գործը փակեցին: Մեծերը խոսում էին, թե իրականում անհնար է, որ գործը բացահայտվի, քանի որ նման խոշոր խաբերայությունները հենց ոստիկանության հետ համագործակցությամբ էլ իրականացվում էին:

56 տարեկան տղամարդ, ք. Երևան

Ըստ գրանցված հետազոտական հարցազրույցների տվյալների, հասարակության մեջ պետական մարմինների և հատկապես իրավապահ համակարգի հանդեպ նման ծայրահեղ անվստահությունը այն պատճառներից էր, ինչը նպաստեց թաղային կյանքում «գողական» հասկացությունների ու վարքուբարքի արմատավորմանը: Խնդիրն այն է, որ «գողականը» ուներ որոշակի կարգ, ինչը ձևավորում էր արդարության զգացում մարդկանց մոտ: Գողականը չէր հանդուրժում իր հասկացություններից ու կանոններից դուրս գործող հանցագործ արարքներ և կարող էր պաշտպանել մարդկանց նման ոտնձգություններից, եթե դիմեին իրենց: Ասենք օրինակ, չէր կարելի մարդ ծեծել, եթե դա չհիմնավորվեր գողական վորքուբարքը կարգավորող հասկացություններով: Դա համարվում էր խուժանություն: Նման դեպքերում, այդ գործողությունը իրականացնողներին կարող էին «սխալ հանել», իսկ դա արդեն ստատուսի ու հարգանքի կորուստ էր:

Մեր ժամանակ խուժանությունը բացարձակապես անհարգի էր, այսինքն՝ մեկին անմեղ տեղը կպնել չէիր կարա: Որովհետև հայտնի բան ա, միշտ դու պետք ա աչոտ ունենաս, միշտ պիտի կարանաս արածիդ տակից դուրս գաս: Այսինքն՝ ինչ-որ կերպ հիմնավորես, թե ինչի ես էս մարդուն նեղացնում: Էդ առումով, դրա համար ա ինքը (իսկական գողականը) մինչև հիմա որոշների մոտ նոստալգիա առաջացնում, որովհետև կար համակարգ ու կար արդարության զգացում: Մենց ասենք, էդ համակարգը հիմնված էր արդարության իր հասկացողության վրա: Էդ շատ կարևոր ա, եթե պետությունը չի կարողանում դա ապահովի, ուրիշ ինստիտուտ ա վերցնում իրա վրա փաստացի չէ՞, և դրա համար ա լինում, որ դա սկսում ա աշխատել:

38 տարեկան տղամարդ, ք. Երևան

Արդարության պահպանման նման մեխանիզմը նպաստեց, որ գողական հասկացություններն ու դրանց կողմից միակ ճիշտը համարվող վարքագծային պրակտիկաները տարածվեին թաղային միջավայրերում: Եթե պետությունը չուներ արդարություն և այն հաստատող ու պահպանող ընդունելի պրակտիկաներ, շատերը գերադասում էին ինչ ինչ հարցերի դեպքում դիմել թաղամասի «հարգված» հեղինակություններից մեկին, ով տիրապետում էր «ճիշտն» ու «սխալը» միմյանցից հստակ սահմանազատող հասկացություններին ու դրանց համաձայն այս կամ այն իրավիճակին արդարացիորեն լուծում տալու գիտելիքներին ու կարողությանը:

Կարելի է ասել, որ ըստ էության, խորհրդային միջավայրում ձևավորված գողական համակարգը պետականին հակադրվող իշխանության յուրօրինակ բևեռ էր: Այդ երկու բևեռների միջև էր իրականացվում հասարակության տարբեր խավերի առօրյան և այդ երկու բևեռները պայքարում էին հասարակությանը իր ազդեցության ոլորտում պահելու համար: Թաղային, բակային մակարդակում «գողականը» պետության հանդեպ ուներ որոշակի

առավելություններ, քանի որ թաղի տղամարդ բնակչության մի զգալի հատված ընկնում են նրանց ազդեցության տակ, օգտագործելով նրանց լեզուն և հետևելով նրանց վարքագծային նորմերին ու պրակտիկաներին:

Վարքագիծ ձևավորող հիմնական կամ առանցքային հասկացությունները և դրանց դրսևորումները «գողական» և «թաղային» ժարգոններում

«Գողական» ժարգոնում առանձնակի տեղ են գրավում բառերի ու հասկացությունների այն խմբերը, որոնք.

- ձևակերպում են այդ աշխարհի կարգավիճակները և հիերարխիան,
- կարգավորում են տարբեր աստիճանակարգերում գտնվողների փոխհարաբերությունները, սահմանում դրանց մեջ թույլատրելին ու անթույլատրելին, շատ խիստ ու հստակ տարանջատելով «ճիշտն» ու «սխալը»,
- Մահմանազատում բանտային տարածքում «գողական աշխարհի» և մնացած բանտարկյալների կարգավիճակներն ու փոխհարաբերությունների ձևերը,
- Մահմանում ըստ բանտարկյալների կարգավիճակների նրանց տեղը բանտային տարածքում, սկսած բանտախցի տարածքից, վերջացրած բանտարկյալների համար ընդհանուր տարածքները,
- Մահմանում բանտարկյալների և բանտային վարչակազմի ու ծառայողների հետ բանտարկյալների փոխհարաբերման սկզբունքները, թույլատրելին ու արգելվածը,
- Մահմանում խրախուսելի և արգելված արարքները՝ հատուկ ուշադրություն դարձնելով հատկապես արգելվածներին,
- Մահմանում պատիժների ձևերը՝ սահմանված հասկացությունները ու վարվելակարգային նորմերն ու պրակտիկաները խախտելու դեպքում,
- Մահմանում «գողական աշխարհի» ներկայացուցիչների իրավունքներն ու պարտականությունները,
- Մահմանում «գողական աշխարհի» կարգ ու կանոնն ապահովող հիմնական ինստիտուտները, ներառյալ ֆինանսատնտեսականը, ձևակերպում մեխանիզմները, որոնք ապահովում են այդ ինստիտուտների գործունեությունը:

Թե «գողական» և թե թաղային ժարգոնում որպես ամենից դատապարտելի արարքը համարվում է մատնությունը, որն ուներ տարբեր անվանումներ՝ «սուչիտ անել», «գործ տալը», «բոզկընալ», «ծախել», «վառել», «պալիտ ընկնել» և այլն: Իհարկե, կային զգալի տարբերություններ այս արտահայտությունների բանտային ու թաղային նշանակությունների, ու մատնությանը հետևող պատժի ձևերի միջև: Սակայն, ակնհայտ է, որ այդ բառերը թաղային միջավայր են «ներմուծվել» բանտայինից: Բանտային տարածքում մատնության արգելքը սահմանող գործողությունները իրականացնելը շատ ավելի խիստ էր արգելվում և վերաբերում էր գլխավորապես բանտային վարչակազմին բանտարկյալների գործողությունների մասին տեղեկատվություն հաղորդելուն: Արգելքը խախտողները ստորացվում էին և զրկվում ցանկացած կարգավիճակից և պիտակավորվում որպես «փչացած»: «Փչացածի» տարբեր տեսակներ կային, սակայն դրանք այն աստիճան էին ստորացվում, որ չէին կարող նույնիսկ մնացյալ բանտարկյալների հետ ընդհանուր տարածքում ապրել: Հատկանշական է, որ արտահայտություններից «սուչիտ անելը» բանտային միջավայրից թաղային անցնելու ճանապարհին ամբողջապես փոխում է իր

նշանակությունը, սակայն պահպանում է համատեքստային գործածությունը: Բանտում այս արտահայտությունը նշանակում է մատնել, «գործ տալ» բանտի վարչական անձնակազմին, իսկ թաղային միջավայրում «փչացնել»՝ այսինքն «սուկա/սուչկա» սարքել, որն ըստ էության բանտային կյանքում հանդիսանում էր «սուչիտ անելու» պատիժը: Եվ էթե բանտային լեզվում «սուչիտ անել» բառի ծագումնաբանությունը կապվում էր ռուսերեն քրեական ժարգոնի «всучить»՝ մատնություն տալ բառի, ապա թաղայինում՝ քրեական ժարգոնի «սուկա» և դրա ավելի իջեցված «սուչկա»՝ փչացած բառի հետ:

Տես դրսում սուկան ավելի դամսկի իմաստ ուներ: Իսկ գոնում սուկաները կրասնաչներից բետարներն են: Ըդոնք էն մարդիկ են էդել, որոնք գողերին փորձել են կոտրել: Սուչիտը ուրիշ է, սուկայի հետ կապ չունի, սուչկայի հետ էլ կապ չունի:

51 տարեկան տղամարդ, ք.Գյումրի

Մատնության արգելք նշող բառերն ու արտահայտությունները թաղային միջավայրում վերաբերում էին դատախարակական մարմինների հետ «թաղի տղերքի» և նույնիսկ թաղամասի ողջ բնակիչների համագործակցությանը: Ինչ վերաբերում է արգելքը խախտելու դեպքում պատժին ու մարզինալացմանը, ապա այստեղ դա ավելի խիստ էր դրսևորվում դեռահաս ու երիտասարդ տարիքի տղաների միջավայրում և ավելի թույլ թաղամասի բնակչության տարբեր սեռատարիքային ու սոցիալմասնագիտական խմբերում: Այս կանոնները շատ ավելի տարածված էին աշխատավորական խավերի մեջ, ովքեր ավելի քիչ էին պաշտպանված դատախարակական մարմինների ռոնձգություններից ու չէին վստահում դրանց արդարադատությանը: «Գողական» լեզուն ու վարքագծային կանոնները ավելի թույլ էին գործում մտավորական և ծառայողական խավի ընտանիքների միջին և ավագ սերնդի ներկայացուցիչների մոտ: Չնայած, նույնիսկ այդ խավերում շատ զգուշանում էին ռուսիկանություն դիմել և հարցը լուծում էին ավելի շատ միմյանց հետ բանակցելու և ընդհանուր եզրեր գտնելու ճանապարհով: Միայն խիստ ծայրահեղ իրավիճակներում էին մարդիկ խախտում այս տաբուն: Պատժի ձևերը, նույնպես, թաղային միջավայրում բանտայինի հանդեպ մեղմ էին: Դրանք որոշակի կոշտություն ունեին երիտասարդների ու դեռահասների միջավայրում: «Ծախողներին» հաճախ մեկուսացնում էին, ենթարկում ծեծի ու ծաղրի: Իսկ տարիքով ավելի մեծերին կարող էին պարզապես չհարգել ու չվստահել, խուսափել հարևանություն անելուց կամ նրանց ներկայությամբ կարևոր հարցերի քննարկումից ու ընդհանրապես, խիստ սահմանափակել առօրյա շփումներն այդ մարդու ընտանիքի հետ:

Կային նաև խրախուսելի արարքներ: Դրանց թվին էր պատկանում գողություն անելը, հատկապես, պետական հաստատություններից խանութներից, պահեստներից ու այլ նմանատիպ տեղերից: Կարելի էր նաև գողանալ մասնավոր առևտրով զբաղվողներից, սակայն չէր խրախուսվում թաղի բնակիչների տներից, հատկապես աշխատավորական դասի ընտանիքներից գողությունը:

Թաղի մակարդակով «լավ ջահել»-ի կոչմանն արժանանում են դեռահաս տարիքում խմբով գողություն անող, գողոնը ընդհանուր օգտագործման ներկայացնողները: Չէր խրախուսվում անձնական նպատակներով գողություն անելը, գողոնը չկիսելը: Պետք էր անպայման գողացածը բաժանել թաղի ընկերներին: Առավել մեծ գովասանքի էին արժանանում արդեն այն երիտասարդները, ովքեր «նեղության մեջ գնտվողներին», այսինքն բանտում նստած ընկերներին էլ էին բաժին հանում:

Կարևոր բառերի շարքին էին պատկանում նաև առանձնահատուկ գործողություններ, արարքներ, փոխհարաբերություններ նշող այնպիսի բառեր, ինչպես «աբրաշատ», «նակագատ», «ատչոտ», «իտոգ», «ռազբիրատ», «դակագատ», «սպոռս», «ստրելկա խփել», «սխոդկա», «քսիֆ», «ցինկ», «գրեֆ», «փչացնել», «իջացնել» և շատ այլ նմանատիպ արտահայտություններ:

«Գողական» ժարգոնում առանցքային դերակատարում ունեցող բառերի ու հասկացությունների խմբին են պատկանում նաև կարգավիճակ նշողները: Համաձայն դրանց, բանտային միջավայրում լայն առումով առանձնացվում է երեք հիմնական կարգավիճակային խումբ: Առաջին և բարձր կարգավիճակ ունեցողները դրանք «գողական» հիերարխիայի տարբեր աստիճանակազում գտնվողներն են: Այդ հիերարխիայում առավել բարձր դիրք է տրվում «գող»-ին, որը ունի նաև *զակոննիկ, զակոննի գող, քերոք, մեծ ախպեր* հոմանիշները: Այդ հիերարխիայի մեջ են մտնում նաև *սմատրյաշչին* կամ *նայոդը, պալաժենեցը* կամ *զոն նայոդը, կանցավիկը*⁶⁷:

Մրանք բուն «գողական» աշխարհի հիերարխիան նշող բառերը են: «Գողական» հիերարխիան նշող կարգավիճակների հաջորդում է բանտային միջավայրում միջին դիրք գրավող «հարիֆների» խումբը: Մա համապատասխանում է ռուսական քրեական ժարգոնում նշվող «մուժիկների» կարգավիճակին⁶⁸: «Հարիֆ» բառը բանտային միջավայրում չունեք ստորացուցիչ նշանակություն: Դրանով պարզապես նշում էին սովորական քրեականներին, ովքեր չէին մտնում «գողական» աշխարհի մեջ, սակայն ընդունում էին այդ աշխարհի «պանյատներն» ու պրակտիկաները: Երրորդ խումբ կարգավիճակային բառերով նշվում էին բանտային միջավայրում ստորակարգ աստիճանի իջեցված բանտարկյալներին: Դրանք «չուշկեքն» էին, «բոգերը», «գյոթերը», «պիտուխները» և այլ ստորացվածները: Մրանք բանտային միջավայրում մեկուսացված էին հատուկ տարածքում, որը կոչվում էր «գյոթնոց» կամ «կուրյատնիկ»:

Բառերի նշված խմբերը նույնպես բանտային տարածքից թաղային տեղափոխվելուց, որոշ իմաստափոխությունների էին ենթարկվում: Կան բառեր էլ, որոնք ունենալով մի քանի զուգահեռ ու իրար մոտ իմաստներ, բանտային տարածքում ավելի հաճախ մի իմաստով են գործածվում, իսկ թաղայինում ու առօրյաում՝ մեկ այլ: Այսպես օրինակ, եթե «բոգ» բառով բանտային լեզվում նշում էին հիմնականում մատնություն տված բանտարկյալին, ապա թաղայինում՝ սեռական շվայտ վարքագիծ ցուցաբերող կնոջը կամ պոռնիկին: Նույնը վերաբերում է «սուկա/սուչկա» բառին: Բանտային միջավայրում այդ բառով նշում էին վարչակազմի հետ համագործակցող բանտարկյալներին, իսկ թաղային միջավայրում պարզապես ստոր վարքագիծ դրսևորող որևէ մեկին: Կամ ասենք «հարիֆ» բառը, եթե բանտում վիրավորական չէր, այլ պարզապես նշում էր բանտում միջին կարգավիճակ ունեցող բանտարկյալին, ապա փողոցային խոսակցության մեջ «հարիֆը» դա վիրավորական ու ստորացուցիչ դիմելաձև էր համարվում:

Կային նաև բառեր ու արտահայտություններ, որոնք բնորոշ էին ոչ թե բանտային, այլ թաղային կյանքին, սակայն առնչվում էին «գողականին»: Այդպես էր օրինակ «կյանքի տղա»,

⁶⁷ Տես այս բառերի նշանակությունը «Քրեական («Գողական») խոսվածքի բառարանի համապատասխան բառահոդվածները:

⁶⁸ Խորհրդային բանտային միջավայրում այս հիերարխիայի նկարագրությունը տես՝ Самойлов Л., Этнография лагеря, сс. 97-99.

«հարգված տղա», «Թասիբով տղա» և նմանատիպ այլ արտահայտություններ, որոնք հիմնականում թաղային միջավայրում երիտասարդ տղաների համար կարգավիճակ նշող արտահայտություններ էին: Թաղային կյանքում «գողականի» պահպանման ու վերարտադրության գլխավոր հասկացություններից մեկը *թաղի տղայի* պատվի կոդեքսն էր: Ասենք օրինակ, «Թասիբով տղեն» նա էր, ով իր հասցեին ուղղված ցանկացած վիրավորանքի հակադարձում էր թաղային նորմերով սահմանված ձևերով: «Թասիբով տղեն» կարող էր չունենալ գողական կյանքով ապրելու նպատակ, սակայն հետևում իր արժանապատվության պաշտպանությանը թաղային միջավայրին բնորոշ պատվարժանության նորմերին համաձայն: Նա չէր վախենում կռվից, ծեծել ծեծվելուց, տիրապետում էր ռազմիկատի կանոններին ու հմտություններին, մասնակցում էր ընկերների ու թաղի տղաների կողմից այլ թաղերի կամ այլ խմբավորումների դեմ «ռազմակներին», կռիվներին, ցանկացած իրավիճակում պատրաստ էր կանգնել ընկերների ու «լավ տղաների» «Թասիբին»: Կամ օրինակ, «կյանքի տղան» նա էր, ով հասկանում էր «ճիշտ կյանքից» (այդպես էր անվանվում գողերի ու գողական հեղինակությունների կյանքը), այսինքն «գողական» հասկացություններից, պրակտիկաներից ու հարգանքով էր վերաբերում դրանց ու թաղային կյանքում չէր խախտում սահմանված կանոնները:

Եթե փորձենք ամփոփել այս պարագրաֆը, ապա կարելի է ասել, որ «քուչեն», «հայաթը», «թաղը», դրանք բանտային տարածքից դուրս այն միջավայրերն են, որտեղ թաղամասի տղամարդ բնակչությունը, հատկապես դեռահաս ու երիտասարդ տարիքի, հետևում են բանտային տարածքից փոխառված հասկացություններին ու վարվելակարգի պրակտիկաներին: Գլխավոր տարբերությունն այստեղ այն է, որ թաղային միջավայրում գործում են բանտայինից փոխառված, սակայն որոշակի փոխակերպումների, հիմնականում, մեղմացումների ենթարկված տարբերակները:

Ինչպես լեզվաբան, գրող Գևորգ Տեր-Գաբրիելյանն է նկատում, այստեղ տեղի է ունեցել մի բան, որը լեզվաբանության մեջ բացատրվում է *պարողիա* եզրույթի միջոցով⁶⁹: Խոսքը չի վերաբերում գրականության համանուն ժանրին, որի դեպքում *պարողիան* դիտարկվում է որպես ծաղրական նմանակում: Համաձայն *պարողիա* եզրույթի լեզվաբանական մեկնաբանության, այն ունենում է ցածրացնող, հավասարագոր և բարձր ձևեր⁷⁰: Ելնելով այս մոտեցումից, կարելի է ասել, որ «գողականից» թաղային ժարգոնի անցումը ունի պարողիայի նշված երեք ձևերին պատկանող խառը դրսևորումներ: Թաղային միջավայրում «գողական»-ը զգալիորեն տարբերվում էր բանտայինից կամ բուն «գողականից»: Թաղայինում կարող էր «գողական» համարվել պարզ նմանօրինակման միջոցով հասկացությունները վերբալ մակարդակում հմուտ կիրառող մեկը, ով սակայն պարտադիր չէր, որ բանտում «նստած-հեղած» լիներ: Կամ կարող էին բանտային անցյալ ունեցող որևէ մեկին անվանել «գողական», ով սակայն իրականում չլիներ «գողական» աշխարհի ներկայացուցիչ: Այսինքն, բանտում քրեական կենսագրությունը բավարար պայման չէր «գողական» աշխարհի մարդու կարգավիճակ ունենալու համար, իսկ թաղում դա կարող էր մյուսների կողմից «գողական»

⁶⁹ Տես այս մասին՝ Բռնության մշակույթը. գողականություն և հարակից երևույթներ. Ետխորհրդային փուլի ավարտը Հայաստանում: Հարցազրույց Գևորգ Տեր-Գաբրիելյանի հետ, հարցազրույցավար Գայանե Հովակիմյան, մաս երրորդ, <https://hetq.am/hy/article/111823>, (վերջին դիտումը՝ 25 օգոստոս, 2022):

⁷⁰ Այս միտքը Գևորգ Տեր Գաբրիելյանը ինձ է փոխանցել մեր մասնավոր զրույցներից մեկի ժամանակ և այստեղ ես գործածում եմ իր բանավոր համաձայնությամբ:

համարվելու հիմք համարվել: Հատկանշական է, որ նման դեպքերում ավելի շատ նկատվում է «հավասարագոր» պարողիայի դրսևորումներ: Սակայն, շատ հաճախ հանդիպում են նաև այսպես ասած ցածրացնող պարողիայի դրսևորումներ: Այսպես օրինակ, եթե որևէ մեկը ընկերների միջավայրում փորձում էր «գողական» ժարգոնով խոսել, սակայն քրեական աշխարհի հետ առնչություն չունենալով, ընկերներով կարող էին կատակել կամ նույնիսկ ծաղրել, ասելով թե «գողական ես գնում ամ» կամ «գողական ես փախնում ամ»:

Ես օր փոքր էի, էրեխեքով իրար մեջ կհարցնեինք գողական կերթա՞մ: Ու, եթե կըսեր՝ հա, կհարցնեինք՝ դե ըսա գողն ինչ կուտե: էրեխայական բան էր: Բայց ըսենք օր կըսեին՝ դու աբիժնիկ չես, դու պիտի հասկընայիր ըդիզ ինչ է: Բայց մեր դըսի ըսած աբիժնիզը նեսի աբիժնիկի հետ համեմատած տարբերվիզը: Դըսի աբիժնիզը ընկերական խոսքի մեջ ըսենք խոսված աբիժնիզն է: Իսկ նեսի աբիժնիզը, էն, ում ըսենք ապուսկատ են արե: Նեսում էդ արտահայտություն կովի բուն է:

60 տարեկան տղամարդ, ք. Գյումրի

Թաղային կյանքում «գողական» լեզվի տարածվածության մեկ այլ կարևոր պատճառ Գ. Տեր Գաբրիելյանը համարում է այդ լեզվի պատկերավորությունը: Ինչպես ժարգոնային շատ լեզուներ, «գողականը» նույնպես ուներ բառեր ու արտահայտություններ, որոնք աչքի են ընկնում երևույթներն ու իրողությունների նկարագրման պատկերավորությամբ: Այս առումով, հատկապես դեռահասների ու երիտասարդների մեջ, շնորհիվ այդ հատկության «գողականը» ձեռք էր բերում հատուկ ընդունելություն ու տարածում: Այն ուներ փողոցային կյանքին առնչվող իրավիճակներն ու երևույթները ամենից պատկերավոր ձևով նկարագրելու հատկանիշ:

«Գողականը» թաղում. հասկացություններ ու պրակտիկաներ

Թաղի տղերքը չնայած «գողական կյանքով» չեն ապրում, բայց իրենք կիսում են «պանյատները», դրանով իրենք թաղային միջավայրում ձևավորում է հարաբերությունների մի յուրահատուկ ձև, որը հենված է գողական լեզվից ներթափանցած հասկացությունների ու պրակտիկաների կիրառման վրա: «Գողերը» և այդ աշխարհի հեղինակությունները, հարցեր էին լուծում թաղի սովորական բնակիչների համար: Մինչև 2000-ականները, երբ «գողական» աշխարհում սկսվեց նոր էլիտայի ձևավորումը, ովքեր փաստացորեն դժվար հասանելի են թաղի սովորական անդամների համար և ավելի շատ կապված են քաղաքական ու օլիգարխիկ վերնախավերի հետ, «գողական» աշխարհի հեղինակությունները չափազանց մատչելի էին մարդկանց համար և նրանց կարող էր դիմել ցանկացած մեկը, եթե կանգնել էր որևէ խնդրի առջև:

Հիմա որտե՞ղ պտի տենան, ջիպերով ֆոֆոում են ախտանիկներով, բան, էն վախտ տենց բան չկար: Դու կարայիր ամենագողին նենց տեղեր հանդիպեիր, որ... նու մոտավորապես մինչև 2000 թիվը, դրանից հետո ռեսկի սկսեց բնեռացումը, մի քիչ ուրիշ տեսակի բան, էլիտարիզացումը, էտի շատ լուրջ թեմա ա, էտի լրիվ ուրիշ բան ա: էն վախտ լուրջը հասանելի էր քեզ, լուրջի մոտ լուրջ հարցով կարայիր էթայիր, ասեիր՝ սենց հարց ունեն, իմ հետ անարդար են վարվել, կամ էս կողմ, էն կողմ:

42 տարեկան տղամարդ, ք. Երևան

«Գողական» հեղինակությունները շատ հարցեր լուծելու կարողություն ունենին: Նրանց դիմում էին ամենատարբեր առիթներով: Հաճախ դա կարող էր վերաբերել գողացածը հետ բերելուն, պարտքը վերադարձնելուն, «սխալն ու ճիշտը» որոշելուն և այլ վիճելի իրավիճակներում լուծումներ գտնելուն: Լինում էր նույնիսկ, որ պետական մարմինների կողմից չլուծվող ու բարդացվող հարցերի համար էլ էին դիմում և լուծում ստանում:

Էտ թաղային հեղինակությունը, օրինակ, ինչ-որ մի հատ տեղ ա, որտեղ իրանք հավաքվում են, խաղաթուղթ են խաղում կամ այլ բան ու մարդիկ գիտեն, որ իրանք ըտեղ հավաքվում են: Եթե ինչ-որ հարցով դիմեն, կարող ա մի լուծում ստանան: Այ հենց որ կա այդ միտքը, ինչ-որ հարցով իրանց դիմելու, արդեն ինքը դառնում ա էտ հեղինակությունը: Եթե դու դիմում ես, նշանակում ա՝ դու ընդունում ես: Դիմում ես, գիտես, որ շատ արագ կլուծվի էտ հարցը, շատ կարճ: Հարցի լուծումը չես կարում տարբեր տեղերով ստանալ ու դիմում ես, ինքը միանգամից լուծվում ա, ու ինքը դառնում ա տենց:

38 տարեկան տղամարդ, ք. Երևան

Եթե պետությունը վանում ա, այսինքն՝ դե մեղավոր ես, ուրեմն պետք ա տուժես, գողականը ասում ա՝ ի՞նչ անենք, որ մեղավոր ես, մենք հեսա կճշտենք, ու սաղ բանավոր ա անում, այլտերնատիվ ա, բանավոր, արագ, լուծում ա էտ հարցը: Էս դեպքում էլի պետությունը իրա անդամին հեռացրեց իրանից՝ թե նոտար չես արել, չես ստորագրել, չես համագործակցել իմ հետ, և ավելի մոտիկացրեց գողականին, որը կլուծի էտ հարցը:

47 տարեկան տղամարդ, ք. Երևան,

Հարցեր լուծելու համար դիմողից պահանջվում էր որոշակի ծառայություն: Հիմնականում այդ ծառայությունը վերաբերում էր «գաղութ», այսինքն բանտ, «նեղության մեջ գտնվող ախպերներին», այսինքն բանտարկված գողական տղաներին «գրեֆ», այսինքն օգնություն ուղարկելուն: «Գրեֆը» կարող էր լինել ուղղակի թաղամասից բանտում գտնվող որևէ մեկին ինչ որ անհրաժեշտ բան ուղարկելը կամ «օբշչյակին»՝ «գողական» գանձարանին գումար, որը օգտագործվում էր բանտարկված գողականների կարիքների համար: Հաճախ, «հեղինակության» օգնությանը դիմածին հարցնում էին, թե երբևիցե «գրեֆ» արած կա՞ կյանքում: Սովորաբար, նրանք էին ավելի հեշտ ստանում իրենց հարցի լուծումը, ովքեր այս հարցին ունենին դրական պատասխան:

Բհարկե, ընտեղ հարցեր էին առաջանում բան, կարան ասեն՝ արա մի անգամ կյանքում լավով ապրած կա՞ս, լավով, գրեֆ գոնե արած կա՞ս: Մեկին գոնե մի բան ուղարկե՞լ ես դու, թե սաղ կյանք մենակ քո մասին ես մտածել, հիմա նեղն ես ընկել, էկել ես բան-ման: Նենց չի, դրա համար չեն օգնի կամ բան չեն անի: Բայց դե ասում են՝ օբեյ, բան ես արել, քեզ ոչ մեկ չի պարտադրի, Բայց դե միշտ հիշի էլի, որ կարող ա գործդ մեզ հասնի, սենց, դու կարայիր, քեզնից բան չէր էթում՝ ձեռի հետ մի քանի բլոկ սիգարետ դրգես մի անգամ: Էտի ոնց էլ լինի թաղում մարդ-մուրդ կլինի էլի նստած-մստած, կարաս էտի տաս իրան, ասես քո ձեռով էթա օբշչյակին:

41 տարեկան տղամարդ, ք. Երևան

Սա շատ էական գործոն է, որը թույլ է տալիս նաև հասկանալ, թե ինչու էին թաղամասի երիտասարդ տղաները ինտեգրված «գողական» աշխարհին և եթե նույնիսկ իրենք չէին ընտրել «գողական» կյանքով ապրելու ուղին, նրանք պարտադիր կիսում էին «գողական» հասկացություններն ու պրակտիկաները: Նաև հատկանշական է, որ թաղում բավականին տարածված էր և թաղի «մեծերի» կողմից բավականին խրախուսվում էր դեռահասների կողմից իրականացվող գողությունը և դրան մասնակցելը: Այն գողությունը, որն իրականացվում էր «աբշյակին գրեֆ»-ի նպատակով, որակվում էր որպես «լավով ապրել»: Որոշ դեպքերում «գրեֆ» անելը նույնպես կարող էին բնութագրել «լավով ապրել» արտահայտությամբ: Այսինքն, փաստացիորեն, «գողական» լեզվի ու հասկացությունների տարածումը թաղային միջավայրում առաջացնում էր նաև դրան բնորոշ վարքագծային պրակտիկաների, ընդհուպ մինչև գողության կամ դրան նպաստող գործողությունների իրականացման: Թաղամասերում տղաները եթե նույնիսկ չէին մասնակցում գողություններին, ապա նվազագույնը չպետք է «գործ տային»:

Մենք ամեն օր մի բան պտի գողնայինք, ամեն օրը, պոռոտը բանի համար գուտ, որ մենք ֆոռմի մեջ լինենք, կոպիտ ասած/քմծիծաղ/... Տարիքով տղեքն էին, էն ժամանակ իրանք մի տենց 25 տարեկան էլի, որ ասենք մեր մեծերն էին, կային ավելի մեծերը... ասում էին՝ ինչ սերունդ ա մեծանում, կարգին արա, ջոգու՛ մ ես:

42 տարեկան տղամարդ, ք. Երևան,

Ես հիմա եմ տենց վերհիշում, նույնիսկ ընտեղ մի պահ կար, ես հիմա լավ չեմ հիշի, բայց մի պահ կար էտ բակային խոսակցություն էր՝ այ վաղը մյուս օր, որ գնաք գողություն անելու, իմ մոտ հարց էր առաջանում՝ ինչի՞ պիտի գնանք գողություն անելու: Ասենք էտ ճիշտ ու սխալ հասկացությունը, լինել բակի անդամների մեջ, չես կարա դու մեր հետ չլինես, մեր հետ ընգերություն, մեր հետ պտի էթաս կովի, եթե մենք գնում ենք մի 10 հոգու՝ ուրիշ բակի տղաների հետ հարց լուծելու, դու պետք ա մեր հետ լինես, և այլն:

47 տարեկան տղամարդ, ք. Երևան,

«Գողական» հասկացություններում սկզբունքային հարց է պետական հաստատությունները, հատկապես դատաիրավական ու օրինապահ ոլորտը ներկայացնողներին, խստորեն մերժելը:

«Գողականի» թաղային միջավայր ներթափանցմանը նպաստող առանցքային գործոնը, ինչպես արդեն նշվեց, եղել է այն, որ նրանք ստեղծելով պետական արդարադատությանը ալտերնատիվ, սեփական արդարադատության համակարգը, որոշակի պայմաններ էին ներկայացնում դրանից օգտվելու համար: Կարևոր չափանիշներից մեկն այդ աշխարհի մարդկանց հեղինակությունը ընդունելն է, թաղում նրանց խոսվածքը կիրառելը, հասկացություններին ու պրակտիկաներին հետևելը, բանտում «նեղության մեջ գտնվողներին» օգնություն ուղարկել և ամենակարևորը՝ նրանց հաստատած կանոնները

չխախտելը: Այդ կանոններում առաջնային տեղ էր զբաղեցնում պետական դատախիրավական հաստատություններին չդիմելը կամ «գործ չտալը»⁷¹:

Սակայն, որոշակի տարբերություն կար գուտ «գողական» ու դրա թաղային նմանօրինակումների մեջ: «Գողականով ապրող» տղաների միջավայրում այդ աշխարհի հասկացությունները շատ խիստ ու հստակ էին գործածվում: Խիստ ու հստակ էր նաև այդ հասկացություններից բխող ճիշտ ու սխալ գործողությունների պահպանումը: Ընդունված նորմերով չէր կարելի թույլ տալ որևէ վիրավորական արտահայտություն կամ որևէ մեկի հասցեին ինչ որ մեղադրանք ներկայացնել առանց դրա հիմնավորումներն ունենալու: Եթե հանկարծ որևէ մեկը սխալմամբ նման արարք թույլ տար, կարող էր շատ ծանր պատասխան ստանալ, ընդհուպ մինչև դանակահարությունն ու բառի բուն իմաստով կյանքով դրա գինը վճարելը: Նույն բանն այդպես չէր թաղային միջավայրում այդ հասկացություններն ու բառապաշարը գործադրող, բայց «գողականով չապրող» տղաների միջավայրում: Ասենք օրինակ, «գողական» աշխարհում որևէ մեկը մյուսի հասցեին չէր կարող կատակով «գոթ», «սուկա» կամ նմանատիպ այլ արտահայտություն հնչեցնել, քանի որ դա ենթադրում էր շատ հիմնավոր փաստարկումներ, որոնք չլինելու դեպքում անվանարկողը կարող էր ծայրահեղ խիստ պատժի ենթարկվել, կախված այն բանից ինչպիսի անվանարկմանը կամ հայհոյանքին ինչ տեսակի պատիժ էր նախատեսվում ըստ «գողական» աշխարհում սահմանված պատվի կոդեքսի ու հասկացությունների: Դրա համար ցանկացած բան, կլիներ դա մեղադրանք, հայհոյանք կամ մեկի հասցեին պիտակավորում, շատ ավելի հիմնավորված, զգույշ ու մտածված պետք էր անել: Իսկ պարզապես թաղային կյանքով ապրող տղաների միջավայրում ընկերները նման հայհոյանքներ կամ անվանարկումներ կարող էին երբեմն նույնիսկ միմյանց կատակով ասել: Ասենք օրինակ, եթե «չաթլախ» բառի համար «գողական» միջավայրում արտահայտությունը թույլ տվողին որպես պատիժ կարող են դանակահարել, ապա թաղային ընկերական միջավայրում ընկերները մեկը մյուսին կարող էին նման արտահայտություն կատակով թույլ տալ, որի պատասխանը կարող էր լինել կամ ծիծաղն ու հումորը կամ պարզապես «չաթլախն ինքդ ես, այ ապուշ» կամ նման մեկ այլ արտահայտություն: Կամ ասենք, եթե գաղութում «սուկա» բառը նշում էր հիերախիայի ամենաստորացված անդամներին, ապա առօրյա խոսակցության մեջ դա շատ թեթև վիրավորական խոսք էր համարվում ինչը կարող էր նույնիսկ անտեսվել:

*Օրինակ մեկին խոսքի ասեն չատլախ, վերջ: Մենք կըռնանք ընդերության մեջ ասենք՝
այ չատո: Բայց ընտեղ դաժը մոտիզը մոտիզին ըդպես բան կյանքում չի ըսե:*

51 տարեկան տղամարդ, ք. Գյումրի

Այսինքն, եթե ամփոփենք, ապա կարելի է ասել, որ կար գողական ժարգոնից թաղային և առօրյա հարաբերություններ ներթափանցած արտահայտությունների ու հասկացությունների մի խումբ, որոնք ամբողջովին տրանսֆորմացվել են և կորցրել իրենց

⁷¹ Հետաքրքիր է, որ նման մոտեցում կարելի է նկատել նաև ազգակցական և հարևանական փոխհարաբերություններում, որտեղ նույնպես գերադասելի էր համարվում խնդիրներ ներխմբային միջոցներով լուծելը, քան՝ դատախիրավական մարմիններին դիմելը: Սա կարելի է համարել ներկայացված երևույթին նպաստող լրացուցիչ գործոն:

կոշտ ու խիստ բնույթը ու դրանից բխող սուր պատասխան կամ պատիժ ենթադրող վարքագծային պրակտիկաները: Վիրավորական նշանակության արտահայտությունների ու բառերի այդ խմբին անտարբեր կամ թեթև արձագանքը չէր կարող սպառնալ պատվարժանության ու թաղային հիերարխիայում կարգավիճակի կորստին: Խոսքը վերաբերում է իհարկե տղաների այն կատերագորիային, ովքեր չէին ապրում «գողական» կյանքով, սակայն ներգրաված էին թաղի տղաների ընկերական միջավայր:

Բառերի ու արտահայտությունների այս խմբին զուգահեռ կար «գողական» ժառգոնից թաղային ներփաթանցած արտահայտություններ ու հասկացություններ էլ, որոնք ենթադրում էին ճիշտ նմանատիպ վարքագծային պրակտիկաներ, ինչպիսիք բնորոշ էին «գողական» կյանքով ապրող տղաների միջավայրին:

Կյանքը թաղի տղերքի միջավայրում. լեզուն և պրակտիկաները

Թաղային ժարգոնում *թաղ* երևույթի ընկալումը բավական տարբեր է թաղամասի սովորական բնակիչների խոսակցական լեզվում կիրառումից: *Թաղի* ժարգոնային ընկալման հիմքում ընկած է այն հանրային միջավայրը, որը ձևավորվում է «գողական» հասկացություններից ածանցված և բանտայինից առօրյա կյանքին աղապատացված լեզվի միջոցով: Այսինքն, կարելի է ասել, որ *թաղը* այնպիսի մի միջավայր է, որը ունի իր հատուկ լեզուն, վարվելակարգի կանոնները ու չնայած տարածականորեն համընկնում է թաղամասի սահմանների հետ, սակայն որպես սոցիալական միջավայր, նույնը չէ ինչ թաղամասի սոցիալական միջավայրը: *Թաղը*, որպես ուրույն սոցիալական միջավայր թաղամասային տարածքներում ձևավորում ու վերատարողում են այն տղամարդիկ, ովքեր կազմակերպում են իրենց փոխհարաբերությունները թաղայինին աղապատացված «գողական» լեզվով ու այդ լեզվին բնորոշ հասկացություններով: Թաղի տղերքի միջավայրի հետ հատկապես նույնականացվում են թաղամասում ապրող դեռահաս ու երիտասարդ տարիքի տղաները: *Թաղի տղա* համարվում է նա, ով ապրում է թաղային կանոնների համաձայն: Այդ կանոնները չնայած «գողական» չեն այդ բառի խիստ իմաստով, սակայն հիմնականում ընդօրինակված են «գողական»-ից: Դրա հետևանքում թաղամասերում գոյություն ունի որոշակի հասկացություններով ու պրակտիկաներով ապրող տղաների միջավայր, որտեղ «գողականը» ընդունում է որպես «ճիշտ կյանք» ու դրա նկատմամբ հարգանքից բխող ապրելակերպը՝ տղամարդկային ճիշտ կեցվածք: Կարելի է ասել, որ փաստացիորեն բացի իրական «գողական» աշխարհից, ինչը ներկայացնում է այդ աշխարհի կյանքով ապրող մարդկանց հիերարխիան, կա նաև այսպես կոչված թաղային «գողականը», որին հետևող տղաները չնայած չունեն «գողական» կյանքով ապրելու նպատակ, սակայն ընդունում են գողական հասկացություններն ու վարվելակարգային նորմերը և իրենց կյանքում կիրառում դրա թաղային միջավայրին աղապատացված տարբերակը: Հենց թաղային «գողականին» հետևող տղաներն էլ համարվում են «թաղի տղա»: Նրանք, ովքեր չեն հարում այդ միջավայրին, վերաբերմունքն այլ էր: Նրանց չնայած համարում էին թաղի բնակիչ, սակայն հիմնականում անվանում էին «իր համար տղա»: Այսինքն, մեկն ով չնայած ֆիզիկապես ապրում է բակում կամ թաղում, սակայն չի մասնակցում թաղի տղաների առօրեա կյանքին, որտեղ բավական մեծ դերակատարում ունի «թաղային գողականը»: Սա չնայած դրական վերաբերմունքի չի արժանանում, սակայն նաև խիստ դատապարտելի էլ չի համարվում: Հիմնականում նման տղաներին վերաբերմունքը չեզոք է, հատկապես եթե նրանք կրթության բնագավառում ունեն որոշակի հաջողություններ կամ սովորում են որևէ համալսարանում: Այստեղ կարևորն այն է,

որ այդ տղաները բացեիբաց չհակադրվեն թաղի տղաների նորմերին ու վարվելակարգային պրակտիկաներին և հատկապես, չխախտեն դատախարավական մարմինների հետ համագործակցության արգելքը: Հակառակ, դեպքում վերաբերմունքը կարող է կտրուկ փոխվել դեպի խիստ բացասականը և այդ տղաները կարող են պիտակավորվել ստորացվածներին բնորոշ անվանարկումներով: Ամեն թաղամաս ուներ իր «թաղի տղերքի» միջավայրը, որը կոչվում էր «շրջապատ»: Նրանց, ովքեր հարգանք ունեի «շրջապատում», անվանում էին «շրջապատի տղա»⁷²: Նկարագրված երևույթի արմատները գնում են դեպի 1950-60-ական թվականները: 1970-1980-ական թվականները կարելի է համարել դրա կայունացման ու ամրապնդման շրջանը: «Շրջապատը» կարող է կազմված լինել ոչ միայն տվյալ թաղամասի տղաներից, այլ նաև՝ այլ թաղամասերի: Կարևորն այստեղ «թաղի տղայի» չափանիշներին համապատասխանելն է կամ «հասկացություն» ունենալը կամ «հասկացությունով տղա» լինելը: «Հասկացության» տակ նկատի է առնվում գողական հասկացությունները ընդունելն ու հարգելը:

Այսինքն, կարելի է ասել, որ թաղային միջավայրը չի սահմանափակվում թաղամասի տարածքով: Այն յուրահատուկ ցանցային կառույց է ամբողջ քաղաքի և նույնիսկ հանրապետության մաշտաբով: Այդ ցանցի ձևավորման հիմքում նույնպես ընկած է «գողական» լեզվի ու հասկացությունների միջոցով ձևավորվող հարաբերությունների համակարգը: Իսկ այդ ցանցի միավորները այդ լեզուն կրող առանձին անձինք են:

Շնորհիվ այդ ցանցի պատկանելության նրանք անձնապես ճանաչում են մեկ մեկու և հարաբերություններ են կարգավորում ոչ միայն թաղամասի կամ քաղաքի, այլ՝ ամբողջ հասարակության մաշտաբով:

Տղաս հայտնվել էր տհաճ պատմության մեջ: Ինչ որ կիսագողական երիտասարդների խմբի հետ էին բախվել իրենց ընկերներով: Ընկերոջ հետ հեռախոսով իր գրույցից հասկացա, որ իրավիճակը կարող է լրջանալ ու անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Բարեկամիս տղան թաղում «լավ տղայի» համբավ ունի: Խնդրեցի կապվել տղայիս հետ ու ախպերավարի հետաքրքրվել ինչ կա չկա ու ինչ որ կերպ այդ կոնֆլիկտի մասին տեղեկություն ստանա ու օգնի, որ հարցը չխորանա: Շատ արագ իմացել էր ով ով է, որ թաղամասից է ու այդ թաղամասի իր շրջապատի ազդեցիկ մեկի միջոցով հարցը փակել տվեց: Սահմանափակվեցին թեթև գրույցով ու թեման փակեցին ընդմիջտ:

58 տարեկան տղամարդ, Երևան

Ցանցային հարաբերությունները հաճախ տարբեր թելերով կապում են ոչ միայն առանձին թաղամասերի «լավ տղերքին», այլ նաև բանտային ու թաղային միջավայրերը: Ըստ գրանցված հետազոտական նյութերի, խնդիրն այն է, որ հաճախ բանտից դուրս գալուց հետո էլ շատ դժվար է լինում ազատվել քրեական աշխարհի հետ ձևավորված կապերից: Հատկապես կապանքների մեջ են հայտնվում նրանք, ովքեր չլինելով հանցավոր աշխարհի ներկայացուցիչ, բանտում հայտնվել են պատահական, ակամայից քրեորեն պատժելի մի որևէ արարքի պատճառով և մտադրություն չունեն իրենց կյանքը նվիրելու հանցավոր ուղով ապրելուն: Միշտ էլ լինում են դեպքեր, երբ բանտում այդ մարդիկ ինչ որ առիթով

⁷² Այս մասին հետաքրքիր դիտարկումներ ունի նաև Ս.Լուրիեն՝ Лурье С., Давтян А. Ереванская цивилизация или как формируется традиция современности, сс. 45-47.

օժանդակություն է ստանում բանտակիցներից ու հետո երբ հայտնվում են դրսում, նրան հաճախ բանտից գալիս են բանտում գտնվողների համար տարբեր ծառայություններ մատուցելու տարատեսակ խնդրանքներ, որոնք երբեմն կարող են լինել քրեական բնույթի ու վտանգավոր տվյալ անձի համար:

Երբ որ հորեղբորս տղան վաղաժամկետ ազատում ստացավ, դուրս գալուց հետո էլ քրեական աշխարհի ներկայացուցիչները իրան անընդհատ փորձում էին պահել իրանց տիրույթում: Այսինքն չգիտեմ, ճշտել ինֆորմացիաներ այս կամ այն երևույթի վերաբերյալ, ինչ-որ բաներ տանել ազատության մեջ գտնվող մարդկանց, կամ ինչ-որ բաներ խնդրել, որ ինքը ուղարկի: Բսկ ինքը անընդհատ, օրինակ՝ հեռախոսահամարը անգամ փոխել էր էլ ընթացքում, բայց ոչինչ չէր փոխվել դրանից: Իրանք միննույն ա գտնում էին ու զանգում էին իրան ու իրանց համար ոնց որ սպասարկող դառնար: Ընդորում սպասարկումը ոչ միայն ինչ-որ ֆինանսական: Շատ հաճախ էլ սպասարկումը տեղեկատվական բնույթ ա կրում: Ես հիշում եմ մի դեպք, որ իրան խնդրել էին գնալ, նստել մեկ այլ մարդու դատի և էլ ինֆորմացիան լսել, թե էլ մարդը ի՞նչ ա ասում դատարանում ու արդյո՞ք ասում ա էն, ինչը որ իրանց ձեռնտու ա: Այսինքն՝ իրանք ըտենց փորձում էին ազդեցության տիրույթում պահել: Հոպարիս տղան կարծում եմ դրա պատճառով Հայաստանից դուրս էկավ: Բայց չգնաց Ռուսաստան, կարծում եմ նրա համար, որ Ռուսաստանը ևս ազդեցության տիրույթ ա քրեական աշխարհի տեսանկյունից, ու գնաց Հունգարիա, որտեղ իրան գտնելը /ծիծաղ/ շատ ավելի բարդ կլինի:

27 տարեկան տղամարդ, Երևան

Շատ քչերին է հաջողվում ազատվել այդ կապերից ու «պարտավորություններից», քանի որ դա ոչ միայն բարդ է հոգեբանորեն իրականացնել, այլև ունի վտանգ թաղային ու ընկերական միջավայրում կարգավիճակի անկման կամ ընդհանրապես կորստի:

Այսինքն, «թաղային» միջավայրը լինելով ոչ միայն տարածական, այլ նաև ցանցային բնույթի կառույց, ինքնուրույն ու ինքնիշխան երևույթ չէ, այլև ըստ էության, «գողական» աշխարհի ցանցային կառույցին բազմաթիվ թելերով կապված միջավայր է: Եվ ուշադրության արժանի հանգամանքն այստեղ այն է, որ «թաղայինը» ոչ միայն պարզապես ինտեգրված ու փոխկապակցված է «գողականին», այլ ավելին՝ հիերարխիկ առումով ածանցված է «գողականին» և ծառայող ու սպասարկող ենթակառույցի դերակատարում ունի: Նրա հիմնական գործառնություններից մեկը հասարակական հարաբերություններում ու, ընդհանրապես, հանրային տարբեր միջավայրերում «գողականի» լեգիտիմացումն է: Այս առումով, չափազանց հետաքրքիր ու բնութագրական է 1970-1980-ականներին թաղային միջավայրերում տղաների հաղորդակցման մեջ տարածված մի հարցուպատասխանային «թեորեմա», համաձայն որի եթե տղային հարցնում են «դու գո՞ղ ես», ապա միակ ճիշտ պատասխանը պետք է լինել «գող չեմ, բայց գողին հարգող եմ»: Իրականացված հետազոտությունը թույլ է տալիս ասել, որ «գողական» աշխարհից թաղայինի ուղղահայաց կախվածությունը ձևավորող գլխավոր գործոններից մեկը հենց այն ժարգոնն էր, որին բնորոշ հասկացություններն ու հաղորդակցման պրակտիկաները պարտադիր էին «թաղի տղա» կարգավիճակին արժանանալու համար: Հակառակ դեպքում, չիմանալով «գողական լեզուն» ցանկացած մեկը կարող էր մարգինալացվել ու դառնալ խիստ խոցելի:

Լեզվի միջոցով իրանք բերում են մեզ էտ դաշտ, որովհետև էդ կանտակտը առանց էտ լեզվի չի լինում: Իրանք ունեն իրանց լեզուն, և եթե դու չկարանաս քո բացատրությունը տաս իրանց լեզվին համապատասխան, կընկնես այլ դիրքերի մեջ:

47 տարեկան տղամարդ, Երևան

Հատկանշական է նաև, որ որոշ դեպքերում թաղային միջավայրում «լավ տղա» երևալու համար գողական հասկացություններն իմանալն ու գործածելը ավելի տարածված էր, քան ազատագրկման վայրերում, որտեղ դրան կարող էին վերաբերվել որպես «կուրաժի»⁷³, այսինքն բացասաբար, եթե տվյալ անձը չէր պատկանում «գողական» աշխարհին⁷⁴:

Անփոփում

Հայաստանի քրեական միջավայրում դոմինանտ դիրք և հիմնական կիրառում ունեցող լեզուն այսպես ասած «գողական» ժարգոնն է: Այն Հայաստան է մուտք գործել հիմնականում 1950-ականներին: Ժարգոնը որոշակի զարգացում է ապրել ու 1960-ականներին փոխակերպումների ենթարկվելով մտել է կայունացման փուլ 1970-1980-ական թվականներին: 1990-ականների վերջերից այն որոշակի փոփոխությունների է ենթարկվում: Հիմնականում այստեղ մուտք են գործում մի շարք բառեր, որոնք ունեն տեղական ծագում, որոշ բառեր ու բառակապակցություններ, որոնք բնորոշ են ռուսական քրեական միջավայրին, թուլանում և աստիճանաբար դուրս են գալիս գործածությունից: 2010-ականներից այս գործընթացը ավելի նկատելի է դառնում: Երիտասարդ ու նոր սերնդի միջավայրում նման բառերից շատերն արդեն դադարում են գործածվելուց: Փոխարենը, ավելի գործածական է դառնում սովորական խոսակցական լեզուն:

«Գողական» ժարգոնի հիմնական բառապաշարն ու հասկացությունները գլխավորապես փոխառված կամ թարգմանված են ռուսական քրեական միջավայրից: Առանձին խումբ են կազմում նաև միայն հայկական միջավայրին բնորոշները: Ընդհանրապես, կարելի է առանձնացնել բառերի հետևյալ հիմնական խմբերը.

- Ռուսերենից հայերեն պարզ փոխառություններ կամ առանց փոփոխությունների կամ վերջածանցների փոփոխությամբ: Ինչպես օրինակ՝ սմատրյաշչի, զոն, զակոննիկ, սուկա, սուչի զոն, աչոտ, սպռոս, աբշյակ, պախան, մուժիկ, մուտիլովչիկ, բարիզ, կանցավիկ, քսիֆ, ցինկ և այլն,
- Ռուսերենի և հայերենի համադրությամբ ստացված բառեր: Ինչպես օրինակ՝ զոն նայոդ, սուչիտ անել, պալիտ անել, պառաշ անել, պոսիտոդ տալ, մանթրաշ ընկնել, գոուզիտ անել, չմարիտ անել և այլն:
- Ռուսերենից հայերեն ուղղակի թարգմանություններ, որոնք արտահայտում են ռուսերեն քրեական խոսվածքին բնորոշ նշանակությունը: Այդպիսի օրինակներ են՝ գող, նայոդ, վառող, լավեր, լավով ապրել, ճիշտ, ճշտով ապրել, բեռնել, երգել և այլն:
- Հայկական միջավայրում ձևավորված ու միայն հայկական բառապաշարին բնորոշ բառեր՝ ծախող, բոզ, ուռել, թոցնել, կզցնել, փչացնել, գործ տալ, գործ կարել, դումար, թավան, փչել, խարեր, եղո, ախպերություն, մեծ ախպեր, մեծություն, քերոբ և այլն:

⁷³ Տես այս բառի մանրամասն բացատրությունը բառարանի «ԿՈՒՐԱԺԻՏ» բառահոդվածում:

⁷⁴ Այս միտքը հուշել է ազգագրագետ Նիկոլ Մարգարյանը մասնավոր զրույցի ժամանակ:

«Գողական» ժարգոնը բնորոշ ու կիրառելի է ոչ միայն քրեական և հանցագործ աշխարհին, այլ նաև խիստ գործածական է թաղային միջավայրերում: Հատկապես, դեռահաս ու երիտասարդ տարիքի տղաները հանդիսանում են դրա հիմնական կրողներն ու վերարտադրողները: Քրեական միջավայրերից, հատկապես բանտերից տեղափոխվելով թաղային միջավայր լեզուն որոշակի փոխակերպումներ է կրում: Ենթարկվելով նմանօրինակման, այն որոշ «մեղմացումներ» է կրում: Բանտային և քրեական աշխարհում այս լեզվի հասկացությունները շատ հստակ են ու ամեն բանի գործածումը պահանջում է խիստ զգոնություն ու կշռադատվածություն: Ցանկացած նույնիսկ պատահական սայթաքում կարող է լուրջ ու անդառնալի հետևանքներ, ընդհուպ մինչև բանտային կամ քրեական միջավայրում կարգավիճակի կորուստ ու ստորացում: Նման սայթաքումները կարող էին ունենալ հետևանքներ ամբողջ կյանքի համար:

Թաղային միջավայրում ժարգոնը կրելով որոշակի մեղմացումներ հնարավոր է դարձնում դրա տարածումը քրեական աշխարհի սահմաններից դուրս: Շնորհիվ դրա, «գողական» ժարգոնի կրողների միջավայրը զգալիորեն ընդլայնվում է և ընդգրկում թաղամասի համարյա ողջ դեռահաս, երիտասարդ ու միջին տարիքի տղամարդ բնակչությանը: Դառնալով այդ լեզվի կրողներն ու գործածողները թաղային միջավայրերը դառնում են «գողական» վարքուբարքի տարածման նպաստավոր տարածքներ: Այս լեզուն դառնում է տղա երեխաների սոցիալիզացիայի լեզուն փողոցում, բակում և թաղամասում լայն առումով: Այն ունենում է մեկ այլ հետևանք նույնպես: Ժարգոնը կրող ու գործածող տղաները դառնում են նաև դրան համարժեք պրակտիկաների ակտիվ կամ անուղղակի կրողները, փաստացիորեն այս կամ այն ձևով ապրելով կամ ենթարկվելով լեզվի միջոցով հասարակական կյանք ներմուծված «գողական» աշխարհի նորմերին ու վարքագծային պրակտիկաներին:

Լեզուն դառնում է նաև թաղային միջավայրում կարգավիճակների ձևավորման կարևոր պայմաններից մեկը: Դրա միջոցով են ձևակերպվում ընդօրինակելի դերերը (հարգված տղա, լավ տղա, կյանքի տղա, լավեր կամ խարոշիներ և այլն), լիդերությունը, ընդունելի ու անընդունելի վարքագծային կանոնները, պատվի կոդեքսը, գերակա ու լուսանցքային դիրքերը:

«Գողական» ժարգոնը դառնում է նաև թաղամասերում արդարադատության լեզուն: Այն սահմանում է թաղային միջավայրում «ճիշտն ու սխալը», համապատասխանաբար նաև արդարն ու անարդարը սահմանողը, իսկ ենթամշակույթը ներկայացնող հեղինակությունները դառնում են դատաստանի հիմնական իրականացնողները: Հատկանշական է, որ արդարադատության այս ալտերնատիվ համակարգը թաղային միջավայրերում ձևավորվում է պետական ու առավելապես դատաիրավական մարմինների հանդեպ ունեցած համատարած անվստահության պայմաններում: Սա հատկապես գործում է սոցիալապես ցածր դասակարգերի ու խավերի միջավայրում, ովքեր կենտրոնացած էին Երևանի աշխատավորական թաղամասերում: Այն դեպքում, երբ պետությունը անտեսում էր մարդկանց հանդեպ իրագործվող անարդարությունները կամ հենց պետությունը ներկայացնող մարդն էր այդ անարդարությունը գործող դերակատարը դառնում, թաղամասում բնակվող «գողական» աշխարհի հեղինակությունը կարող էր շատերի համար հասկանալի ձևով շարադրել ճիշտն ու սխալը, սահմանել մեղավորներին և լուծումներ տալ բազմաթիվ հարցերի, որոնք պետական մարմիններին դիմելու դեպքում խճճվում էին և հաճախ նույնիսկ շուտ տրվում բողոքը ներկայացնողի դեմ:

Այս ժարգոնը և դրա ձևավորած փոխհարաբերությունների համակարգը անկախությունից հետո զգալի փոփոխություններ է կրում: Վերջին տարիներին նկատելի է ժարգոնի կիրառման շրջանակների նեղացում: Հատկապես այն բառապաշարը, որը հայկական միջավայր էր ներմուծվում ռուսական քրեական միջավայրերից, շատ տեղերում մոռացության է մատնվել ու դուրս եկել կիրառությունից: Էական նշանակություն է ստանում նաև դեռահասների ու երիտասարդության միջավայրում նպատակների ու կյանքում ապագան կառուցելու տեսլականների փոփոխությունը: Զգալիորեն փոխվում են հարաբերությունների ձևերը, կյանքում արժեքների ընկալումները և հեղինակությունների տիպերը: «Գողական» աշխարհն ինքը նույնպես լուրջ փոխակերպումների է ենթարկվում: 2000-ականներին այն էլիտարիզացման գործընթաց է ապրել ու որոշ առումով հեռացել աշխատավորական խավերից, կորցնելով առօրյա հասանելիությունը այդ խավերի համար:

Ամփոփելով, կարելի է ասել, որ արդի հայ հասարակությունը խորքային փոխակերպումներ է ապրում և խորհրդային սոցիալիզմի պայմաններում ապրող թաղային ու հարևանային համայնքների կյանքում տեղի ունեցող փոփոխությունները ազդում են նաև «գողական» ժարգոնի ու բառապաշարի փոխակերպումների վրա: